Գիրքը լուսապատճենահանվել է
"Համահայկական Էլ. Գրադարան"
կայքի՝ www.freebooks.do.am
կողմից եւ ներկայացվում է իր
այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"

Գիրքը կարող է
օգտագործվել միայն ընթերցանության համար...
For more info: www.freebooks.do.am

ԴՈՒՔ ԼՈՒՍԱԼՈՒՄ ԿԱՐՈՂ ԵՔ ՁԵՐ ԼԵՌՈՒՄՆ ՈՒՆԵՆԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՔՆԵՐԴ
ԷՈՒՄՈՊԱՏԵԼԱՀԱՆԵԼ ԳՐՔԵՐ:

ԹԿԱՅԻՆ ԳՐՔԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ
ԻՄԱՆԱԼ "ՀԱՄԱՀԱՅԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ" ԿԱՅՔԻՆ՝

www.freebooks.do.am

ՀԱՐՀԱՎԱՆ ԵՆՔ, ՈՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՄԵՐ ԿԱՅՔԻՑ:
ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆՔ ՀԱՃԵԼԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ:

ԳՐԵՔ ՄԵԶ՝ freebooks@rambler.ru

Ս. Կ. ՊՈՂՈՍՅԱՆ

ՍԵՎ ԾՈՎԻՑ ՎԱՆԱ ԾՈՎ
ՀԻՆԳ ԱՄԻՍ ՀԻՆԳ ՕՐ

Ս. Կ. ՊՈՂՈՍՅԱՆ

ՍԵՎ ԾՈՎԻՑ ՎԱՆԱ ԾՈՎ
ՀԻՆԳ ԱՄԻՍ ՀԻՆԳ ՕՐ

ԵՐԵՎԱՆ 1992

ԽՄԲԱԳԻՐ՝ Ժ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ընթերցողի ուշադրությանը ներկայացվող այս գիրքը նոթագրություններ են։

Առաջին մասը Թուրքիա հեղինակի այցելությունների մասին պատմություն է։ Նրանում հետաքրքրական նյութեր կան Արևմտյան Հայաստանի մերօրյա կյանքի մասին՝ սկսած Սև ծովի ափին գտնվող Համշենահայերի բնակավայրից՝ Հոպա քաղաքից, Արդվին, Օլթի, Սարիղամիշ, Հասան Կալա, Կարին, Անի, Կարս քաղաքներից մինչև Տարոնի դաշտ, Մուշ քաղաք, Առաքելոց վանք, Խնուս, Ախլաթ, Դատվան, Աիթամար, Վան, Վարդո, Մանազկերտ, Ալաշկերտ...

Երկրորդ մասը Կրեմլի, նախկին ԽՍՀՄ ղեկավարների հետ առընչություններն են՝ Գորբաչով, Լուկյանով, Յանաև, Յազով, Կրյուչկով, Պուգո, Շենին... Մեծ տեղ է հատկացված Արցախի խնդրով Մոսկվայի ու Բաքվի հետ տարվող բանակցություններին, Հայաստանի Հանրապետության ներքին ու արտաքին քաղաքականության մի քանի առանցքային խնդիրներին

ՍԵՎ ԾՈՎԻՑ ՎԱՆԱ ԾՈՎ

* * *

Այսօրվա մարդուն (նույնիսկ խորհրդային) տարբեր երկրներ կատարած այցելությունների մասին պատմություններով չես զարմացնի։ Մասնավորապես վերջին տարիներին, արտասահմանյան երկրներ, թեկուզ «աշխարհի ծայրը», գնացք դաբձել է «ջրի ճամփա»։ Գնում են ու գալիս. գնում են տեսնելու, գնում են առևտուր անելու, սեփական տան օթևոր ծանրացող հոգսերն ու կարիքները «դրսի օգնությամբ» թեթևացնելու։ Եվ վերջապես գնում են, երանի թե չգնային... ուրիշ երկնքի տակ հաստատվելու...։ Ոչ թե գնում, այլ փախչում են հայրենի հողից։ Ոմանց հայրենիքը շատ նեղ է թվում, ուրիշներին՝ անկարող իրենց գավակներին պաշտպանելու, հայի հարատևումն ապահովելու։ Ոմանք էլ պարզապես չգիտեն ու չեն էլ ուզում իմանալ, թե ինչ է հայրենիքը։ Հո՞ղ է, ջո՞ւր, երկինք ու լե՞ռ, քաղաք ու գյո՞ւղ, մարդ ու կենդանի՞, հարսանիքի ու թաղման թափո՞ր։ Իսկապես, ի՞նչ է հայրենիքը։ Եթե «հայրենիք» հասկացությունը մարմնավորվում է շրջապատող իրականության բոլոր՝ նյութական, բարոյա-հոգեբանական և ազգային-քաղաքական երևույթներով, ապա մարդը դրանք կարող է գտնել մեկից ավելի տեղերում։

Թվում է, թե Հայրենիքը տրված է ի վերուստ, այն ձևավորող աշխարհիկ-առօրեական, տեսանելի ու շոշափելի տարրերը (որոնք նաև որոշում են նրա դեմքը ժողովուրդների բազմազանության մեջ) լոկ արտացոլումն են մի ոգու, որը դուրս է մարդուց և աշխարհից։

Իմ պապը բնիկ սասունցի էր, յաթաղանից հալածված, հարկադրված թողել էր հայրենի Սասունն ու դեգերումների և տարագրությունների ողբերգության միջով եկել թառել էր

Արագածի բարձր փեշերին և, ինչպես գրեթե բոլոր սասունցիները, ավելի քան երկու տասնամյակ այս երկրում իրեն հյուր էր զգացել և սրտի մորմոքով սպասել այն օրվան, երբ կվերադառնար էրկիր։

Սակայն ժամանակի անհաղթ ուժը թելադրեց իր պահանջները՝ մոռացե՛ք Սասունը, այլևս ձեր հայրենիքը այս Հայաստանն է, Արագածը, ձեր փոքրիկ Ահագնին, Իրինդը, Դավթաշենը, Աշնակը, Ուջանը...

Սասունցին դիմադրեց, ըմբոստացավ, ընդվզեց, ողբաց ու անիծեց, բայց, ի վերջո, էրկիր վերադառնալու նրա հույսերն ուժասպառ ու կիսամեռ ընկան ու մինչև օրս էլ քարշ են գալիս հազար ու մի դժվարություն հաղթահարելու համար մղվող ամենօրյա, ստորացուցիչ, բարոյականը մի կողմ դնող կռվի պահեստային դումարտակներում։

Իսկ սասունցին առանց Սասունի, առանց նրա դաղափարի ու անվան, հերոսականության ու նույնիսկ կենցաղային մանրուքների սրբացման, դառնում է ուրիշ որակ, ուրիշ երևույթ ու հոգեբանություն, մի խառնիշաղախ անորոշություն... Սա տխուր իրողություն է, քանի որ «սասունցի» հասկացությունը բարոյական ոլորտներից իջնելով և առօրեական հոգսերի մեջ թաղվելով, մոռնում է՝ ինչպես ջրից հանած ձուկը։ Նա դադարում է մտածողության, հոգևորանության ու բարոյականության ամբողջական համակարգված լինելուց, վերածվելով մի սովորական տեղանվան կամ հայրենակցական խարկանքի։

90-ամյա պապս 1956 թվի փետրվարյան մի օր ճամփա էր ելել դեպի այն աշխարհ ու ժամեր շարունակ կռիվ էր տալիս մահվան դեմ. չէր մեռնում, որպեսզի որդիներին ու թոռներին բոլորեր իր մահճի շուրջը, նրանց միայն մի նախադասություն ասեր ու նոր միայն կնքեր մահկանացուն.

— Ապերախտ լինեք, թե մտածեք, որ ձեր հայրենիքը Սասունը չէ։

Նրա հայրենիքը այդպես էլ մնաց Սասունը, և մահը տանելու էր նրան դեպի ծննդավայրը, այնտեղ, ուր իր պապերի ոգիներն են շրջում։

Իսկապես, ի՞նչ բան է հայրենիքը։

* *

Ժամանակները շատ են փոխվել։ Այն, ինչ այսօր իրողություն է, մի քանի տարի առաջ անհասանելի երազ էր թվում։ Դատեցեք ինքներդ։ Զբոսաշրջիկության հայկական ընկերությունն ու նրա ղեկավար է. Մինասյանը բարեգործական առումով սովորական, բայց բարոյական նշանակությամբ շատ կարևոր քայլ կատարեցին։ Նրանք Արևմտյան Հայաստանում ծնվածների մի խմբի անվճար տուրիստական շրջագայության ուղարկեցին Թուրքիա։

Դժվար է նկարագրել հոգեկան ալեկոծությունները, կորած հարազատին վերագտած դժբախտի երկակի զգացողությունը, նրա կարոտած աչքերից հոսող արտասուքի շիթերը։ 70—75 տարվա բաժանումից հետո նորից այցելում են իրենց հայրենիք։ Նրանցից ոմանք այն կորցրել էին, երբ դեռ կրծքի երեխա էին, մյուսները՝ դպրոցական։ Մեկն իր ծննդավայրն ու տունը մշուշապատ էր հիշում, մյուսը հիշում էր ամեն ինչ։

... Օգոստոս ամսի կեսերին խումբը գնացքով ուղևորվեց Էրկիր։ Գնացքը սահմանն անցավ ու կանգ առավ թուրքական կիսակայարանում։ Ավելի ճիշտ, դա կիսակայարան էլ չէր, այլ մի քանի սենյակներ ունեցող միհարկանի շենք, որին հենց այդպես էլ անվանում են՝ Աղկապի՝ առաջին կանգառ։

Առաջին կանգառ, առաջին տպավորություն։ Ամբողջ չորս ժամ մնացինք այնտեղ, ուր ոչ միայն խմելու ջուր, այլև նստելու տեղ չկար։ Դե շոգ ամռանն առանց խմելու ջրի, օրը ոտքի վրա անցկացրած մարդու տպավորությունն ինչպիսի՞ն կարող է լինել։

Երբ գնացքը կանգ առավ Աղկապիում, բակում մի աղմկոտ ամբոխ էր հավաքվել, իսկ սալահատակին լեռնացել էին բաց ու փակ, մեծ ու փոքր իրեր... Պարզվեց, որ մերոնք էին՝ վերադառնում էին Թուրքիա կատրած «առևտրական ուղևորությունից»։

Թուրքական մաքսատան աշխատողները եվրոպացու արտաքին ունեին՝ բարձրահասակ, ատլետիկ կազմվածքով, կիրթ կեցվածքով, սիրալիր ու նաև վատ թաքցրած հեգնանքով։

Արևելքը մնում է արևելք. բակշիշ գրպանելուց հետո

նրանք մեզ ազատեցին մաքսային ստուգման տհաճ ու նվաստացուցիչ հարկադրանքից։

Առաջին կանգառից դեպի արևմուտք ցրված էին ոչ բարձր սարեր, որոնց շարքը պատ էր կազմում, փակում հորիզոնն ու ճամփորդին զրկում Անիին աչք դիպցնելու հնարավորությունից։ Բարձունքներից մեկի վրա հստակ գծագրվում է մի հին կառույց, հավանաբար Անիի պաշտպանական համակարգի կիսավեր աշտարակներից մեկը։

Գնացք ենք նստում, որն ավելի մաքուր և ուղևորներով ավելի քիչ չէր խցանված, քան մեր գնացքները։ Բայց դա ուշադրություն է դրավում միայն առաջին րոպեներին, իսկ հետո, հենված վագոնի պատուհաններին, դիմացդ ես նայում, վայելում էրկրում գտնվելու հաճույքը, զարմանքը, թախիծն ու ... նաև հիասթափությունը։

Առաջ ընկնելով ասեմ. մենք անցնում էինք ոչ թե լքված, այլ շեն երկրով։ Մի ժամանակ ասում էին, թե խորհրդաթուրքական սահմանը կարելի է որոշել գիշերը վերևից դիտելով՝ լույսի ու լուսավորության մեջ եղած տարածքները խորհրդային Միությանն էին, իսկ մութ ու խավարի մեջ գտնվողները՝ Թուրքիայինը։ Այժմ պատկերն այլ է։ Երբ մութն ընկավ, երկաթուղու շրջակայքը ողողվեց լույսերով. դրանք տեղ ու փոքր բնակավայրեր էին՝ դասավորված Կարսի հարթավայրը երիզող սարերի փեշերին ու ստորոտներին։

Արևմտյան Հայաստանի նոսր բնակեցված լինելու մասին խոսակցությունները չափազանցված են։ Նրա յուրաքանչյուր քառակուսի կիլոմետրի վրա ապրում է մոտ 50 մարդ։ Ցուցանիշը, ճիշտ է, երկու անգամ փոքր է Հայաստանի Հանրապետության բնակչության խտությունից, բայց նաև չորս անգամ գերազանցում է նախկին ԽՍՀՄ-ի բնակեցվածության աստիճանը։ Այլ խոսքով, ազգաբնակչության խտությամբ Արևմտյան Հայաստանը գտնվում է այդ ցուցանիշի միջին մակարդակի վրա։

Ոչ քիչ թվով երկրներ եմ այցելել ու միշտ ինձ այնտեղ մղողը եղել է հետաքրքրությունը՝ տեսնել, իմանալ, ճանաչել։ Տարօրինակ է, որ այս անգամ նման զգացում չունեմ։ Ճիշտն ասած, առանձնապես չեմ էլ հուզվում։ Երբ մտքերիս ազատություն էի տալիս, անմիջապես կտրվում էի իրականու-

թյունից, ասես ոչ թե սահմանի այն, այլ այս կողմում էի, ամեն, ամե՞ն ինչ նմանակվում է այն միջավայրին, որի մեջ ծնվել, մեծացել ու այժմ էլ ապրում եմ։ Իսկույն հիշում եմ մի քանի խոշոր գիտնականների կարծիքները երկրների սահմանաստարածքների ձևավորման գործում ոչ թե ռազմաքաղաքական, այլ բնաշխարհագրական գործոնի որոշիչ նշանակության մասին։ Հայերի հայրենիք Հայկական բարձրավանդակն է, որը կազմում է երկրաբանաաշխարհագրական մի ամբողջություն իր ընդհանուր օրինաչափություններով։

Հայկական բարձրավանդակը Միջերկրական ծովից մինչև Ջինաստան ձգվող լեռնային վիթխարի շղթայի օղակներից մեկն է և ընդգրկում է Դիարբեքիրից Տրապիզոն ընկած լեռնային համակարգը։ Այս հատվածով անցնում են լեռնային երկու աղեղներ, որոնցից մեկն ուղղված է հարավ, մյուսը՝ հյուսիս, թեև պայքարում երկու ուժերի ճնշման տակ իրար են ձգտում։ Հատկանշական է, որ բարձրավանդակի երկու կողմերում աղեղները նեղանում են և լեռների ողնաշարերը բաշխվում են անվաճառների նման։ Օտարները Հայաստանը անվանում են երկնքից կախված լեռնակղզի։

Արարատյան աշխարհը, Բարձր Հայքը և Տարոնը կազմում էին այդ լեռնակղզու կենտրոնը։ Իսկ Ազձնիքը, Ծոփքը, Գուգարքը, Սյունիքն ու Վասպուրականը Հայաստանի սահմանային պատվարներն են։

Հայաստանի հյուսիսային սահմանը կազմված է արևմուտքից նրա տարածքը խուժած Կյումբեթ-Դաղի լեռներից։ Վավուկի լեռնանցքից այդ շղթան Ճորոխ գետի հարթությունը հրիկում է մի անջրպետով, որն Իսպիրա քաղաքից արևելք կորցնում է պիմագծի որոշակիությունը և հակվում երկատվելու ու ճյուղավորվելու։

Լեռնաշղթայի ճյուղերից մեկը ձգվում է հարթավայրով, ապա Օլթիից հյուսիս թեքվում է հարավ ու անհետանում Արդահանի սարահարթում։ Իսկ հյուսիսում, Արդվինից հարավարևմուտք բարձրանում են Խաչքարի և Փարխալի բարձունքները։ Նրանց շարունակությամբ լեռնաշղթան ձգվում է մինչև Բաթում, որն ընդհատվում է միայն մի հատվածում՝ Ճորոխ գետին ճանապարհ տալու համար։

Սև ծովի հարավին հարող այս լեռնաշղթան, Լինչի խոս-

քերով, «բազմաթիվ վերստ երկարությամբ ծաուում է սրպես բնական սահման՝ սկզբում անցնելով Քելքիդ-Սուի հոսանքի ուղղությամբ, հնագույն Լիկան և ապա Ճորոխ գետը։ Սակայն, Քուռի և Արփաչայի վերին հոսանքներով ոռոգվող երկիրը ներխուժած ուղղը կտրվելով և Ճորոխի արևելյան վտակները քայքայելով՝ լեռնային խճճված ցանցի միջով ուղի է բացել մինչև Օլթիի մերձակայքը», կորցրել հստակ գիծը։ «Ելնելով բնական պայմաններից,— գրում է Լինիչը,— մենք սահմանագիծը պետք է անցկացնենք Ճորոխի հարթավայրով (Իսպիրայի մերձակայքում), Ճորոխի և Սերչեմեխ-Չայի վերին հոսանքները ունող բարձունքներով դեպի Դումլյու-Դաղ՝ մինչև Արևմտյան Եփրատի ակունքները։ Ապա սահմանագիծը կանցնի Արաքսի ավազանի ու Սև ծովի միջև բարձր ջրբաժանի՝ սկզբում արևելյան, իսկ ապա հյուսիս-արևելյան ուղղությամբ և անմիջականորեն Ջամար-Դաղի միջոցով միանալով Սոդանլու-Դաղի վուլկանին», գնում է դեպի Արդահանի մարզի արևմտյան սահմանները։ Այս սահմանային տարածքներից հարավ ընկած է մի վիթխարի սարահարթ, որը ձգվում է մինչև Էրզրում ու Երզնկա։

Արևելքում բարձրությունները մեծանում են, որոնցով և անցնում է մեկ՝ հայերիս համար, որոշակի իրավիճակներում հույսի՝ Ռիզե նավահանգստից Ճորոխի հովտով Իսպիրա տանող, ճանապարհը։

Ինչո՞ւ հույսի ճանապարհ։

Դեռ 19-րդ դարի կեսերին հայ քաղաքական միտքը հանգեց մի հետևության՝ առանց ծով ելք ունենալու Հայաստանը կմնա խեղճ։ Համենայնդեպս, խաթարված կլինի նրա տնտեսական կյանքը, կարդելակվի հայկական պետականության ստեղծումը։ Դեպի ծով ելքի խնդիրը դարձավ բուռն քննարկումների նյութ, զանազան ծրագրեր մշակվեցին, որոնցից, սակայն, ամենահավանականը կապվում էր Տրապիզոնից արևելք ընկած Ռիզե քաղաքի հետ։ Նույնիսկ բա՝ սկզբունքներ կայացան օսմանյան Թուրքիայի հետ՝ Ռիզեն հայերի տնօրինությանը հանձնելու շուրջ։ Սուլթան Աբդուլ Համիդ 2-րդը այս ծրագիրը նույնպես օգտագործեց հայերին խաբելու համար։ Նա Կ. Պոլսի պատրիարքին առաջարկեց, որ, եթե արևմտահայերը անվերապահորեն հնազանդվեն սուլ-

թանական կառավարությանը, և, եթե Արևելյան Հայաստանում՝ Երևան—Էջմիածին հատվածում, ստեղծվի փոքրիկ անկախ Հայաստան, ինքը Ռիզեի նավահանգիստը կտրամադրի հայերին։ Սակայն ոչ անկախ Հայաստան ստեղծվեց, ոչ էլ Ռիզեն հայերին տրվեց։

Առաջին աշխարհամարտի ավարտին Միացյալ Անկախ Հայաստանի նոր հունյսեր ծնվեցին և, բնականաբար, առաջ քաշվեց դեպի ծով նրա ելքի խնդիրը։ Վիլսոնի պլանով ստեղծվելիք Հայաստանը երկու կետում պետք է ելք ունենար ծով՝ Կիլիկիայում Միջերկրական ծով, իսկ Տրապիզոնի նահանգում՝ Սև ծով։ Ծովից ծով Հայաստան ասածը սա է, որի մասին խոսելն իսկ տասնամյակներ շարունակ խստորեն արգելված էր ոչ միայն Թուրքիայում, այլ նաև Խորհրդային Միությունում։ Դա համարվում էր հայկական ծավալապաշտության ու ազգայնամոլության դրսևորում։ Իրականում դեպի ծով ելք ունենալը, աշխարհագրական այս շրջանի հայտնի առանձնահատկությունների պատճառով, կենսական անհրաժեշտություն է։ Նույնիսկ արևմուտքի կառավարություններն այդ անհրաժեշտությունն անվիճելի էին համարում, ու թե՛ 1913 թ. ռեֆորմների ծրագրում և թե՛ Վիլսոնի պլանում այդ խնդիրը առաջ քաշվեց ոչ այնքան «հայերի պահանջով», որքան վերը նշված «անհրաժեշտության գիտակցմամբ»։

Այսօր ևս, երբ Հայաստանը տնտեսական ծանրագույն կացության մեջ ձգտում է կառուցել իր պետականությունը, նորից հայացքը հառում է Տրապիզոնի մերձակա ծովախորշի ափին կծկված Ռիզե քաղաքին։

Անդրադառնալով Հայաստանի արևելյան և հարավային սահմաններին, Լինչը գրում է. «Սահմանագիծը կարող է անցնել Ղարաբաղի հյուսիսային լեռների գլխավոր գագաթներով ու Արաքսով մինչև այն շրջան, որը մոտենում է Կասպից ծովին»։ Ղարաբաղը «Հայաստանի համար հանդիսանում է սահմանային լուրջ հենարան Կասպից ծովի կողմից»։ Շարժվելով հարավ, սահմանագիծը հասնում է Արաքս գետին Մեղրիի շրջակայքում, ապա շարժվում է արևմուտք՝ մինչև Ջուլֆա, այնուհետև Ղարաբաղի լեռնաշղթայով իջնում է դեպի Ուրմիա լիճը, հասնում Վանա լճից հարավ ընկած շրջանները

և Տավրոսի լեռնաշղթայով ձգվելով արևմուտք, ամբողջանում է Կիլիկիայի հետ։

Այս տարածքները ոտքի տակ տված Լինչը նկատում է. «Շշմեցնելու աստիճանի միասնություն է ընկած նրա (Հայաստանի— Ս. Պ.) լանդշաֆտների գեղեցիկ բազմազանության հիմքում, որոնք աննկատելիորեն փոխվում են, երբ անցնում ես նրանց մոտով։ Ջրբաժանները ձևավորվում են թեքություններով, որոնք դժվարությամբ կնկատեք, քանզի այնքան աստիճանական են նրանց վայրէջքն ու վերելքը։

Ախալցխայի, Ախալքալակի, Ալեքսանդրապոլի, Կարսի և Արդահանի տարածքներն ամբողջությամբ իրար են կապված տեղանքի ընդհանուր տեսքով և շատ ավելի ընդհանուր գծեր ունեն, քան տեղական առանձնահատկություններ»։

Այսպիսով, «Արարատից մինչև Մուզուրգաղ և Գալլատու լճից մինչև Զագրոսի լեռնաշղթա» գիծը աշխարհագրական տեսակետից բնական սահման է Վանա լճի ավազանի և Պարսկաստանի միջև, այսինքն հանդիսանում է Հայաստանի հարավ-արևելյան սահմանը։ Սահմանագիծը հարավում ձգվում է մինչև Մեծ Զաբի ավազանը և արևմուտք է շարժվում հյուսիսային լայնության 39—42 աստիճաններով։

Արևմուտքում Հայաստանի և Փոքր Ասիայի բնական սահմանագիծը անցնում է արևմտյան Եփրատի հոսանքով դեպի վեր՝ Քեմախ, որտեղ գտնվում է հայ թագավորների գերեզմանատունը և որի կիրճում 1915 թ. թուրքերը ոչնչացրին 20 հազար հայ։ Սահմանագիծը հյուսիս շարժվելով, ձգվում է մինչև Սև ծովին հարող ծայրամասային լեռնազանգվածը։

Այն, որ Արևմտյան Եփրատը եղել է հայկական ու հայաբնակ, հանրահայտ փաստ է։ Սակայն թուրք քաղաքագետներն ու պատմաբանները ոչ մի կերպ չեն ուզում դրա հետ համաձայնել։ 1806 թ. Վենետիկում լույս տեսավ Զ. Ինճիճյանի, «Նոր Հայաստան» աշխատությունը՝ գիտական լուրջ և անկողմնակալ մի ուսումնասիրություն, որում ամփոփված են Հայաստանով կատարած նրա ճանապարհորդության արդյունքները։

Երզնկայի գավառի մասին Ինճիճյանը գրում է. «Ոմանց ասելով նախկինում (Երզնկան) ունեցել է 250 գյուղ և գավառի հայ բնակիչները ի սկզբանէ եղել են կորովի և քաջա-

տիրտ այրեր..., իսկ այժմ իշխանությունների կեղեքումների հետևանքով գյուղերն ամայացել են...»։

Խոսելով Սըվազ նահանգի ամենամեծ գյուղի՝ Զառայի մասին, Ինճիճյանը գրում է. «Նրանում 300 տուն հայ կար, այստեղացի էր տիրացու Հովսեփը, որը Թուրքացավ և դարձավ Սեվստո փաշա։ Նրա օրինակով ուրիշներն էլ դարձան Թուրք՝ ակնկալելով հասնել նրա հաջողություններին։ Ե՛վ այն ժամանակ և՛ այսօր շատերն առանց որևէ առիթի գժտվում են ու Թուրքանում։ Ուստի այնտեղ շատ հանդիպեցինք Թուրքերի և հայ քրիստոնյաների խառը ամուսնությունների, այսինքն ամուսինը քրիստոնյա, իսկ կինը՝ Թուրք, կամ ընդհակառակը։ Սեվստոյից սերող այդ տոհմի փաշաները դալով Զառա, կոչվեցին զառացիներ։ Սրանցից էր Զառայի եկեղեցու տիրացու, վերոհիշյալ Հովսեփը, որը սուլթան Մուստաֆա 2-րդի օրոք Թրքացավ ու տիրացավ Սեվստոյի փաշայությանը և իրեն անվանեց Յուսուֆ փաշա»։

Հակոբ եպիսկոպոսը 1601 Թվին Հռոմում հայտարարեց, Թե այս գավառում 300 գյուղ կա և քաղաքի բնակչությունն էլ 15 հազար տուն է հաշվում։

Զ. Ինճիճյանը գրում է. «Այժմ այստեղ կլինի 10 հազար հոգի, որոնցից հայկական 2000 ընտանիք, իսկ մնացածները Թուրքական են...»։

Ինչպես քաղաքի բնակչության կեսը՝ 7500 տուն, այնպես էլ 300 գյուղերի կեսի բնակչությունը հայեր էին։

Ինճիճյանը Եվդոկիայի կամ Թոքատի մասին գրում է. «Նրա սահմաններում 190 գյուղ կա, իսկ քաղաքի բնակիչները կազմում են 16.000 տուն, որից 2500-ը՝ հայկական են, 300-ը՝ հունական։ Մինչդեռ Տուռնֆորի այցելության ժամանակ հայերը շատ ավելի էին»։ Այդ նահանգի Բիզեռի գյուղի մասին գրում է. «Բիզեռի գյուղը Թոքատից հեռու է 4 ժամ։ Բնակեցված է հայերով..., որոնց Թիվը նախկինում հասնում էր մինչև 8000 ընտանիքի»։ Տիվերիկի մասին գրում է. «Սրա բնակիչները առաջներում 12.000 տուն էին, որից 2.000-ն էր հայկական» ,իսկ այժմ նրանց Թիվը 100-ից չի անցնում։

Արաբկիրի գավառի մասին գրում է. «Սրա գյուղերի Թիվը, ասում են, որ հասնում էր 84-ի, որոնք բնակեցված են

թուրքերով և մեծամասամբ հայերով, իսկ քաղաքի բնակչության թիվը 10.000 է, որից 600-ը հայ են, իսկ մնացածները՝ թուրք։

Ակնի մասին Ինճիճյանը գրում է. «Հայերից բացի, այս գավառում կան թուրքեր ու հայ կաթոլիկներ, իսկ գյուղերի բնակիչների մի մասը բազում տարիներ առաջ թուրքացավ, ուստի տեղ-տեղ սրանց ընտանիքները և ազգատոհմերը դեռևս պահպանում են գավառի հայկական անունը՝ կոչելով Խաչուկկիլ, Վարդանկիլ, Կնքահայրկիլ, Վանգեղ»։

«Թորթումը,— գրում է Ինճիճյանը,— գավառի գլխավոր գյուղաքաղաքն էր համարվում։ Մոտավորապես 400 տուն ուներ։ Պատմում են, որ Թորթումի բնակիչների հայ նախնիները, զզված բռնություններից ու զրկանքներից, ընդունեցին թուրքերի կրոնը»։

Խոսելով Կամախ կամ Քեմախ (հնում Դարանաղի) գավառի մասին, Ինճիճյանը գրում է. «Այս գավառի բնակչությունը շատացել է, հին և նոր գյուղերը բնակեցված են հայերով և, մանավանդ, թուրքերով, որոնք մեծամասամբ թուրքացած հայեր են»։

Մանազկերտ գավառի 360 գյուղերը հիմնականում բնակեցված էին հայերով, բայց 1762 թ. խռովությունների ու մարտերի ընթացքում բեյի կողմից այս գավառում շատ ավերածություններ եղան ու հազիվ 100 գյուղ մնաց։ Դրանից հետո խռովություններն ու պատերազմները, որ տեղի ունեցան մի քանի տարի առաջ նրա ու Խնուսի բեյի միջև, մեծապես ապականեցին այս երկիրը և հազիվ 20 գյուղ թողեցին։ Իսկ քաղաքում, եթե առաջ կար 6000, այժմ մնացել է 107 տուն, որից յոթը կամ ութն են հայի, մնացածը քրդերինն են։ Հայկական թագավորության ժամանակ սա մեծ քաղաք է եղել։ Թուրք պատմիչ Քյաթիբ Չելեբին գրում է. «Այս բերդը հնագույն է և աթոռանիստ հայոց»։

Ընդհանրություն կա՞ երկրի բնական ու պետական սահմանների միջև, նրանք համընկնո՞ւմ են, թե՝ ոչ։ Իհարկե, այո։ Սակայն, հայ ժողովրդի բազմադարյան և դժբախտ պատմության ընթացքում դա միշտ չէ, որ տեղի է ունեցել։

* * *

... Իսկ գնացքը մեզ տանում էր Կարս։ Հանկարծ լսվում է կանացի ճիչ, ու վագոնում իրարանցում է սկսվում։ «Մեր աղ՜ունը։ Ահա, տեսե՛ք, նա է, նա է...»։

Տիկին Անուշն էր։ Նրանց գյուղի կողքով էինք անցնում. նա ճանաչել էր գետակի ափին գտնվող իրենց տունը։

Կարս տանող ճանապարհի երկու կողմերում հացահատիկի անծայրածիր դաշտեր են։ Հացը քաղել, բայց դեռ չէին տեղափոխել ու հայացքիդ առաջ կալսելու պատրաստ ցորենի եղանների անտառ էր։ Կարսի ու Բասենի հարթավայրերը Հայաստանի հացի շտեմարաններն են եղել և բավարարել են հացահատիկի ոչ միայն ներքին կարիքները, այլև Հայաստանից հացահատիկ է արտահանվել։ Հացահատիկի այդ համատարած դաշտերում տեղ-տեղ աչքի էին զարնում շինությունների, մասնավորապես հոգևոր կառույցների ավերակները։ Իսկ երբ մոտեցանք Կարսին, հեռվում, լեռան բարձունքին զծագրվեցին հայկական հին բերդի ավերակները։

Կարսը բացառիկ դիրք ունի։ Տասնամյակներ առաջ ռազմական գործի ստրատեգներն ու քաղաքագետներն իզուր չէին ասում, թե ում ձեռքին Կարսն ու նրա բարձրավանդակն է, նա է թելադրելու աշխարհագրական այդ շրջանում՝ սկսած Փոքր Ասիայից մինչև Մերձավոր Արևելքի երկրները։

Բ. Լենդրանը, նկատի ունենալով քեմալականների միտումները, խորհրդային կառավարությանը գրում է. «Թուրքերի այդ ձգտումների բավարարումը կստեղծի քեմալականների իմպերիալիստական նկրտումների ուժեղացման վտանգ... Կարսը Հայաստանի ձեռքում՝ Հայաստանին չի դարձնի իմպերիալիստական երկիր, իսկ Կարսը Թուրքիայի ձեռքում, քեմալականների փոփոխված տրամադրության պայմաններում, կարող է դառնալ բազա։ Միանգամայն ակներև է, որ այդպիսի բազայի ստեղծումը Ռուսաստանի համար արդյունավետ սպառնալիք է ներկայացնում. դա Խորհրդային Ռուսաստանի շահերին դեմ է»։

«Ազգերի կյանքը» թերթի 1921 թ. մարտի 4-ի համարում տպագրված «Հայաստան և Թուրքիա» հոդվածում Ստալինը գրում է. «Կարելի է ասել, որ Կարսն ու Արդահանը ոչ միայն

Հայաստանին, այլ նաև Ռուսաստանին են շահագրգռում, որովհետև այս վայրերը Կովկասի դեմ արշավանքի լավագույն բազաներ են։ Ով իշխի Կարսին, կիշխի նաև Վլադիվոստոկին։ Թեև Խորհրդային Ռուսաստանը քաջ գիտե այս ճշմարտությունը, բայց այս խնդիրներին չի նայում պետական շահերի տեսակետից։ Նա հավատում է, որ պրոլետարական հեղափոխությունը հաղթանակելու է և այդ հաղթանակի շնորհիվ բոլոր ջանքերի կուվանները, հողային բոլոր զիջումները կորցնելու են իրենց նշանակությունը։ Դրա համար էլ Խորհրդային Ռուսաստանն իրավունք ունի պնդելու, որ Հայաստանի համար անընդունելի չպետք է լինի Կարսն ու Արդահանը ժամանակավորապես Թուրքիային թողնելը, մինչև որ հաղթանակի համաշխարհային հեղափոխությունը և լքված հողերը վերադառնեն իրենց իսկական տերերին»։

Թե Ստալինի արտահայտած վերջին միտքը որքանով էր անկեղծ, թող մնա նրա սատանայական խղճին, իսկ որ Կարսը Թուրքիային տալը ռուսական դիվանագիտության ամենախոշոր սխալներից մեկն էր, կասկած չի կարող լինել։ Ունենալով Կարսը, թուրքերը իշխող դիրք ստացան Անդրկովկասի նկատմամբ և Ռուսաստանին հարկադրեցին ոչ միայն հարձակողական, այլև պաշտպանական ռազմավարությունում միշտ աչքի տակ ունենալ թուրքական գործոնը։ Կարսն ու Հայկական պարն առաջնային դեր խաղացին և՛ ՆԱՏՕ-ի քաղաքականության մեջ և՛ թուրք-ամերիկյան հարաբերություններում, ինչն էլ, վերջին հաշվով, որոշեց Թուրքիայի ռազմաքաղաքական վերընթաց թռիչքի բախտը, իսկ արդյունքում՝ այս աշխարհաշրջանում Ռուսաստանը գնալով թուլանում է, իսկ Թուրքիան՝ ուժեղանում։

...Վերադառնանք Կարսին։

Կարսում կարելի է շատ տարօրինակություններ հանդիպել։ Օրինակ՝ գետը, որ անցնում է քաղաքի միջով, հոսում է ոչ թե հարավ, այլ՝ հյուսիս, չնայած թափվում է Արաքսը։ Գեղեցիկ գետ է, քաղաքի մեջ նրա կողերը պատված են հիանալի մշակված գորշ քարերով, իսկ տեղ-տեղ գետը ընդհատակ է անցել։ Նրան հարող ու հատող անցուղիներն ու փողոցները սալապատված են։ Սակայն քաղաքի նոր տերերին անհասկանալի են մարդու ձեռքի այդ հրաշագեղ կերտվածք-

ները։ Կոյուղու և աղբի փոխադրման բացակայության հետևանքով գետը անհրաժեշտորեն աղտոտված է, ավելի ճիշտ, վեր է ածվել աղբանոցի։

Հենց գետափից սկսվում է Կարսի հռչակավոր բերդը։ Նա իսկապես տպավորիչ է ու լավ պահպանված։ Բերդի որոշ հատվածներ այսօր էլ օգտագործվում են թուրքական բանակի կողմից։ Այդ է պատճառը, որ նրա մի զգալի մասը փակ է այցելուների առաջ։ Բերդը սկսվում է մոտ 15 մետր բարձրություն ունեցող վիթխարի պատով, որը շարված է գորշագույն ամուր քարով ու շրջափակում է կղզիաձև բարձունքի միջին ու վերին հատվածները՝ չորս կիլոմետր ընդհանուր երկարությամբ։ Բերդի մուտքին մի քանի լեզուներով գրված է, որ այն միջնադարյան թուրքական հուշարձան է, այսինքն՝ կառուցված է թուրքերի կողմից։

Համալիրը բաղկացած է մի քանի ամրոցային շինություններից։ Դրանցից գլխավորը արևմտյան աշտարակն է, որին փակցված են թուրքական վաթանը փառաբանող լոզունգն ու Աթաթուրքի կիսանդրին։ Այդ աշտարակի վրա բարձրանալն արգելվում է։ Բերդի բակը թաղված է կանաչի մեջ։ Երբ ներս մտանք, դեմ առանք թուրք հոգևորական պահակին։ Նա մեր բարևին պատասխանելով՝ ավելացրեց. «Ձեր գալը բարի չէ»։

Բերդի բարձունքից Կարսը երևում է իր ամբողջ հմայքով՝ ասես ափիդ մեջ լինի։ Քաղաքը բաժանված է երկու մասի՝ հին քաղաք, որը տեղադրված է բերդի դիմաց, գետի աջ ափից սկիզբ առնող և մեծ թեքություն ու բարձրություն ունեցող սարալանջի վրա։ Հայկական Կարսը հիմնականում հենց այդ հին քաղաքն է, որը հետագայում ձգվելով հարավ, անցել է գետի մյուս ափը։ Գետին հարող հարթության վրա կառուցվել է գործարար կենտրոն, որը հար և նման է Գյումրիին՝ հիմնականում միհարկանի (կան նաև երկհարկանի) սև սրբատաշ քարից կառուցված խանութներ, արհեստանոցներ, ոչ մեծ թվով բնակելի տներ։ Հին քաղաքի մեծ մասը ճնշող տպավորություն է թողնում։ Սարալանջի թեքությամբ գրեթե իրար վրա դասավորված կիսանկուղային խրճիթների մեծ մասը, մնալով անխնամ, խարխլվել են ու բնակության համար միանգամայն անպետք դարձել։ Հին քաղաքը դատարկվում է։ Քաղաքի այս մասում, երկաթե կամրջի մերձակայ-

քում է բնակվել Զարենցը։ Փորձեցինք գտնել նրանց տունը։ Դա մեզ չհաջողվեց, բայց ծանոթացանք այդ թաղում բնակվող մի քանի քրդերի հետ։ Նրանք պատմեցին թաղամասի նախկին հայ բնակիչներից մի քանիսի մասին, միաժամանակ հաստատելով, որ իրենց թաղամասի գրեթե բոլոր տների տերերը հայեր են եղել, որոնք ոչնչացվել են։ Գտանք դպրոցի շենքը, որտեղ սովորել է Զարենցը։ Այն գտնվում է գետի հակառակ ափին՝ երկաթե կամրջից ոչ հեռու։ Եռահարկ սև սրբատաշ քարից գեղեցիկ շինություն է, որի հարկերի փայտյա ծածկերը քանդել էին՝ դրանց ցեմենտի ծածկերով փոխարինելու համար։

Բերդի հինց ներքևում, գետի ափին կլոր տանիքներով շինություններ կան. դրանք թուրքական բաղնիքներ են։ Բաղնիքի էին վերածել նաև հայկական եկեղեցիներից մեկը, բայց վերջինս այդ անպատվությանը չի դիմացել .ու վերածվել էր ավերակի կույտի։ Հայկական եկեղեցիներից կանգուն է միայն մեկը, որը բերդի հարևանությամբ է։ Այն տարբեր ժամանակներում տարբեր նպատակների է ծառայեցվել, օգտագործվել է որպես պահեստ, թուրքական մշակույթի պատմության թանգարան, իսկ այժմ դատարկ է, անտեր ու դռները կրնկի վրա բաց։

Կարսի երկրորդ մասը նոր քաղաքն է, որը սկիզբ է առնում համանուն գետից ու տարածվում դեպի հարավ։ Նոր քաղաքը հիմնադրել են ռուսները, ցարական կառավարությունն այստեղ վերաբնակեցրել է մեծ թվով մալականների։ Ցածրիկ, տիպիկ ռուսական տներից շատերը մինչև օրս կանգուն են և նրանցում շարունակում են բնակվել մալականները։ Քաղաքի այս մասում են բնակվել նաև ռուս չինովնիկները, ոստայությունը։ Այստեղ է ռուսական զորանոցային թաղամասը (որը շատ նման է Գյումրիի հրաձգարանին), ինչպես նաև ռուսական մեծ եկեղեցին։ Թուրքերը նրա երկու ծայրին մինարեթ են կառուցել ու վերածել մզկիթի։

Քաղաքը, ճիշտ է՝ դանդաղ, բայց կառուցապատվում ու վերակառուցվում է. հարավային մասում բազմահարկ շենքերի թաղամաս է կառուցված ու շարունակում է կառուցվել։ Կարսի գեղեցկությունը, սակայն, Հին քաղաքի ու այս բարձրահարկերի միջև եղած հատվածն է։ Վերջին տարիներին

կարգի են բերել ու սկսել են օգտագործել հայերի նախկին խանութները, գործատեղերի շենքերը, քարաշեն բնակելի տները, որոնք գողտրիկ գեղեցկությամբ դասավորված են քաղաքի կենտրոնի ուղղաձիգ և նույնքան գողտրիկ փողոցների երկու կողմերին։

Կարսում առատություն է։ Խանութներում ամեն ինչ կա, բացի գնորդներից։ Գները բարձր են, աշխատավարձը՝ ցածր։

Կարսը ոչ միայն չի քանդվում, այլ մտցված է Թուրքիայի արևելյան ու հարավ-արևելյան այն 10 նահանգների ցուցակի մեջ, որոնք պետության արտակարգ հոգացության կարիքն ունեն և զգալի օգնություն են ստանում։

Քաղաքի ազգաբնակչությունը, առանց բացառության, եկվորներ են՝ հիմնականում ադրբեջանցիներ ու կովկասյան լեռնցի մահմեդականներ։ Փոքր թիվ չեն կազմում նրանք, ովքեր 2-րդ համաշխարհային պատերազմի ժամանակ գերի են հանձնվել գերմանացիներին ու գերությունից ազատվելուց հետո «վերադարձել են» ոչ թե ԽՍՀՄ, այլ Թուրքիա։ Զգալի թիվ են կազմում նաև քրդերը, որոնց մի մասը ևս ԽՍՀՄ-ից է գնացել։ Այստեղ հանդիպեցի Հայաստանից գնացած մի քրդի. Նա երանությամբ էր խոսում Երևանում ապրած տարիների մասին ու մեծ անհանգստություն էր ապրում ԽՍՀՄ-ում ստեղծված իրավիճակի համար։ Քուրդն իր արտահայտություններում գուցե և անկեղծ էր, բայց հասկացա, որ 2 քառ. մետր տարածք ունեցող արհեստանոցը նրա համար թանկ էր ամեն ինչից։

Խորհրդային մարդը, հայտնի պատճառներով, արտասահմանյան երկրների նկատմամբ միշտ օտարության նախապաշարմունք է ունեցել և, հավանաբար, շարունակում է ունենալ։ Ինչ վերաբերում է Թուրքիայի հանդեպ հայերի վերաբերմունքին, ապա «խորթ» բառն անզոր է արտահայտելու այն ընդվզումը, հոգեկան խռովքը, որով հայը տալիս է այդ երկրի անունը։ Դրա համար մեղադրել չի կարելի։ Բայց... Թուրքիայում թուրքերը մեր նկատմամբ որևէ առանձնահատուկ վերաբերմունք չեն դրսևորում։ Սիրալիր են, բարեհամբույր, նույնիսկ չեն նկատում, որ դու հայ ես, և եթե անգամ իմանում են, նրանց վերաբերմունքում փոփոխություն չի նկատվում։

Ի՞նչ է դա։ Քաղաքավարությո՞ւն։ Կ. Պոլսում գուցե, բայց Կարսում՝ անպայման ոչ։ Բարի կամեցողության արտահայտությո՞ւն։ Ոչ։ Նրանք գյավուր հայերի նկատմամբ հարգանք չունեն։ Դա իսկույն երևան էր գալիս, երբ թուրքն իրեն կողմնակի ուշադրությունից դուրս էր զգում։

Բանն այն է, որ թուրքերը Հայկական հարցը «լուծված» են համարում։ Նրանք համոզված են, որ հայերը Թուրքիայի տարածքին մոտենալ չեն կարող։ Այսօր թուրքը տերն է աշխարհի խոշոր պետություններից մեկի, թուրքը հզոր բանակ ունի, թուրքը կյանքի շատ բնագավառներում հայից առաջ է անցել։

Թուրքը հաղթող է, իսկ հայը պարտված, թուրքը հայից վախենալու պատճառ չունի, իսկ հայը, ընդհակառակը, թուրքից վախենալու բոլոր հիմքերն ունի։ Հայը թույլ է և արժանի, որ թուրքը նրան չնկատի։

* * *

Մեզնից շատերն են Ախուրյանի այս ափից տեսել Անին։ Ամեն անգամ, երբ դա հաջողվում է, հիացմունքի հետ հիասթափության զգացում էլ ենք ունենում։ Պատճառն այն է, որ փառաբանված Անին հեռվից դիտողին ներկայանում է մի քանի փոքր ու մեծ եկեղեցիներով, գետնափոր տներով ու պարիսպների մնացորդներով, միայն։

Միանգամայն այլ է Անին, երբ լինում ես նրա ավերակներում։ Ձեմ թաքցնում. ինձ հաճելիորեն զարմացրին Անիի կառույցների ծավալները։ Տպավորությունը շշմեցուցիչ է դեռ քաղաք չմտած։ Նրա մուտքը բացվում է եռահարկ շենքի բարձրության աշտարակի մեջ։ Անին ունեցել է կրկնակի պարիսպներ, որոնց միջև ջրով լցված խրամատներ են եղել։ Պարիսպները երկու կողմից պատված են սրբատաշ քարերով։ Մուտքի աշտարակի վրա աչքի է զարնում առյուծի չքնաղ քարձրաքանդակը։ Քաղաք ոտք դնելուց հետո երկար քայլում ես ավերակներով, որոնց մեջ շավիղներ են բացված (բացառված չէ, որ գրանք Անիի երրիմնի փողոցներն են)։ Քաղաքի ավերակների մեծ մասը հյուսիս-արևելքում են։ Գիտնականների կարծիքով դրանց տեղում եղել է բնակելի թա-

ղամաս։ Մենք շարժվում ենք դեպի ավերակների մեջ մոլորված, բայց դեռևս կանգուն շինությունները, որոնք բացառապես հոգևոր կառույցներ են։ Հեռվից փոքրիկ թվացող այդ կառույցները մոտենալուն զուգընթաց մեծանում ու աչքիդ ավելի վեհաշուք են երևում։ Հասկանում եմ, որ դրանք աշխարհի մեծագույն հոգևոր կառույցները չեն, սակայն տեղանքի բարձրությունն ու ավերակների լայնածավալ համալնապատկերը նրանց դարձնում է ոչ միայն վիթխարի, այլև թեթևաթռիչ ու սլացիկ։

Ի դեպ, այդպիսի տպավորություն են թողնում ոչ միայն տաճարները, այլև պարիսպների կանգուն մնացած աշտարակները, որոնց մի մասը, բարձրանալով զառիթափերից, մարդուն փոքրացնում են ու ներշնչում անմատչելիության զգացում։

Մայր տաճարը գծային ինքնատիպ լուծումներով մի փառահեղ շինություն է։ Առաջին հայացքից թվում է, թե բացի կառուցման անհասանելի որակից, այն ճարտարապետական որևէ նորություն կամ գյուտ չի պարունակում։ Իսկ երբ ուշադիր ես նայում, զարմանում ես կառույցի հեղինակների մտքի ու երևակայության թռիչքով, ճարտարապետական ու շինարարական ինքնատիպ, նորագյուտ լուծումներով, չափին հետամուտ խստությամբ։ Ինչպես նկատում է Լինչը. «Նա կրում է որակի բնորոշմանը չենթարկվող այն կնիքը, որը մենք անվանում ենք գեղեցկություն և հազիվ թե որևէ մեկը կարող է նրան նայել առանց երջանիկ դողի»։ Իհարկե, լուրջ չէր լինի, եթե այս նոթագրությունում փորձեինք տալ Անիի ճարտարապետական հուշարձանների բնութագիրը։ Դա մասնագետների գործն է։ Միայն ասեմ, որ դիտողի մեջ անպայման ստեղծվում է համոզմունք, որ Անիի հոգևոր կառույցները, սկզբունքորեն իրար նման լինելով հանդերձ, յուրաքանչյուրն առանձին ճարտարապետական անկրկնելի գլուխգործոց են։ Անին ճաշակով ու որակով կառուցելու արվեստի թանգարան է։

Այդպիսին է զգացողությունը, երբ խոսքը վերաբերում է հոգևոր կառույցներին, այդպիսին է նաև, երբ գիտում ես աշխարհիկ ու նույնիսկ արտադրական-կենցաղային բնույթի շինությունները (քաղաքի պարիսպներն ու աշտարակները, քրա-

մատակարարման բարդ համակարգն ու նույնիսկ ծառաների համար կառուցված գետնափոր կացարանները)։

Անին մտցված է տուրիստական ուղերթերի մեջ, չնայած նրան այցելելու համար թույլտվություն է պահանջվում։ Անիի՝ որպես հուշարձանային համալիրի, պահպանումն ու պաշտպանությունը Հայաստանի Հանրապետության համար պետք է լինի պետական կարևորության խնդիր, նրա արտաքին քաղաքական ու մշակութային հարաբերությունների նպատակադրումներից։ Միանգամայն ակնհայտ է, որ ոչ հեռավոր ապագայում Անիից ոչինչ չի մնա, եթե նա պետական հովանավորությունից զուրկ լինի։ Իսկ դա թույլ տալ չի կարելի, քանի որ Անին հայ ճարտարապետության հանրագիտարան է։

* * *

Մասունքներ հավաքելով, Անիի ավերակներից դուրս եկանք սրտի կսկիծով ու հույսի նշխարով։

Անիից շարժվեցինք Սրդահանի ուղղությամբ, բայց քաղաքին չհասած՝ թեքվեցինք ձախ և օգոստոս ամսին ընկանք իսկական գարնան գիրկը։ Անծայրածիր սարահարթ, որի լանջերն ամբողջությամբ պատված էին կանաչով։ Տեղ-տեղ կանաչը վառ երանգ ուներ՝ պարզ է՝ աղբյուրներ են։ «Քար» ասվածը զոյություն չուներ, հատուկենտ օբաներ էին ու ոչխարի հոտեր։ Քուրդ հովիվների թագավորությունում Լիսք ու կարծես վայելում էինք Արագածի փեշերի հմայքը։ Քիչ անց, ներքևում, կանաչ հարթավայրում երևաց օձագալար մի գետ։ Օլթիի մերձակայքում էինք։ Այստեղ ճանապարհը ճյուղավորվում էր՝ մեկը գնում էր Օլթի, մյուսը՝ Էրզրում, իսկ մենք թեքվեցինք աջ ու մտանք Ճորոխի անդնդախոր կիրճը։ Այդ կիրճը բնության կերտած հրաշքներից մեկն է։ Մերկ ու ուղղահայաց վիթխարի ժայռերը միայն տեղ-տեղ են ընդհատվում սոճու անտառաշերտերով, իսկ մնացած ամբողջ տարածքում՝ մոտ 140 կմ երկարությամբ, քարաժայռերը գետի երկու ափերից դեպի իրար են եկել ու կիրճը այնքան նեղացրել, որ հայացքիցդ կորչում է երկնքի նույնիսկ նեղ շերտը։ Մեքենան անցնում էր, բառի բուն իմաստով, ժայռերի տակով, որոշ տեղերում՝ նաև գետնի տակով՝ թունելներով։ Ով եղել

է Ջերմուկի ձորում, կարող է պատկերացում կազմել Ձորոխի կիրճի մասին, այն տարբերությամբ միայն, որ վերջինս երկար է, անվերջանալի թվացող երկար, ու նրան գրկած ժայռերը շատ են բարձր՝ մխրճված երկնքի կուրծքը։

Ասֆալտապատ ճանապարհը նման է մի նեղ արահետի, որն արգելապատնեշով պաշտպանված չէ գետից։ Դրա համար էլ մեքենան առաջ էր ընթանում զգուշորեն, սայլի արագությամբ։ Ճանապարհը պաշտպանված չէ նաև ժայռերից։ Այստեղ գրեթե ամեն օր փլուզումներ են լինում։ Դրանցից երկուսը մեզ հարկադրեցին ժամեր շարունակ կանգ առնել անդնդախոր, բուսականությունից զուրկ ժայռակերտ կիրճում և անգործությունից ձանձրանալ։ Միակ ուշագրավը, թերևս, տեղ-տեղ ժայռերից կախված թզենիներն էին, որոնց հասնելն այնքան էլ հեշտ չէր։

Նման փլուզումների ժամանակ կիրճում իրար հետևից շարվում են ավտոմեքենաները, և շարքը ձգվում է մի քանի կիլոմետր։ Խորհրդային Միության և Թուրքիայի միջև առևտրական կապերի ընդլայնումը շատացրել է կիրճի հոգսերը, որովհետև դա Թուրքիայի հյուսիս-արևելքը երկրի մյուս մասերի հետ կապող ամենակարճ ճանապարհն է։

Ձորոխը նույնիսկ օգոստոսին գարնան վարարած գետի է նման։ Նա ձևավորվում է մի քանի լեռնագագաթներից սկիզբ առնող վտակներից, և քանի որ այդ գագաթները մերկ են ու բուսականությունից զուրկ, անձրևների ժամանակ գետը վարարում է ու լցվում կավագույն տիղմով։

Մութն արդեն ընկել էր, երբ հակառակ ափին մեր դեմ հառնեց անտառի մեջ թաքնված ու լույսերով ողողված մի բնակավայր։ Արդվինն էր։ Վերագարձին ճանապարհի այս հատվածը լույսով անցանք ու հիացած էինք ծառուծաղկի մեջ լողացող, գողտրիկ առանձնատներով կառուցապատված քաղաքի աննման գեղեցկությամբ։

Արդվինից մեր մեքենան թեքվեց հյուսիս-արևելք ու ոլորապտույտ ճանապարհով բարձրացավ խիտ անտառներով ծածկված սարն ու ճանապարհը շարունակեց Բաթումիի ուղղությամբ։ Վրաստանի սահմանին չհասած, ճանապարհը նորից թեքվեց հյուսիս ու մենք հայտնվեցինք Սև ծովի ափին գտնվող Հոպա փոքրիկ քաղաքում։

Հոպայի բնակիչների մեծ մասը թուրքացած ու մահմեդականացած համշենահայեր են։ Նրանք բոլորը հիանալի խոսում են համշենի բարբառով, բայց այն կիրառելիս օգտագործման հարցում աշխատում են զուսպ լինել, վախենալով թուրքերի «աչքից ընկնելուց»։ Այդ թուրքացած հայերի ձեռքում է քաղաքի տնտեսական կյանքը՝ նրանք առևտրականներ ու բանկատերեր են, հյուրանոցատերեր ու արհեստավորներ։

Հայաստանից հեռու ծովափնյա այս քաղաքում հիշողությանս մեջ վերականգնվեց Ղ. Ինճիճյանի «Նոր Հայաստան» գիրքը, որի Բ հատորի 395-րդ էջում նա գրում է. «Անունը Համշեն, ոմանք ստուգաբանում են Համամաշեն, այսինքն կառուցված է Համամ իշխանի կողմից։ Զգվում է Բարխուր լեռան ստորոտով, սահմանակից է Լազստանին... Երկրի բնակիչները առաջներում հայեր էին, իսկ 17-րդ դարի վերջին և 18-րդ դարի սկզբին, շրջակա գյուղերի բնակչության հետ միասին դարձան թուրքեր՝ բռնի հարկապահանջության հետևանքով։ Բայց տակավին նրանց մեջ հանդիպում են քրիստոնյաներ, գյուղերում դեռ կանգուն եկեղեցիներ կան, որոնք հին են և տերտերներ չունեն..., իսկ տաճկացածները մինչև այժմ խոսում են հայերեն»։

Հ. Պողոս Վ. Մհերյանը 1776 թ. ճանապարհորդել է Համշենում և իր «Ինքնակենսագրության» մեջ նկարագրում է խեվակի և շրջակա գյուղերի թուրքացած հայերին։ Իմանալով, որ եկողը հայ հոգևորական է, խռնվում են նրա շուրջը, համբուրում աջը, ծնրադիր ունկնդրում պատարագը։ Գտնում են եկեղեցին, որը փակի տակ էր։ Բացում են, մաքրում ու այնտեղ պատարագ մատուցում։ «Խորհուրդ խորինի» կատարման ժամանակ գյուղացիներն ալեկոծվում են, խուժում եկեղեցի և ջերմեռանդորեն կատարում քրիստոնեական ծեսը։

Միայն Համշենում թուրքացած հայերի թիվն անցնում էր 40 հազարից։

Խորհրդաթուրքական կապերի «սանձազերծումը» մի կողմից շեշտակիորեն մեծացրել է Հոպայի նշանակությունը, իսկ մյուս կողմից նրան ծանր կացության առաջ կանգնեցրել։ Այն պարզապես ի վիճակի չէ ընդունել ԽՍՀՄ քաղաքացիների օրեցօր ստվարացող հոսքը։ Քաղաքի ծովափնյա փողոցով

անցնելիս ավելի շատ խորհրդային մարդու, քան թուրքի կհանդիպես։ Ի դեպ, վերջինների զգալի մասն այստեղ է գալիս խորհրդային քաղաքացիների հետ առևտուր անելու։ Իսկ այդ առևտրի մեխանիզմը շատ պարզ է։ Նշված փողոցը ծովից բաժանող երկարաձիգ ցածրիկ պատը վերածված է վաճառասեղանի։ Հենց մեր աչքի առաջ այստեղ կանգ առավ վրացական մի ավտոբուս, որից իջան ճամպրուկներով ու բոխչաներով բեռնավորված 20—25 վրացի։ Նրանք առանց ժամանակ կորցնելու, պատի վրա դասավորեցին իրենց բերած ապրանքները և սկսվեց եռուն առևտուր։ Դժվար չէր նկատել, որ թե՛ վաճառողները, և թե՛ գնողները առաջին անգամ չէ, որ հանդիպում էին։ Նրանք իրար դիմում էին անունով, խոսում նախկին պայմանավորվածությունների շուրջը և պայմանավորվում առաջիկա հանդիպման մանրամասները՝ օրը, ժամը, վաճառվելիք ապրանքը։ Կես ժամ անց, վրացիներն առևտուրն ավարտելով վերադարձան ավտոբուս ու շարժվեցին արևմտյան ուղղությամբ։

Հոպան աղբի մեջ կորած է։ Փոշին ու շոգ եղանակն անում են իրենց սև գործը. մարդու մարմինն իսկույն ծածկվում է իսկական ցեխաշերտով։ Գնում ենք ծովում լողանալու։ Ծովափը ևս աղբանոցի է վերածված։ Բայց ճար չկա։ Լողանում ենք։ Ծովում էինք, երբ ափամերձ փողոցում տարօրինակ շարժում սկսվեց։ Մարդիկ, խումբ-խումբ հավաքված, աղմուկով ինչ-որ բան էին քննարկում և ականջները ռադիոընդունիչներին՝ համակ ուշադրությամբ ունկնդրում։ Սիրտս ինչ-որ վատ բան գուշակեց։ Չգիտես ինչու, իսկույն մտածեցի, թե այդ իրարանցումը կապված է մեր երկրի հետ։ Չէի սխալվել։ Առաջին իսկ պատահած համշենցին ասաց, որ Մոսկվայում հեղաշրջում է կատարվել։ Մարմնովս սարսուռ անցավ, չնայած համոզված էի, որ ԽՍՀՄ-ի համընդհանուր փլուզման առաջն առնելու միակ միջոցը արտակարգ բնույթի քայլերն էին։ Հեղաշրջում, բայց ո՞վ է նրա հեղինակը։ Գիտեի, որ երկրում դա կարող էին անել երեք մարդ՝ Գորբաչովը, Լուկյանովը և Ելցինը։ Համշենցուն հարցրի, թե ո՞վ է հեղաշրջման ղեկավարը։ Նա անգիտորեն գլուխը թափահարեց և ապա՝ փոխպրեզիդենտը։ Ես՝ Յանաևը՞։ Նա՝ հա՛, Յանաևը, հետը «Պ» տառով մեկը։ Ես՝ Պավլո՞վ։ Նա թե՝, հա՛, հա՛,

Պավլով։ Այս կցկտուր խոսքերից եզրակացրի, եթե Յանաևն ու Պավլովն են, ուրեմն դա Ելցինի ձեռքի գործը չէ։ Մնում էին Գորբաչովն ու Լուկյանովը։ Նրանցից ո՞վ է, կամ գուցե երկուսը միասի՞ն։ Պատասխան ստանալն անհնար էր, քանի որ Թուրքիայի լրատվական միջոցները, թեև անընդհատ մոսկովյան հեղաշրջման մասին էին խոսում, բայց կրկնում էին իրար և էական բնույթի նորություն չէին հաղորդում։

Մոսկվայի հեղաշրջման լուրը ցնցել էր ամբողջ Հոպան։ Նրա բնակիչները հեղաշրջման մեջ տեսնում էին խորհրդաթուրքական սահմանի փակման և շահութաբեր բիզնեսի դադարեցման վտանգ։ Ասեմ նաև ,որ Թուրքիայում մոսկովյան այդ իրադարձությունների նկատմամբ վերաբերմունքը միանշանակ չէր։ Եթե կառավարությունն իր վերաբերմունքը չէր արտահայտում, թաքցնում էր, ապա քրդերը ողջունում էին, իսկ թուրքական գործարար շրջանները՝ դատապարտում։

Ինչևէ։ Թողնում ենք Հոպան ու ճամփա բռնում դեպի Էրզրում։ Մեր ավտոբուսի վարորդի բիզնեսը ևս ԽՍՀՄ-ի հետ էր կապված և ռադիոընդունիչից չէր հեռանում։ Նրան հաջողվեց «բռնել» Մոսկվայի ծրագիրն ու ավտոբուսում նստած լսեցինք Արտակարգ դրության պետական կոմիտեի հայտարարությունը, որն ամբողջովին գորբաչովյան էր։ Մեկ անգամ չէ, որ Գորբաչովը խոսել էր երկրում արտակարգ դրություն մտցնելու, վճռական քայլերի անհրաժեշտության մասին։ Ինձ համար պարզից էլ պարզ դարձավ, որ հեղաշրջման ակունքների մոտ կանգնած է երկրի պրեզիդենտը։ Բայց սա մի այլ զրույցի նյութ է, որի մասին կփորձեմ իմ մտորումներն արտահայտել ուրիշ առիթով։ Իսկ այժմ շարունակենք մեր ճանապարհորդությունն Արևմտյան Հայաստանով։

Օրը վատ էր սկսվել ու այդպես էլ շարունակվեց։ Ճանապարհին ոստիկանությունը մեզ կանգնեցրեց և խլեց նկաբահանման խցիկը, չնայած Կարսում նկարահանումների թույլտվություն ստացել էինք։ Ժամեր կորցրինք, մինչև ոստիկանների ճանկերից խցիկը ետ առանք ու ճանապարհը շարունակեցինք։ Սակայն մեզ վիճակված չէր Սարիղամիշը ցեբեկով տեսնել, որովհետև փլուզման պատճառով մինչև մութն ընկնելը մնացինք Ճորոխի կիրճում։ Մութ էր, երբ անցանք

Թարթառ գետի վրա կառուցված ջրամբարների շարքը։ Ճանապարհին հատուկենտ գյուղերի հանդիպեցինք. տեղանքը բլրապատ էր ու քարքարոտ, բուսականությունը՝ աղքատ։ Անցնելով մի քանի անդնդախոր կիրճերով, գիշերը հասանք Էրզրում ու տեղավորվեցինք նրա կենտրոնական փողոցի վրա գտնվող մի հյուրանոցում։

Առավոտ վաղ մեքենայով շրջեցինք քաղաքը։ Շատ բան չտեսանք, բայց մի իրողություն ի՛ձ համար որոշակի դարձավ՝ այսօրվա Էրզրումը կազմված է երեք քաղաքներից՝ բաժանված երեք գոտիների։ Նրա կենտրոնն օժտված է ժամանակակից քաղաքին բնորոշ բոլոր գծերով՝ խանութներ, օֆիսներ, բանկեր, վարչական շենքեր։ Ոսկու խանութների շարքը ձգվում է փողոցի մի ծայրից մյուսը։ Կարինի կենտրոնն իրոք գեղեցիկ է և հենց այն նկատի ունենալով, որ Էրզրումը կոչել են Անատոլիայի Շվեյցարիա։

Երկրորդ գոտին կենտրոնը շրջափակող միջին շերտն է։ Այդտեղ քաղաքի հայկական թաղերն են, իսկ երրորդ գոտում՝ արվարձանները, բնակելի նոր բազմահարկ գյուղերը։ Վերջիններն իրենց միապաղաղությամբ ու անճաշակությամբ հար նման են մեր բնակելի զանգվածներին։ Ինձ, իհարկե, առաջին հերթին հետաքրքրում էր երկրորդ գոտին և կենտրոնական փողոցով վար իջա այդ գոտին անցնելու համար։ Փողոցի ամբողջ երկարությամբ բացօթյա առևտուր էր ընթանում։ Իսկ կայարանամերձ հրապարակում, իրար կողքի շարված մեքենաները վաճառասեղանների վերածած, աշխույժ առևտուր էին անում հայաստանցի հայերի և ադրբեջանցի «ազերիների» խմբերը։

Զարմանալին բարի դրացիական այս համակեցությունը չէր, այլ հայերի կողմից վաճառքի բերված ապրանքների տեսականին, որ ծայրաստիճան դեֆիցիտ իրերից էր կազմված և, որոնցից Երևանում ճարելը գործնականում անհնար է։ Հայերի ու ադրբեջանցիների ջանքերով, երևում է Էրզրումը նորից վերադառնում իր նախկին դերին՝ միջազգային առևտրի կենտրոնի։ Չէ՞ որ միջնադարում և նրանից էլ առաջ Էրզրումով էր անցնում Եվրոպան Ասիայի հետ կապող առևտրական գլխավոր ճանապարհը։

Անցա Կարինի հին թաղերը՝ հին ու կիսավեր միհարկանի տներ, նեղլիկ ու սալահատակված փողոցներ, որոնցից շատերը գործնականում անանցանելի էին, քանի որ վերածվել էին վաճառահրապարակի ու ծածկվել ձմերուկի, սեխի, պոմիդորի, գյուղատնտեսական այլ մթերքների հսկա շեղջերով։

Փողոցները մաքուր չեն, դրա փոխարեն նախանձելի մաքրություն է տիրում հասարակական օբյեկտներում։ Օրինակ, դեռևս օգտագործվում են էրզրումի փողոցների հիանալի աղբյուրները, որոնց շրջակայքում բացարձակ մաքրություն է և դա պահպանվում է ոչ թե հատուկ աշխատողների, այլ հասարակության հոգացությամբ (Թուրքերից սովորելն էլ ամոթ չէ)։

Էրզրումում մզկիթներ շատ կան։ Մի քանի եկեղեցիներ, այդ թվում նաև ճարտարապետական գլուխգործոցներ, նույնպես մզկիթի են վերածվել։ Այստեղ ևս, եկեղեցիները մզկիթի վերածել՝ նշանակում է նրանց կից մինարեթներ կառուցել և գմբեթների ծայրին խաչի փոխարեն կիսալուսին ամրացնել։

Թե՛ Կարսում, և թե՛ Կարինում ներկա եղանք նամազների։ Ի դեպ, ասեմ, որ մենք ոչ մի տեղ փողոցում նամազ անողների չհանդիպեցինք։ Ի տարբերություն Պարսկաստանի և արաբական մի քանի երկրների, Թուրքիայում մահմեդական կրոնի ազդեցությունն ավելի չափավոր է։ Դա նաև Աթաթուրքի աշխարհականացման քաղաքականության հետևանք է։ Մզկիթների հատակը պատված է ժամանակակից սինթետիկ կարպետներով։ Նամազի եկողները միջանցքում հանում են ոտնամանները, դնում այդ նպատակին ծառայող բաց պահարաններ և նոր միայն մտնում ներս։ Մզկիթները բարեկարգ ու մաքուր են։ Բոլոր մինարեթների վրա ամրացված են հզոր բարձրախոսներ, և առավոտ վաղ ու ճաշին քաղաքը լցվում է աղմուկով։ Սկզբում դա գրգռում է, իսկ հետո դառնում է տանելի։ Նամազի միապաղաղ երաժշտության մեջ ինչ-որ մեղմիկ թախիծ կա, որը և հավանաբար տանելի է դարձնում նրա անընդհատ կրկնողությունը։

Կարինում բնակվում է 270 հազար մարդ, հիմնականում Թուրքեր։ Հայերի չհանդիպեցինք։ Ավանդականորեն Արևմուտ-

յան Հայաստանի մայրաքաղաք համարվող Կարինում այլևս ոչ մի հայ չի բնակվում։ Համենայն դեպս, մեր հարցին այդպես պատասխանեցին։

* * *

Մեր ճամփան շարունակվում էր դեպի Մուշ։ Երբ հասանք Հասան—Կալա, հայացքներս մեխվեցին դիմացի սարի կատարի հսկա բերդին, որն ի տարբերություն Էրզրումի բերդի, ուժեղ տպավորություն է թողնում և տեղանքի ուղղահայաց կտրվածքի պատճառով անմատչելի է ոչ միայն տրանսպորտի, այլև հետիոտնի համար։ Գնում ենք Արազի երկայնքով, մտնում Խնուս գյուղաքաղաքը։ Առաջին աշխարհամարտի նախօրյակին Խնուսում կար 35—38 հայաբնակ գյուղ։ Մյուս գյուղերում ևս հայեր բնակվում էին, սակայն փոքրաթիվ՝ արհեստավորներ և մաքաբաներ (կիսաճորտեր— Ս. Պ.)։ Հայերի ընդհանուր թիվը հասնում էր 25 հազարի։ Ֆրանսիացի ճանապարհորդ Պյեռ Ամեդե Ժոռեսը Խնուսցիների մասին գրել է. «Մենք առաջին անգամ էինք հանդիպում քրիստոնյաների, որոնք թուրքերին հակադրվում էին։ Հայաստանի այս մասում կառավարության իշխանությունը գրեթե ոչինչ է և հայ գյուղացիները զինված են, պատրաստ կռվելու, եթե քուրդերը հարձակվեն, որոնց հետ միշտ կռիվների մեջ են և չեն վախենում ոչ սպառնալիքից, ոչ նախատինքից և ոչ էլ մահից»։

Խնուսը հրաշք երկիր է, նրա հացը մեծ համբավ ունի։ Կլիման բարեխառն է, առողջարար։ Լինչը գրում է. «Զեվիրմե գյուղը, որտեղից գետը անցանք, ունի 150 տուն, շրջապատված ուռենիների հաճելիորեն «կենդանի պատերով», որոնք Դեղթափ Սուի միացման կետում փունջ էին կազմում։ Հաճույքով դիտեցինք վայրի կարմիր վարդերի շարանները։ Բազմաթիվ աղջնակներ ,գրեթե մերկ, ջրի ափին մի զով տեղում խաղում էին։ Տեսնելով նրանց մազերի գեղեցկությունը, մենք ապշեցինք»։

Մենք էլ այս գյուղով անցանք, բայց Լինչին հիացրած գեղեցկություններն այլևս չկային։ Մառեր կային, հանգստանալու եկած թուրքեր ևս, որոնք խմբով ապրում էին բաց դաշտում՝ վրաններիր տակ։ Բերքառատ էր, կալում աղմուկով

աշխատում էր ավանդական քամահար մեքենան, որը ցորենը բաժանում էր հարդից։ Օրը շոգ էր, բայց Բյուրակնից փչում էր զով քամին, որը բերում էր ոչ միայն թարմություն, այլև զվարթության ինչ-որ ներշնչանք։

Ձախում գծագրվում է Բինգյոլը (Բյուրակնը), գետերի մայրը։ Այնտեղ են Առաջավոր Ասիայի ամենախոշոր գետերի՝ Եփրատի, Տիգրիսի և Արաքսի ակունքները։ Մեքենայաբար մտաբերում եմ Աբդուլ Համիդ Ջ-րդ սուլթանի խոսքերը, որ Ռուսաստանը «միշտ ցանալու է Սև ծովը գրավել։ Սա շատ հասկանալի է ու բնական։ Ռուսաստանի ջրի գլխավոր երակները՝ Դնեպրը, Դնեստրը, Դոնը, անուղղակի՝ ջրանցքներով նաև Վոլգան, Սև ծով են թափվում։ Ռուսական ուժերը նեղուցներով դեպի Միջերկրական ծով են խուժում։ Ռուսաստանի համար լուրջ հարց է Դարդանելի շղթաները խորտակելը, սակայն մեզ համար էլ կենսական խնդիր է այս նեղուցը պահելը։ Եթե այս խնդրում անհաշտ հակառակորդներ չլինեինք, կարող էինք դառնալ աշխարհիս ամենալավ բարեկամները»։

Իսկ մենք կանաչի մեջ կորած Վարդո գյուղով դուրս ենք գալիս Տարոն։ Ահա և Մուրադ գետը՝ Արածանին, որը սկիզբ առնելով Ծաղկանց լեռներից, անցնում է Մշո դաշտով, ջրվեժ դարձած ահարկու ուժով թափվում է Տարկոշ լեռան անդունդը ու փոքր ինչ առաջ գնալով՝ ուշքի է գալիս ու շրջվում արևվելք, Ճապաղջրի ու Բալուի տարածքով անցնում է Խարբերդ և Կապան Մատենի մոտ միանում Եփրատին։ Արածանիի վրա են երկու հրաշքներ. մեկը ձեռնաշեն՝ Սուլուխի կամուրջը, իսկ մյուսը՝ աստվածաշեն Տարկոշի ջրվեժի՝ գահավիժող ջրի տակով անցնող մայրուղին։

Կանգնած եմ Արածանիի ափին։ Ջուրը սակավ է, պըղտոր, բայց չեմ կարողանում զսպել այդ սուրբ ջրում լողանալու ցանկությունս։ Մտնում եմ գետը, ջուրը հազիվ ծունկներիս է հասնում։ Մի քուրդ տղա ջուր է լցնում մարմինս թրջելու համար։

Համոզված եմ, որ երբ Գրիգոր Լուսավորիչն ու Տրդատ թագավորն այս գետում, հեթանոս հայերին լողացնելով, քրիստոնյա էին դարձնում, Արածանիի ջրերն անպայման ավելի առատ ու ջինջ են եղել, թե չէ նրանք ինչու պետք

է հենց նրան ընտրեին իրենց մեծ առաքելության իրականացման վայր։

Արածանիից մի շիշ ջուր եմ վերցնում ու վերադառնում ավտոբուս։

Գնում ենք Մուշ։

Եթե Արարատյան աշխարհի կենտրոնը Արարատյան դաշտն է, Տուրուբերանի կենտրոնն էլ Մշո դաշտն է։ Նա շրջապատված է Սասունի, Սալնո ձորի, Բզնունիքի, Հարքի, Ապահունիքի, Հաշտեանքի, Ասպակունքի լեռներով ու լեռնաշղթաներով։

Հայաստանի այս մասում ևս լեռներն իրարից բաժանվում են խորխորատներով ու անանցանելի կիրճերով կամ խաչաձևող լեռնաշղթաներով, որի հետևանքով ձևավորված են իրարից բաժանված աշխարհագրական շրջաններ։ Բնության այս ճարտարապետությունը ևս իր «ծառայությունը» մատուցել է հայ ժողովրդի մեջ քաղաքական մասնատվածության հոգեբանության ձևավորման գործում։ Ամեն շրջան, լեռներով ու կիրճերով մեկուսացած արտաքին աշխարհից, դարեր շարունակ ապրել է ինքնամփոփ կյանքով, օգնելով կենտրոնախույզ ուժերին թե՛ քաղաքական և թե՛ ռազմական առումով։

Ներքին այդ «անպատեհությանը» գումարվում է արտաքին միանգամայն աննպաստ գործոնը՝ Հայաստանի աշխարհագրական տեղադրությունը։ Պատմության մեջ եզակի չեն փաստերը, երբ հարևան պետություններն օգտագործել են հայ ժողովրդի աշխարհագրական ներքին մասնատվածությունը, խրախուսել են կենտրոնախույզ տրամադրությունների զարգացումը հօգուտ իրենց քաղաքական շահերի և ի վնաս հայկական պետականության։

...Մուշ տանող ճանապարհի երկու կողմերում ձմերուկի ու ծխախոտի դաշտեր են, հացահատիկը կալսված է։

Կ. Սասունին Մշո դաշտի հետևյալ նկարագրությունն է տալիս. «Արևելքից Նեմրութի ու Գրգուռի թագը ճակատին դրած, նա գլուխը դրել է Սիփանա սեգ սարի ծնկներին ու սրունքները դեպի արևմուտք երկարելով Քարկե և Ինեակնյան լեռների թավուտ կողերի մեջ է խրվում։ Հյուսիսային կողմից նրա կլոր թիկունքը ընկղմվել է Կորդուքի նահապետ Քոսու-

բա սարի մերկ լանջին, իսկ հարավից խելագար սիրահարների նման նրան են նայում Միրիկատարն ու Սասունը»։

Տարոնի դաշտի հարավում. «Թխպոտ ամպերի գորշ շղարշներով պարուրված, առասպելական վհուկի նման իր ցուցադրական քիթը վեր է տնկել ծծմակը՝ Քանա սարի հրվանդանն ու նաև կիրճը, Տարոնի տարերային արհավիրքների որջն է նա։ Ամպրոպն ու մրրիկը, բուքն ու բորանը այնտեղից են պոկում ու դիվահարի նման շուռ տալիս Մշո դաշտի վրա»։

Հեռվում գծագրվում է Միրիկատարը՝ Միմ սարի գագաթը։ Նրա հետ է կապված Աստղիկի ծննդյան մասին առասպելը, համաձայն որի արեգակը սիրահարվել է այդ բարձր սարի վրա ու ամեն օր վաղ լուսաբացին ու երեկոյան մթնշաղին Անեղանակի հագուստով իջնում էր Միրիկատարին ու Աստղիկը այդ հրեղեն սիրուց է ծնվել։ Նա ծնվել է ձյունի ու ջրածաղիկների միջից և այնտեղ ապրել։ Մեծացել է Միրիկատարի ստորոտին և պաշտվել որպես գեղեցկության աստվածուհի։ Շատ ամաչկոտ էր և ամեն օր ոսկիամայր Անահիտը մշուշով ծածկում էր Մեղրագետը, որպեսզի Աստղիկը, կողմնակի աչքին անտես, սլանար դեպի Մեղրագետ ու լողանար նրա փրփուրների մեջ։ Այս առասպելի հետ է կապվում նաև Մուշ անունը։

Իսկ հեռու արևմուտքում հռչակավոր Ս. Կարապետի վանքն է, հայ քրիստոնեության ամենաառաջին հոգևոր կառույցներից մեկը։ Ավանդությունն ասում է, որ այստեղ Գրիգոր Լուսավորիչը մենամարտի է բռնվում ամենամեծ քուրմդևերի հետ։ Նրանցից ամենահզորը ոտքից վիրավորվելով փախչում է և իրեն նետում ջրաղացի խորքում եղած գնդանը։ Տարոնցիները հավատում են, որ այդ Կաղ դևը մինչև օրս դեռ կենդանի է ու, իր թևերից կախված, անիծում է։ Նա ժամանակ առ ժամանակ թևերը թափահարելով քամի է առաջացնում և անմիաբանության շունչ է ցանում հայերի վրա ու հայ ազգին երկու մասի բաժանված պահում։

Ավանդությունը տալիս է նաև Տարոն անվան ծագման պատմությունը։ Նոյի որդի Տարբան հորից բաժանվելով իր բազմանդամ ընտանիքով գալիս է դեպի ափին բնակություն հաստատում և իր նոր բնակավայրը կոչում Տարոն։

«Ընդարձակ դաշտում,— գրում է Կ. Սասունին,— հարյուրավոր ավաններ ու գյուղեր, ծերացած ուղտերի նման, չոքած Մեղրագետի և Արածանիի արծաթափայլ ողնաշարին, առատության և կենդանության ծուխ են արտաշնչում. .»։

Մեղրագետ. սկիզբ է առնում Նեմրութի ստորոտից Բազեշի խճուղու մերձակայքում Նորաշեն գյուղի մոտ. Նրա ջրերը բխում են գետնի տակից և բացառիկ համեղ են. Կա կարծիք, որ Մեղրագետը սնող ջրերը գալիս են Նեմրութի գագաթին գտնվող լճից։ Մերերն ավանդում էին. «Մուշից Բազեշ և Բազեշից Մուշ գնացողը միայն այն ժամանակ է հոգնում, երբ Մեղրագետի մոտով անցնելիս մոռանում է մեղրաջրից խմել»։

Մեղրագետը խաշխալտախ գյուղի մոտ թափվում է Արածանի։ Ոռոգման ամենաեռուն շրջանն էր։ Մենք Մեղրագետի մեղրաջուրը համտես անել չկարողացանք, քանի որ գետում ջուր գրեթե չկար և ավելի շուտ ճահճուտի, քան գետի տպավորություն էր թողնում։

Մանվել Միրախորյանը իր «Նկարագրական ուղևորություն ի Հայաբնակ գավառս» նոթագրությունում, որը լույս է տեսել 1884 թվին, գրում է. «Մշո ամբողջ դաշտում սփռված կա 100—110 հայ գյուղ... Այդ գյուղերից յուրաքանչյուրի տների թիվը 70 է։ Ունեն հազարավոր պանդուխտներ թե՛ Պոլսում և թե՛ Ռուսաստանում, ուր մեկնելու սովորությունը դժբախտաբար գնալով ավելի է տարածվում։ Գավառում հազիվ 8—10 քրդաբնակ գյուղ լինի...

Նրա բոլոր բնակիչները առհասարակ քաջառողջ, ուժեղ և առույգ են (այդ բանը պոլսեցիներին անծանոթ չէ) և արդյունք է երկրի պատվական կլիմայի»։

Վկայում է Լինչը. «Մշո դաշտում հայերը ստվար մեծամասնություն էին կազմում։ Համաձայն պաշտոնական վիճակագրության հայերի թիվն էր 36 հազար, իսկ մահմեդականներինը՝ 21 հազար հոգի»։

Մի այլ անգամ Լինչը գրում է. «Դաշտի գյուղերը մեծ մասամբ հայաբնակ են։ Նրանցից միայն մի քանիսում են քրդեր բնակվում։ Վստահաբար կարող ենք ասել, որ բուն դաշտում հայ տարրն է թվապես գերակշռում, իսկ քրդերը իշխող են դաշտի եզերքի գյուղերում՝ հարավի լեռնաշղթի երկայնքով (այսինքն Սասունում— Ս. Պ.)»։

Լինչից 50 տարի առաջ անգլիական հյուպատոս Քրենտը գրել է. «Մշո ամբողջ դաշտում չկա հայերի հետ խառը բնակվող որևէ մահմեդական։ Այս իրողությունը շատ որոշակիորեն ցույց է տալիս, որ այս երկրամասը ավելի շատ Հայաստանին է պատկանում, քան Քրդստանին։ Ակներև է, որ վրանաբնակ քրդերը եկվորներ են, իսկ նստակյացները սկզբում պատկանել են թափառաշրջիկ ցեղերին»։

Խասգյուղի մասին Լինչը գրում է. «Սա հայկական գյուղի տիպար է, տները նմանվում են մրջնարների։ Խասգյուղում կա ոչ պակաս, քան 300 տուն, երկու կանգուն եկեղեցի... Բայց դպրոցը փակված էր կառավարության հրամանով և 100 գյուղացուց միայն մեկը կարդալ գիտեր»։

Իսկ ահա թե ինչ է գրում Ինճիճյանը. «Հայ գյուղերի (Մշո դաշտի— Ս. Պ.) բնակչությունը խիստ նվազել է։ Օրինակ, Խասգյուղում առաջ 400 տուն էր և Հացիկը, որին քրդերը Խասիկ են կոչում, որտեղ է Ս. Մեսրոպի եկեղեցին ու գերեզմանը։ Մինչև այսօր այդ եկեղեցում են աղոթում ու երդվում շրջակայքում բնակվող քրդերն ու եզդիները, ասելով՝ Զիարաթել Խասիկ և նույնիսկ նվերներ են բերում»։

Այս երկու հեղինակների վկայություններից հետևում է, որ 13 տարվա ընթացքում (1880—1893 թթ.) Տարոնի գյուղերի հայ բնակչության թիվը կրճատվել է մոտ 200 հազարով, իսկ մահմեդականների թիվը աճել է մոտ երկու անգամ։

Նրանց վկայություններին պետք է որոշ վերապահումով մոտենալ, բայց իրականությունն այն է, որ սուլթանական քաղաքականությունը հայերին իրենց հայրենիքից դուրս էր մղում ու տեղ ազատում մահմեդական ազգաբնակչության համար։ Մի թուրք սպա, որը 1915 թվին թուրքական բանակի կազմում եղել է Տարոնում, գրում է. «Մշո դաշտում սկզբում եղել է 600 գյուղ, յուրաքանչյուրը 200—300 տնով և բոլորն էլ լի հայ բնակչությունով։ Նրանց սպանողներն արդեն սպանվել են..., իսկ փախչողներն ապաստանել են ձյունոտ լեռներում։ Այսօր Քոռ Հուսեյին փաշան սպանել է 40—50 հայ, որոնք կրակ են բացել մեր վրա։ Էշրեֆի հրոսախումբն (չեթեներն) էլ մեծ անձնազոհություն դրսևորեց։ Այնպես որ Ախլաթը դիակներով (հայերի— Ս. Պ.) ծածկված ենք թողնում թշնամուն»։

* * *

... Երևում է Մուշ քաղաքը։ Նա տեղադրված է բլուրների փեշերին, Կուրտիկի ստորոտում։ Հիասթափությունը կատարյալ է։ Մի անհրապույր, խղճուկ, կեղտի մեջ կորած, բացառիկ անճաշակ կառուցապատված ողորմելի գյուղաքաղաք։ Թուրքերը հին Մուշը քանդել են, ավելի ճիշտ ավերել են, իսկ իրենց կառուցածներով էլ այլանդակել են այն։

Մուշը որպես քաղաք ճարտարապետական ու կառուցապատման առումով երբեք մեծ հրապույր չի ունեցել։ Դա հետևանք է այն բանի, որ միշտ էլ նրա վրա ավելի ուժեղ է սեղմվել բռնակալի կրունկը։ Անցյալ դարի վերջերին ճանապարհորդներից մեկը գրել է. «Քաղաքը բռնված էր խուճապով... Մենք այն շնչում էինք օդի հետ որպես կործանարար խանդ, անասնական կիրք։ Մղձավանջը համառորեն հետապընդում էր, չորացնում մարդուն, նրա կյանքը քայքայելով, ինչպես ժանգոտված անպետքություն... օդը ասես հագեցած է գորշ տեսիլքներով, ուրախությունը սպանված է, արևը սև է, կոկորդը չորանում է, հոգին բզկտված է»։

Այնուամենայնիվ կառուցապատման առումով Մուշը հետ է գնացել, ոչնչացվել են նրա բոլոր յոթ եկեղեցիները, հայկական գերեզմանոցները, այդ թվում նաև Սաչկի Դուրանի Կողու թաղի գրեզմանատունը, որտեղ կողք-կողքի պառկած հավերժական զրույց են անում Գևորգ Չաուշն ու Սպաղանցի Մակարը։ Այլևս անհնար է գտնել նաև հայդուկապետներ Ռուբենի, Գուրգենի, Տիգրանի և այլոց գերեզմանները։ Անհետ կորածների թվում է Մշո վարժարանի շենքը, որին Թուրքերը կնքել էին «հեղափոխականների բուծարան» անունով։ Հիմնահատակ են արված հայկական թաղերը։ Թուրքական հին զորանոցի հետ միասին անհայտության գիրկն է անցել նրա կողքին եղած Գառներ գյուղը։ Քաղաքին չհասած նրա հարավային մասի հարթության վրա մինչև Սասունի պարիսպ հանդիսացող Կուրտիկի լեռնաշղթան տեղավորված են զորամասեր՝ ռազմական տեխնիկայի ամենատարբեր տեսակների խոշոր կուտակումներով։ Դա զարմանալի չէ, քանի որ Մուշից հարավ-արևմուտք ընկած Գենջի շրջանում Թուրքական բանակի ու քրդերի միջև տևական բախումներ

են գնում, որոնք հաճախ վերածվում են իսկական պատեազմի։

Խարբերդ, Մուշ, Աղր, Բայազետ, Հաքիայրի, Բիթլիս, Սասուն, Դիարբեքիր, Դերսիմ ու մի քանի այլ շրջաններ տարիներ ու տասնամյակներ շարունակ պատերազմական դրության մեջ են։ Թուրքիայի 700 հազարանոց բանակի կեսը այս շրջաններում է գտնվում։ Բոլոր բնակավայրերում՝ զորք, իսկ վարչական կենտրոններում ուժեղ կայազորներ կան։

Մուշ քաղաքի բնակչության կազմում կատարված փոփոխությունները ևս ենթարկված են նույն օրինաչափությանը, ինչը հարյուրամյակներ շարունակ տիրապետող է եղել ամբողջ Արևմտյան Հայաստանում։ Ինճիճյանի վկայությամբ 19-րդ դարի սկզբին Մուշում կար 8000 տուն։ Եթե ընտանիքի անդամների միջին թիվը նույնիսկ հինգից չանցներ, ապա ստացվում է 40 հազար բնակիչ, որը խիստ անհավանական է։ Հավանաբար այստեղ ևս «տուն» բառը օգտագործված է «բնակիչ» բառի փոխարեն։ Ինճիճյանը գրում է, որ քաղաքի բնակիչների մեծամասնությունը քրդեր էին։ «Նախկիններում,— շարունակում է նա,— մեծ թվով հայեր կային, իսկ այժմ նրանց թիվը շատ է քչացել և բնակվում են քաղաքի հինգ թաղերում»։

Անգլիայի հյուպատոս Թեյլորը 1868 թվին այցելել է Մուշ։ Նա քաղաքի բնակչությունը հաշվում է 13 հազ. հոգի, որից վեց հազարը՝ հայ։

Մ. Միրախորյանը գրում է, որ 70-ական թվականներին Մուշ քաղաքում կար ընդամենը 2500 տուն, որից 1000-ը հայերինն էր, իսկ մյուսները՝ թուրքերին ու քրդերին։ Հայերն ունեին հինգ եկեղեցի ու հինգ վարժարան։

Դրանից 10 տարի անց Լինչը գրեց. «Մուշի իսլամ մեծամասնությունը գրեթե ամբողջությամբ քրդական ծագում ունի...

Անկարող եմ քաղաքի մասին վստահելի վիճակագրություն տալ, բայց տպավորությունս այն է, թե մոտ 20 հազար բնակիչ ունի։ Ս. Կարապետի վանքում վստահեցնում էին, թե Մուշ քաղաքն ունի մոտ 7000 տուն, որից 5000-ը՝ իսլամ, 1800-ը՝ հայ»։

Մեջբերումները համադրելով հավանական թվեր կարող են

լինել. քաղաքի ազգաբնակչության ընդհանուր թիվը՝ 1800 թվականին եղել է 8000, 1868-ին՝ 13 հազար, 1880-ին՝ 15 հազար, 1893-ին՝ մոտ 20 հազար։ Հայերի թիվը՝ 1800-ին՝ 3000, 1868-ին՝ 6000, 1880-ին՝ 6000, 1893-ին՝ 5000։ Եթե 1800 թվին հայերը կազմում էին քաղաքի բնակչության մոտ 40 %-ը, 1868 թ.՝ 45 %-ը, ապա 1880 թ.՝ 40 %-ը և 1893 թ.՝ միայն 20 %-ը (թվերը մոտավոր են)։ Այսինքն, միայն 19-րդ դարում քաղաքի հայ բնակչության թվաքանակային տեսակարար կշիռը փոքրացել է երկու անգամ։

Ինչ վերաբերում է մեր օրերին, ապա Մուշում հայ չկա և հիմնականում քրդեր են բնակվում։ Նրանց մեջ փոքր չէ այնպիսիների թիվը, որոնց երակներում հայի արյուն է հոսում։ Մեզ մոտեցան մի քանի քրդեր, որոնցից մեկի մայրը, իսկ մյուսի տատը հայ են եղել։ Հայոց ողբերգությունն այս շարունակությունը ևս ունեցել է՝ քրդերն ու թուրքերը հայ տղամարդկանց սպանել են, իսկ գեղեցիկ կանանց ու աղջիկներին կնության վերցրել՝ հանուն իրենց ցեղերի գեղեցկացման ու մտավոր կարողությունների զարգացման։

Այդ կիսահայ քրդերի մեջ մեծ ջերմությամբ էին մոտենում, իրենց ծառայություններն առաջարկում, բայց նաև զգուշանում էին, որ հանկարծ իրենց այդ վարմունքը աչքի չզարնի։ Մուշում մեզ ուղեկցելու համար ոստիկաններ կցեցին՝ պատճառաբանելով մեր կյանքի անվտանգությունը պաշտպանելու անհրաժեշտությունը։ Ոստիկաններին խնդրեցինք տանել Առաքելոց վանք։ Նրանք սկզբում չհասկանալ ձևացրին, հետո թե այս կողմերում վանքեր չկան, որ վերջին վանքը ավերվել է մի քանի տարի առաջ ոսկի փնտրողների կողմից։ Այդ պահին մոտենում է հայ մոր ծնունդ մի տղա ու ասում՝ դրանց մի հավատացեք, վանքը այս վերևում է, ոստիկաններին ճամփա դրեք, ես ձեզ կուղեկցեմ։ Սակայն ոստիկաններին «ճամփա դնելը» հեշտ չէր։ Նրանք մեզ, թե Առաքելոց վանքի ճանապարհը անցնում է Մուշի մերձակայքում գտնվող մի ինչ-որ ֆաբրիկայի տարածքով։ Գնացինք։ Ֆաբրիկայի պահակն «ասաց» թե վանքին հասնելու համար պետք է մեկ ժամ մեքենայով և այդքան էլ ոտքով գնալ։ Խոսքը Մարաթուկի վանքի մասին էր։ Ոստիկանը քաջ գիտեր, որ մենք ի վիճակի չէինք Մարաթուկին հասնել։ Խոսակցու-

թյանը խառնվեց մի կողմնակի անձնավորություն, որը, թե դուք սխալ եք եկել, Առաքելոց վանքի ճանապարհը Մուշ քաղաքի միջով է անցնում։ Գնացինք։ Նա ցույց տվեց մի պարիսպ, թե սա է վանքը։ Ոստիկանը նրա հետ «աշխատել էր»։ Բայց որ դա վանքը չէր, պարզից էլ պարզ էր։ Այն կարող էր լինել վանքի պարիսպի մի հատվածը և ոչ ավելին։ Երբ հուսահատված հետ էինք դառնում, խմբի անդամներից մեկը ճչած. «Վանքն այնտեղ է»։ Շուտ եկանք ու քիչ վերևում տեսանք Առաքելոց հռչակավոր վանքի կիսավեր գմբեթները։ Այդ նրա մասին են գրել. «Լեռների անդորրության մեջ, բազկատարած աղոթում է Թարգմանչաց կամ Առաքելոց (Ս. Ղազարի) վանքը։

Նա հայ գեղեցիկ դպրության պսակի ադամանդյա ակունքն է, անուշ հովը Ծիրինկատարից և Սասունի լեռներից շնչշնչալով օրորում է անտառի եղևնիները, որոնց միջից վանքի շողակաթ գմբեթը բացխփիկ է խաղում։ Կրոնի տաճարից ավելի հանճարի խորհուրդ է նա։ Ծնսի հետ այնտեղ բանաստեղծություն էր մշակվում և խաչի տեղը գրիչն է իշխել։ Նրա գրանիտե խաչքարերի տակ հանգչում է մեր մտքի դասական մշակների մեծ հույլը, որոնք մեծ համբրին՝ հայ ժողովրդին ձայն են պարգևել մեր գրական լեզուն կերտելով։ Այնտեղ են թաղված Դավիթ Անհաղթը, Մամբրե Վերծանողը, Ղազար Փարպեցին, Մովսես Խորենացին և ուրիշներ»։

Լինչը գրում է. «Խոր և լայնատարած հովտի երկժանիքի միջով գնում էինք, երկժանիք, որը կազմել էին երկու լեռնաշղթաները։ Այս ձորի գագաթին, լեռնալանջի վրա հիացանք հռչակավոր Առաքելոց վանքի տեսքից, որը պարսպապատ էր և ուներ կոնաձև գմբեթ։

Վանքը իշխում է անսահման տարածության վրա»։

Իսկ այսօր նրա գրանիտե պարիսպները խորտակված են, գերեզմանները քարուքանդ արված, վանքն ավերակի է վերածված։ Լույսի ու լուսավորության տարածող կիսամեռ այդ նահապետին խուսափում են մարդկանց, և առաջին հերթին «դրսից եկածներին» ցույց տալ, քանի որ վանքի առկա վիճակը խայտառակության ու ամոթի մի նոր խարան է ավելացրել. «եվրոպականացած» թուրքերի դեմքին։

Մուշում մեկ անգամ չէ, որ հիշեցի Լինչին։ Ահա թե նա ինչ է պատմում այդ քաղաքում իր հետ կատարվածի մասին. «Քիչ անց ոստիկանապետը եկավ... Հաղիվ բարևել էր, երբ նրա քնաթաթախ աչքն ընկավ իմ լուսանկարչական գործիքի վրա։ Հարցրեց, թե տուփի մեջ ինչ կա։ Լուսանկարելու մեքենա է... Բայց սուլթանը հրովարտակ տվե՞լ է ձեր տեսածները նկարելու վերաբերյալ։ Արգելվում է նկարել առանց այդ հրամանի։ Ստիպված համակերպվեցինք...

Ո՞ւր գնալ։ Գնանք պետական վարժարանը... Մեզ ասացին թե շենքը վերանորոգվում է և ավերակ վիճակում է, որ իրականում նման հաստատություն նույնիսկ գոյություն չունի։ Լավ, ուրեմն գնանք բերդի ավերակները տեսնելու։ Պատասխանեցին, թե այս կողմերում բերդ չկա։ Լավ, գնանք այնտեղ, որտեղ նա ժամանակին կանգնած է եղել։

Գնացինք։ Հին բերդի ավերակները խոտերի մեջ ցիր ու ցան թափված էին։ Քարը քարի վրա չէր մնացել։ Քարերի մեծ մասը տարել էին այս կամ այն շենքը կառուցելու համար։

... Հանդիպում ենք հայ քահանայի... նրան հարցնում ենք թե Մուշում քանի եկեղեցի կա։ Պատասխանում է, թե յոթ եկեղեցի կա, մինչդեռ ոստիկանապետը ասել էր չորսը։

Ոստիկանը քահանային քրդերեն ինչ-որ բաներ է ասում և խեղճ հոգևորականը գունաթափ է լինում ու ասում, որ ինքը սխալվել է, չորս եկեղեցուց ավել չկա։ Ոստիկանապետից խնդրում եմ, որ ինձ տանի Միացյալ ընկերության վարժարանի ուսուցչի մոտ... Նա պատասխանեց, թե ուսուցիչը քաղաքից բացակայում է և վարժարանն էլ արձակուրդների պատճառով փակ է։ Տարակույս չկա, հրամայված էր, որ բոլոր վարժարանները փակվեն։ Ահա Մուշից ձեռք ձգած տեղեկությունները մեր այնտեղ անցկացրած կարճ ժամանակի ընթացքում։ Մենք ոչ միայն լրտեսվում էինք, այլև զբրկված էինք ամեն տեսակի վայելքներից...

...Մուշում ոչ մեկի հետ հաղորդակցվել չկարողացանք։

...Ի՞նչ անօրինակություններ էին գործել, որ ուզում էին թաքցնել։ Մթնոլորտում տիրապետում էր ահաբեկումներից ամենասոսկալին։ Օդի հետ այն մենք էլ ծծեցինք։ Դա նախանձի նման հյուծող կիրք է, հալածող, մաշեցնող ուրվական,

որ ժանգի նման նստում է կյանքի վրա։ Ահաբեկման այս տևական վիճակը հասարակական երևույթներից ամենաահավորն է։ Օդում, ուրվականներ կան, զվարթությունը մեռած է, արևը սև է, բերանները՝ չորացած, մտորումները՝ ողորմելի։

... Ախտը խրոնիկական է դարձել և այնքան սովորական է, որ բնակիչներն այլևս անզգա են իրենց վիճակի հանդեպ»։

Բռնատիրական հոգեբանությունը շատ ավելի կենսունակ է, քան նրա կրողները, իսկ ժողովուրդներ կան, որոնք այդ հոգեբանությունից ազատվել երբեք չեն կարող, որովհետև այն տիրապետող է եղել նրանց ամբողջ պատմության ընթացքում։ Թուրքը զայրացած է, թե զվարթ տրամադրությամբ պաշտոնականություն, թե սիրալիրություն է դրսևորում, միևնույնն է նրա ներսում բռնության այդ հրեշն է նստած, որը դուրս է ժայթքում ամեն մի պատեհ առիթով։

Ինչևիցե...

Օրը մթնում էր։ Տոպրակով հող ու քար վերցրեցինք ու գլխիկոր հեռացանք Մուշից։ Արդյունքում, Լինչի նման մենք էլ ոչ միայն Սասունը, այլև, ինչպես հարկն է, Մուշը չտեսանք։ Իսկ տեսնել անպայման պետք է և անպայման նորից պիտի գնալ։

Ինձ համար միշտ հանելուկ է եղել, թե ինչու սասունցիները Արևելյան Հայաստանի բնակության համար շատ հարմար վայրերը թողած, բարձրացել են Արագած ու կծկվել նրա փեշերին։ Միայն զովությա՞ն համար, զով էր նաև Գորիսը, բայց նրանք այնտեղ չմնացին։ Սառնորակ աղբյուրների՞ համար, այդպիսիք կային նաև Սևանի ավազանի շրջաններում, բայց նրանք այնտեղ էլ առագաստ չձգեցին։ Ուրեմն ո՞րն է պատճառը։

Երբ մեր մեքենան ուղղություն վերցրեց դեպի արևելք՝ Ախլաթ, հուսահատ հայացքս շուռ տվեցի աջ՝ Սասունի կողմը և ինձ մի պահ թվաց թե անցնում եմ Երևան—Գյումրի խճուղու Ուշան—Թալին հատվածով։ Պատկերը կատարելապես նույնն էր՝ Արագածի ու Սասունի լեռնաշխարհի տեղադրությունն ու ռելիեֆի ուրվագիծը գրեթե նույնանում է։ Սասունցին Արագածի փեշերն էր բարձրացել իր տունը վերադառնալու պատրանքով։

Իսկ ես երկար նայում եմ Սասունին ու մտովի ոտքերս գնում են հայացքիս հետևից։ Մոշ քաղաքից բարձրանում եմ Թարգմանչաց վանքից ոչ ավել, քան մեկ կիլոմետր արևմուտք ընկած, ու խճուղուց հազիվ նշմարելի, նեղլիկ ճանապարհով, Կուրտիկի վրայով շուռ եմ գալիս դեպի Շատախ, մտնում եմ Շենիկ, անցնում Սեմալ և առաջ գնալով իջնում եմ Ջայի հովիտը ու Բերբերի կիրճով մտնում Գելիեգուզանի հարթավայրը։ Այստեղ մի փոքր հանգստանում եմ ու նայում Սասունի համայնապատկերին։ Ներքևում, ինձնից արևելք, Առաքելոց վանքն է, որից սկիզբ է առնում Ծովասարը իր կրծքին ունենալով Դավթի ձեռքի սեղմոցից փոս գնացած Դավթի քարը, իսկ գագաթին՝ Սանասարի ու Բաղդասարի բերդն է։ Մարաթուկի փեշերին շինություն չի երևում, բայց ես գիտեմ չէ՞, որ վանք կա, բայց չգիտեմ հիմա նա ինչ վիճակում է։ Մարաթուկը, ինչպես Արագածի հյուսիսային գագաթը, լեռնաշխարհի համար պահող առանցքի դեր է կատարում։ Թվում է, եթե նա օրորվի կամ ընկնի, ամբողջ Սասունը գետնի տակ կանցնի։ Մարաթուկի կողքին Անդոկն է, իսկ նրանից արևմուտք երևում է Գեբինի չեչոտ լանջերը։ Մտնում եմ Գելիեգուզանի գյուղերը, հասնում Պետոյի տունը, շուռ գալիս տան հետին մասը, քայլ անում դեպի հորերն ու հանկարծ աչքիս առաջ է գալիս Սեմալի տերտեր Տեր-Հովհաննեսի բզկտված ու մաշկահան մարմինը. սարսափած հետ եմ ընկրկում։ Ոտներս ինձ տանում են գյուղի եկեղեցու ավերակը։ Փնտրում եմ Հլոյի Սատոյի, Աղբյուր Սերոբի ու Հրայր Դժոխքի գերեզմանները, որոնք ամփոփում են ժողովրդի նվիրյալների երեք մարմին ու երկու գլուխ։ Բայց գերեզմանաքարերը անհայտացել են, գերեզմանները գտնելը՝ դարձել անհնար։ Գելիից դուրս եմ գալիս, հասնում Սատանայի կամուրջ ու շարժվում հարավ-արևմուտք, իջնում եմ Սպաղանքի ձորը։ Ծունկի եմ գալիս Մակարի հիշատակի առաջ ու բարձրանում Տալվորիկի մյուս յոթ գյուղերը ու շուռ գալով դեպի Սասնա գետը, նրա հոսանքով գնում եմ արևմուտք։ Անցնում եմ Ահրոնք, մոտենում մեր գյուղին՝ Կապռնիին, հանդիպում Անթանիային ու շարժվում Փասուրի ուղղությամբ։

* * *

Երևակայությունս դեռ ինձ շատ հեռուներ կտաներ, եթե դեպի արևելք սլացող մեքենան հորիզոնին չբարձրացներ Ախլաթի հրաշքներին[1]։ Ահա Գրգուռը, ահա և Սիփանն ու Նեմրութը։ Զգացվում է ծովի մոտիկությունը, բայց նա մեզ երևվում է հանկարծակի։ Վանա ծովը կապույտ-կապույտ է։ Մեքենան շուռ է գալիս հարավ ու մենք մտնում ենք աշխույժ եռուզեռով լցված մի նավահանգստային քաղաք։ Դա Դատվանն է։ Ժամանակն ամենազոր է։ Նրա համար դժվարություն չի ներկայացնում փոխհարաբերությունները, ծավալները, պատկերացումները գլխի վրա շուռ տալը։ Դատվանը 55 հազար բնակիչ ունի, իսկ Վանի բնակչության թիվը 44 հազարից չի անցնում։ Եվ դա այն դեպքում, երբ Վանը աշխարհում հատուկենտ հավերժական քաղաքներից մեկն է, իսկ Դատվանը նույնիսկ 1904 թ. ընդամենը 80 ծուխ ունեցող մի փոքրիկ գյուղ էր։ Սասունի 1904 թ. ինքնապաշտպանական կռիվ-

---

1 Զեռքիս է Մ. Տամատյանի «Իմ հուշերից» գրքույկը։ Թերթում եմ և հանդիպում 1886 թ. Մուշից—Վան կատարած այցելության նկարագրությանը։

«...Բարձրացա Նեմրութ հրաբխային լեռան գագաթը, անցնելով Ուղտի քարերից և Գրգուռի ստորոտից։ Նեմրութը որ կողմից էլ դիտես միայնակ լեռան պատրանք է ստեղծում, բայց երբ մարդ բարձրանում է գագաթը, այն ժամանակ է հասկանում, որ աղեղնաձև լեռնաշղթայի մի կետի վրա է գտնվում։ Այդ լեռնաշղթան իշխում է ամբողջ Մշո դաշտի, Մեղրագետի, Ակի, Ռահվայի, Բաղեշի, Ախլաթի, Նաղուկ լճի, Ադլջևազի և Բուլանըխի վրա։ Աղեղնաձև գագաթների մեջտեղում կա մի մեծատարած խորություն, որն այս հանգած հրաբխի հսկայական բաժակն է։ Այդ խորխորատում կան աղյուսանման կարմիր քարերի կույտեր, որոնք հեռվից աղյուսակերտ գյուղերի տեսք ունեն։ Կան նաև այրված, ածխացած խոշոր քարեր, որոնցից շատերի երեսը ապակիացել է։ Այդ բաժակի մեջ կան աղբյուրի յոթ ակեր, որոնցից մի քանիսը ջերմուկներ (հանքային) են, իսկ նրանցից ամենամեծը մահիկաձև լիճն է, որից, ինչպես կարծում են, սնվում է Մեղրագետի առատաջուր Ակը։ Նեմրութի ստորոտների դիմաց, Ռահվայից մինչև Բուլանըխ, տարածվում են սև բազալտի ընդարձակ տարածություններ, որոնք բազալտի վեցանկյունաձև բյուրեղացման շնորհիվ, կանոնավոր ոալահատակված գետնի նմանություն ունեն։

Դատվանից ճամփա ելնելով, անցանք Ուրտափ գյուղը և այնտեղից՝ Թուխ գյուղը։ Երբ համանուն գետի կամուրջով անցանք, ինքնաբերաբար մակարերեցինք, որ Բաղեշի անիծյալ կուսակալության սահմանից անցել էինք մի այլ կուսակալություն, որտեղ կարծես ամեն ինչ մեզ ժպտում էր.

ներից հետո հայդուկները Անդրանիկի ղեկավարությամբ որոշում են հեռանալ լեռնաշխարհից ու անցնել Վան։ Թուրքական բանակը նրանց կրնկակոխ հետապնդում էր, իսկ Կուրավու և Շամիրամ գյուղերում լուրջ ընդհարումներ տեղի ունեցան։ Ի վերջո, հայդուկներին հաջողվում է ճարպիկ տեղաշարժերի միջոցով իրենց հետքը կորցնել ու հասնել Դատվան գյուղը՝ Ախթամարի կղզին անցնելու համար։ Սակայն երբ նրանք գյուղ մտան, այն դատարկ դտան։ Գյուղում ոչ ոք չկար։ Ի՞նչ է պարզվում։ Լսելով Շամիրամի կռվի մասին ու զգալով, որ վտանգը մոտենում է, Դատվանի ամբողջ բնակչությունը նստել էր նավակներն ու ծով դուրս եկել։ Օրեր շարունակ դատվանցիները անց են կացրել ջրի վրա։

Իսկ այժմ այդ փոքրիկ Դատվանը, շնորհիվ նրան, որ ընկած է առևտրական ուղիների խաչմերուկում, դեպի իրեն է ձգել մեծ թվով գործարար մարդկանց ու դարձել իսկական քաղաք։ Դատվանը բազմազգ քաղաք է, այնտեղ բնակվում

ճանապարհները կանոնավոր էին, գյուղերը կորած մեծատարածք ծառաստանների մեջ, նրանց գրեթե բոլորի անունները հայկական էին ու բնությունն արտակարգ գեղեցիկ։ Այսպես անցանք Վերին և Ներքին Խնձորգին գյուղերը և այնտեղից հասանք Փորխ, Կարճկանի Եղեգիս մեծ գյուղը, Վանիկ, Ընձաքիսար կամ Կապույտկող լեռը, Սուրբ Հակոբի վանքը, Ընձաք գյուղը, Նաննկանց գյուղը և այնտեղից՝ Նարեկ գյուղը, որտեղ այցելեցինք Ս. Գրիգոր Նարեկացի վանքը և գերեզմանը, ու, այնտեղից անցնելով, Նոր գյուղով հասանք Ախավանք կամ Ախթամարի վանքի Դրսի Տունը։ Այստեղ մեր հայացքի առջև պարզվեց հիանալի համայնապատկեր, որի մի կողմն անցնելով Մոխրաբերդից ձգվում էր մինչև Արճեշ, իսկ մյուս կողմը Արտոս լեռն է և նրա ստորոտի Ոստան մեծ գյուղաքաղաքը։ Իսկ մեր դեմը ծիծաղծավալ ծովում բարձրանում էին թե՛ Աղթամար, և թե՛ Առտեր կղզիները։ Վերջինս անապատ է և միայն վայրի թռչունների բնակարան։

...Հասանք Ոստան, որտեղ այցելեցինք Ջաղար Ս. Նշան, Եղիշեի գերեզմանը։ Հասնելով Հայոց Ջոր, անցանք Աթանանց գյուղից և հասանք Անգղ մեծ գյուղը, որտեղ այցելեցինք Անգղի Աստվածածնի վանքը, որի ընդարձակ պարտեզում Անգղ գետի ջրվեժն է։ Հաջորդ օրը բարձրացանք մի լեռնադաշտ, որտեղից արդեն նկատելի էր Վան քաղաքը, շրջապատված անհամար այգիներով։ Հասնելով հռչակավոր Արտամետ գյուղը, այցելեցինք նրա դալարազվարճ այգիները, խմեցինք նրա համեղ ջուրը և ճաշակեցինք Արտամետի կարմիր ու հոտավետ խնձորը։ Արտամետից Վան այլևս համփորդություն չէր, այլ հոգեպարար զբոսանք։

...այցելեցինք Վանա բերդի բոլոր մասերը, սեպագրերով շրջանակված և իրենց մեջ վիմափոր սենյակներ ունեցող քարայրները, վառոդարանը և

Ի արաբ՝ներ, քրդեր, թուրքեր, հրեաներ, պարսիկներ և այլոք. Չկան միայն նրա իսկական տերերը՝ հայերը։

Դատվանից մեր ճամփան շարունակվում է հարավ։ Նա մերթ մեզ մոտեցնում է ծովին, մերթ հեռացնում լեռներում մոլորված ճանապարհով, ի վերջո դուրս ենք գալիս մի հարթավայր, որտեղից հստակ երևում է ոչ միայն Ախթամարի կղզին, այլ նաև նրա վրա, իր արժեքը իմացողի հպարտությամբ, բազմած վանքը։

Սա Թուրքիայում մեր տեսած երկրորդ հուշարձանն է, որին թուրքերը պաշտոնապես ճանչում են որպես հայկական ու միաժամանակ օգտագործում տուրիստական նպատակով։

Ընդհանրապես հարկ է նշել, որ Վան քաղաքում ու նրա շրջակայքում հայկականության նշխարները ավելի շատ են պահպանվել, քան Արևմտյան Հայաստանի մյուս մասերում։ Քաղաքի լավագույն հյուրանոցները, զգալի թվով փողոցներ և այլն հայկական անուններ են կրում։ Այստեղ ևս, կղզու

բ՝ղդի ամենաբարձր կետի վրա գտնվող մինարի գագաթից դիտեցի շրջապատի համայնապատկերը... Նաև այցելեցի Վարագա վանք և Վերին Վարագից առաջին անգամ տեսա Մեծ և Փոքր Մասիսների ձյունապսակ գագաթները։ ... Վանից դեպի հյուսիս շարունակելով ուղևորությունս, անցնելով Ակոբի Քարից, այցելեցի Շահբաղի նշանավոր այգիների Ավանց գյուղը, որը Վանի նավահանգիստն է, և անցնելով Մարմեթ գյուղից, որտեղ տառեխ ձուկ են բռնում և համանուն գյուղից հասա Ամենաշատ գյուղը, այնտեղից՝ Կտուց անապատի Դրսի Տունը։ Կտուցի մենաստան անցա հետիոտն (քանի որ ծովի տեղատվության ժամանակն էր), իսկ վերադարձա, հանդիպելով մակընթացությանը, միայն նավակով հնարավոր եղավ անցնել ծովափ։ Կտուցից անցա Ալյուր գյուղ, շրջապատված այգիներով (Ալյուրի նշանավոր գինին), այնտեղից դեպի Փոքր Էջմիածին վանք ճանապարհի բարձունքից տեսա Արջակ լիճը՝ իրեն եզերող Խարակոնիս գյուղով, որտեղ Հայերի Միացյալ ընկերությունները մի վարժարան ունեին։ Փոքր Էջմիածին վանքը գտնվում է Վանա ծովի հյուսիսային ծայրին, որտեղ ծովը նեղանալով մի առանձին ծովախորշ է կազմում։ Վանքի հանդիպակաց ծովեզերքից բարձրանում է Սիփանի հսկա լեռը, որը դիտողի վրա պատկառանք է ազդում, նրան մի անգամ էլ հիշեցնելով հայկական առածը.

— Սիփա՜ն, առ զիս,
— Գնա՜ Մասիս
Բարձր է քան զիս։

Վանքից ճանապարհը շարունակելով դեպի Լիմ անապատ, անցա Հերհերին մեծ գյուղից Պայծառ օր էր և փոթորկահույզ ծովի վրա իրար հետևից բարձրացող ալիքների նման դալարուն շարքի հետևից աչքովում էին (Արա-

դիմացի ափին գործող մեծ ռեստորանը կոչվում է Ախթամար, ափից կղզի աշխատում են ուղերթային նավակներ, կըղզուր կառուցված ու հանդերձավորված են լողափ։ Այդ ամենը իհարկե արված է դրամ վաստակելու համար և քիչ էլ չեն վաստակում, որովհետև Ախթամարը Արևմուտքի զբոսաշրջիկներին ամենաշատ հետաքրքրող հուշարձանն է Թուրքիայի արևելքում։ Գներն էլ թանկ են. նավակով կղզի գնալ գալու վարձը 17,4 լիր է, մոտ 5 դոլար, իսկ հեռավորությունը ընդամենը մի քանի կիլոմետր է։

Բայց ինքը՝ վանքը հոգացողությունից դուրս է, չի օգտագործվում և անխնամ վիճակում է։

Երեկոյան հասանք Վան։ Քաղաքը վերակառուցման մեջ էր, հինն ամբողջությամբ քանդված է ու նորն է կառուցվում։ Ի տարբերություն Կարսի և Էրզրումի, Վանում հին թաղամասերը, այդ թվում նաև Այգեստանը, չեն պահպանվում։ Քաղաքն ամբողջությամբ է նորացվում և, ինչպես ինձ ասացին, եթե Դիարբեքիրը քրդերի քաղաքական ու ռազմական կենտրոնն է, ապա Վանը հավակնում է դառնալ նրանց տընտեսական ու մշակութային կենտրոնը։ Համենայն դեպս նա

ռատի) զույգ ձյունափառ գագաթները՝ արծաթազօծված արևի ճառագայթներով։

...Իշա Լիմ անապատի ծայրին, որտեղից նավակով այցելեցի վանք, եկեղեցին և մենաստանի ճգնավորների բացօթյա աղոթավայրը։ Վանքին մոտ է Ջանիկ մեծ գյուղը, որի միջով անցնում է ռազմական մի մեծ խճուղի և որը նշանավոր է իր աղահանքերով։ Տեսա Տիրամոր վանքը և վերջին հանգրվանս եղավ Բենդի-Մահու գետը, որը տառեխ ձկան արտադրության գլխավոր վայրն է։

...Վանա ծովի վրա տեսածս լավագույն տեսարաններից մեկը եղավ կրկներևույթը։ Մի առավոտ, երբ ճամփորդում էի ծովեզերքով, զարմանքով նկատեցի, որ ծովի վրա գտնվող առագաստանավերը հանդիպակաց ծովեզերքին բլուրների վրա նորից էին նկատվում, կարծես բլուրների լանջերով դեպի վեր էին քայլում։

Վասպուրականում այս թուցիկ ճանապարհորդությունս այնպիսի անջնջելի տպավորություն է գործել մտքիս ու սրտիս վրա, որ մոտ կես դար անց կարող եմ տեղը տեղին և անուններով հիշատակել իմ բոլոր տեսածները, միայն հիշողությամբ, առանց որևէ գրառման դիմելու.. Զուր տեղը չէ, որ թուրքերն ասում են «Աշխարհում՝ Վանը, անդրաշխարհում՝ հավատը»։ Դոկտ. Ռեյնոլդցն ասել է. «Մեռնելուց առաջ տես Վանը»։ Իսկ ես սիրում եմ ասել. «Վանի Այգեստանը Ելյուսյան (ըստ հունական դիցաբանության ստորգետնյա դրախտավայր) դաշտերի մանրանկարն է»։

արդեն հասցրել է էրզրումից խլել Անատոլիայի Շվեցարիայի տիտղոսը։ Իսկապես գեղեցիկ քաղաք է։ Պատմությունը ծաղրել գիտի։ Դեռ ոչ շատ վաղուց մասնագետները այն կարծիքին էին, որ «Բնության կողմից շռայլություն պարգևած այս տարածքում քրդերը ամուր բույն են հաստատել ու նրա համար ահավոր քաղցկեղ դարձել, որը արմատահան էր անում հողագործությունը, կազմալուծում առևտուրը»։ 100 տարի առաջ Վանի կազայում բնակվում էր 64 հազար մարդ, որից հայեր՝ 47 հազար, մահմեդականներ՝ 17 հազար, իսկ այժմ, ասում են, որ նրանում բնակվում են երեք թե չորս հայ ընտանիք, այն էլ քրդի անվան տակ։

Գնացի լճում լողանալու։ Մեզանում այն սխալ ըմբռնումը կա, որ երբ ասում են Վանա տառեխ, ապա այդ ձուկը ապրում է լճի մեջ։ Սխալ է։ Վանա լճում ոչ միայն ձուկ, այլ, ընդհանրապես, կենդանական աշխարհ գոյություն չունի, քանի որ լճի ջրերում մեծ տոկոս է կազմում սոդան, այնքան մեծ, որ օգտագործվում է նաև լվացքի համար, մանավանդ որ լիճը աղտոտված չէ, նրա ջրերը անաղարտ են մնացել։ Մեր ներկայությամբ մի շինարար քուրդ, որի աշխատանքային հագուստը ցեխի ու կրի մեջ կորած էր, ջուրը մտավ ու երբ դուրս եկավ, հագուստի վրա ցեխի ու կրի հետք անգամ չէր մնացել։ Ինչ վերաբերում է տառեխին, ապա նա բուն է դնում Վան թափվող գետերի գետաբերաններում։

Ես այս համառոտագրությունում նպատակահարմար չեմ համարում անդրադառնալ Վանա բերդին։ Դա առանձին ու ծավալուն խոսակցության նյութ է։

Վանում իմացանք, որ Մոսկվայում պետական հեղաշրջման փորձը ձախողվել է։ Մենք Վանը թողեցինք ու Հայկական պարին զուգահեռ ձգվող խճուղիով ճամփա ընկանք դեպի Կարս։ Վանա ծովից բաժանվելուց առաջ մի անգամ էլ վայելեցինք նրա ջրերում զովանալու հաճույքը ու հրաժեշտ տվեցինք։

Այս անգամ մեր ուղին անցնում էր նաև Մանազկերտով, որի հուշարձանների մասին եվրոպացի ճանապարհորդներից մեկը ասել է. «Հայ հանճարը ստեղծել է այս կառույցները, թուրք հանճարը՝ կործանել է նրանց։ Մանազկերտի շրջակայքում չկա մի տուն, որ կառուցված չլինի հին քաղաքի ավե-

բակների շինանյութերով։ Խճուղին դեպի հյուսիս էր տանում։ Թուրքեր գրեթե չկան։ Դրության տերը քրդերն են, որոնց հիմնական մասը նստակյաց կյանքի է անցել ու զբաղվում է նաև երկրագործությամբ։ Հողը շատ ու բերրի, ոռոգելի ջուրը, ինչպես ասում են «արտի գլխին»։ Հացը առատ է, ապրուստը՝ ոչինչ։ Բայց քուրդը դժգոհ է։ Նա հայրենիք է ուզում։ Այն, ինչ կատարվեց Իրաքի քրդերի հետ, այստեղ գենոցիդի վտանգի սառնություն մաղեց։ Քրդերը մեկ անգամ էլ համոզվեցին, որ հարատևել կարող են միայն սեփական հայրենիքում։ Բայց սխալվում են այն քրդերը, որոնք իրենց հայրենիքը փնտրում են Արարատի փեշերին։ Այստեղ նրանք ապագա չունեն։ Քրդի ապագան հարավում է, Տավրոսյան լեռներից այն կողմ, մինչև Մոսուլի ու Քիրկուկի նավթաբեր երակները։ Այնտեղ, միմիայն այնտեղ է հնարավոր Իրանի, Իրաքի, Սիրիայի ու Թուրքիայի քրդերի միավորումը մեկ ընդհանուր տարածքի վրա, մեկ ընդհանուր հայրենիքում։

...Իսկ մենք Կարսում ևս մի օր մնացինք։ Հետո... Հետո մեր Հայրենիքին հրաժեշտ տվեցինք ու Հայրենիք վերադարձանք։

* * *

Ու այսպես, անցնում ես Հայաստանի հյուսիսից հարավ, շրջում ես քաղաքներով ու գյուղերով և չես հանդիպում տեղաբնակ ոչ մի հայի։ Չար ոգի է անցել Առաջավոր Ասիայի այս փոքրիկ հողակտորի, մարդկային քաղաքակրթության օրրանի, հայ ժողովրդի հայրենիքի մի մասի, նրա գլխավոր հատվածի վրայով։ Այս տարածքների բնակիչը, ոչ միայն հին դարերում, այլ նույնիսկ ուշ միջնադարում, եղել է նրա միակ տերը՝ հայ ժողովուրդը։ Նույնիսկ 17-րդ դարի կեսերին, Դավեռնեի և Դուսնֆորի ուղևորության ժամանակ, Հայաստանում հայ ազգաբնակչությունը բացարձակ, ճնշող մեծամասնություն էր կազմում։

1772 թվին Մադրասում լույս տեսավ Մորերի «Տետրը», որում կա վկայություն , թե Մեծ Հայքում, Փոքր Հայքում և Թուրքիայի ասիական մյուս դավառներում բնակվում էր 4.644.000 հայ ընտանիք[1]։

---

[1] Այս դեպքում ևս ընտանիք բառի տակ պետք է հասկանալ բնակիչ։

Գրությունը նկատելի փոփոխության է ենթարկվում 18-րդ դարի վերջերին ու 19-րդ դարի սկզբներին։ Այդ ընթացքում հայերի թիվը կրճատվեց ու կազմում էր վերևում նշվածի 2/3-ը, այսինքն՝ 3,1 միլիոն մարդ։

Հայ ազգաբնակչության թիվը նվազելու և դրա պատճառների մասին իսկապես հանրագիտարանային տեղեկություններ է պարունակում Հ. Ղ. Ինճիճյանի վերևում արդեն բազմիցս հիշատակված «Նոր Հայաստան» աշխատությունը։

Նորից դիմենք նրա օգնությանը։

Ինճիճյանը մեկ առ մեկ պատմում է Հայաստանի գավառներում տիրող իրավիճակի մասին, մասնավորապես ծանրանալով բնակչության ազգային կազմի ու նրանում կատարված տեղաշարժերի վրա։

Հռոմկալե գավառի Էնհեշն գյուղի մասին նա գրում է, որ նրա «բնակիչներն ամբողջությամբ հայ ազգից են, որոնք ունեն քարակերտ և մեծ որձաքարերից կառուցված եկեղեցի, նրան կից զանգակատունը ևս քարաշեն է։ Իսկ Աբահ, Հաշնի, Քեշիշլիք իրար մոտ գտնվող երեք գյուղերի... բնակիչները խառն են։ Նրանց մի մասը 17-րդ դարում բռնությամբ թրքացել է, սակայն տարերայնորեն պահել է քրիստոնեական ծեսերը։ Ուծացածները թուրքերի նման են հագնվում, բայց նրանց առօրյա խոսակցական լեզուն հայերենն է... Տղամարդիկ, որոնք տարբեր տեղերում են լինում, կարողանում են տաճկերեն խոսել, իսկ կանայք, քանի որ միշտ տանն են, հայերենից բացի, գրեթե այլ լեզու չգիտեն։ Երեխաներին մկրտել են տալիս և նրանց վրա դնում են կամ նշանակությունից զուրկ և կամ հին նահապետների և մարգարեների անուններ, իսկ թուրքական անուն չեն դնում, սակայն 8—9-ամյա մանուկին թլպատել են տալիս։

Ամուսնանալիս գիշերը գնում են եկեղեցի և ստանում են քահանայի ամենայն օրհնությունը պսակի խորհրդին, սակայն հետո գնում են Ուրֆա և ամուսնանում թուրքական օրենքներով։ Բծախնդրորեն պահում են հայերի բոլոր պասերը՝ շաբաթկան և, մանավանդ, 40 օրվան ու առաջավորացը...

Կիրակի օրերին գնում են մերձակա հայկական գյուղերի

եկեղեցիները, պատարագ լսում, խաչակնքում դեմքերը, ծունկի են իջնում...»։

Ինճիճյանը պատմում է, որ Իսյան լեռնագավառում (Դիարբեքիրի նահանգ) «Կան գյուղեր, որոնց բնակիչները ամբողջությամբ հայեր են, բայց քչերն են հայերեն խոսում։ Նրանց խոսակցական լեզուն քրդերենն է։ ...Տարին մի անգամ Ս. Խաչի տոնին, բազմությամբ ուխտ են գնում Հազրոյի եկեղեցին..., ապա նաև. Ս. Առաքելոց վանք»։

Բաղեշի մասին նա գրում է. «Այս ընդարձակ գավառը, որ հնում կոչվում էր Սասնա ձոր... շրջապատված է դժվարանց լեռներով։ Բնակիչները մեծ մասամբ տարբեր ցեղերի քրդեր են։ Նրանց մի ցեղին անվանում են Աշոտունի։ Բայց այն գյուղերում, որտեղ հայեր են բնակվում (քրդերը) ընդհանուր առմամբ խոսում են նաև հայերեն։ Նրանք վրանաբնակ ու քոչվոր չեն։ Նստակյաց են։ Նախկինում այս գավառում հայկական հոծ զանգվածներ կային, սակայն բազմատեսակ հարստահարությունների հետևանքով ցրվեցին և այժմ քիչ են մնացել։ Նրանց լեզուն դժվար է ու շատ տարբեր այլ գավառների հայերի լեզվից։ Բաղեշի բնակչությունը նախկինում 25 հազ. տուն էր, իսկ հետագայում չդադարող խռովությունների և սաստիկ սովի հետևանքով, որոնք մոլեգնեցին վերջին 60—70 տարիներին, բազմաթիվ քաղաքացիներ տարբեր կողմեր ցրվեցին։ Այժմ մնացել է 5000 տուն, որից հայերինն է 1500-ը»։

Մի այլ հեղինակ Մակդոնալդ Քինները 1818 թվին գրել է, որ Բաղեշում բնակվում էր 12 հազ. մարդ, որի կեսը հայեր էին։ 1837 թ. Բրենդը բիթլիսաբնակ ընտանիքների թիվը տալիս է 3000 (15—18 հազ. հոգի, որի միայն 1/3-ն էր հայ)։ Լինչի այցելության ժամանակ, այսինքն 1890-ական թվականներին, Բաղեշն ուներ 30 հազ. բնակիչ, որից հայեր էին 10 հազարը։

Մ. Միրախորյանը գրում է, որ համաձայն ծերերի պատմածի, 1750-ական թվականներին Սղերդ քաղաքում բնակվել է 500—600 տուն հայ, իսկ 1880-ական թվականներին՝ միայն 230 տուն։

Տատիկ գավառի մասին գրում է. «Սրա գյուղերը քրդա-

ընակ ու հայաբնակ էին, որոնք հայերենը մոռացել և քրդերեն են խոսում, ուստի թվում է թե օտարներ են...»։

Բայազետի ընդարձակ նահանգը 5 գավառներ ուներ՝ Բայազետի, Դիադինի, Խաչուրի, Նահինի, Ալաշկերտի։

Ինճիճյանը գրում է. «Այս նահանգում կամ փաշայությունում բացի հայերից, բնակվում են քրդական զանազան ցեղեր, որոնց կոչում են սիբրկցի, մանըքցի, հաղարցի, բաղըլ-ցի, բեսհանցի և այլն, բայց ամբողջությամբ վերցրած կոչվում են սլիվանցի։ Բայազետի բոլոր գավառների բեկերը քրդեր են, բայց ժողովրդի մեջ կան նաև եզդիներ»։ Նա Բայազետ քաղաքի բնակչության թիվը նշում է 5000 տուն՝ մեծ մասամբ քրդեր և միայն 700-ն են հայերի տներ։ Դիադինում 500 տուն կար, որոնց մի մասը հայերինն էր, իսկ մի մասն էլ քրդերինը։ Ալաշկերտի գավառում գյուղեր շատ կան՝ 500, որոնցում բնակվում են հայեր ու սլիվանի քրդեր։ Թուրքակ Կալեում կար 1300 տուն, որոնք մեծ մասամբ պատկանում են քրդերին։ Հայերը փոքրաթիվ են։ Բատնայի վիճակում 30 գյուղ, կար, որոնց մի մասը քրդերինն էր, իսկ մի մասը՝ հայերինը։

Ինճիճյանը հետևյալ կերպ է նկարագրում Բասենի բնակչության ազգային կազմը. «Այս գավառը լի է հայ և քուրդ գյուղերով ու շինություններով։ Քրդերի մի մասը նախկին հայերն են։ Բասենի քրդերին Ք. Զելեբին անվանում է Բեսյան, որը քրդական ցեղի անուն է։ Բասենի գավառի կենտրոնն ու խոշոր գյուղաքաղաքը համարվում էր Հասան Կալեն, որի բնակչությունը 1700 տուն է՝ հիմնականում թուրքեր, իսկ հայերը փոքրաթիվ են»։

Անվիճելիորեն 16-րդ դարում և մինչև 17-րդ դարի կեսերը նշված գավառների և քաղաքների ազգաբնակչությունը առավելապես հայեր են եղել։ Ըստ որում հիշյալ դարի պատմիչների և աշխարհագրագետների օգնությամբ կարելի է տեղեկանալ, թե թուրքերն ու քրդերը ինչպես են աստիճանաբար բռնությամբ տեր դարձել հայերի բազմաթիվ գյուղերին և մարդաշատ ավաններին, հարկ եղած դեպքում նրանց տարագրելով, կոտորելով և կամ իրենց հավատին դարձնելով։

Մեծ Հայքի «բնակիչները,— գրում է պատմիչը,— զանազան ազգերի ներկայացուցիչներ են, բայց ամենաբազմաքա-

նակն ու հիմնական ժողովուրդներն հայերն ու քրդերն են։ Մինչդեռ այժմ, օսմանյան տիրապետության օրոք, հասարակ ժողովուրդը Մեծ Հայքում բնակված քրդերի պատճառով, նրա տարածքի մեծ մասը Քրդստան է անվանում՝ սկսած Երասխի ափերից մինչև Մեծ Հայքի հարավային ծայրագավառներն, սրտեղ Վանի փաշայությունն է։ Քրդստանը իր մեջ է առնում ամբողջ Բաղեշը, Մուշը, Բայազետի, Դիարբեքիրի փաշայությունները և Էրզրումի փաշայության մի մասը, Մանազկերտը և Տուժիկը։ Այսպիսով, այժմ Քրդստան ասելով պետք է հասկանալ Մեծ Հայքի մեծ մասը։ Քեաթիբ Չելեբին Քրդստանի սահմանը սկսում է Հուրմուզից մինչև Մալաթիա և Մարաշ»։

Ինճիճյանը նաև տալիս է քուրդ բառի մեկնաբանությունը. «Թվում է թե ածանցված է հին հայկական Կորդուք կամ Կորդ անվանից։ Ուստի պարսկական անուն չէ, ինչպես ոմանք ասում են։ Քուրդ կամ կուրդ նշանակում է կորովի կամ ուժեղ, քանի որ հնում Կորդվաց անունը ոչ միայն գավառ, այլև լայնարձակ սահմաններով տարածք էր Հին Հայաստանի կազմում։

... Առհասարակ քուրդ ազգը երկու մասի է բաժանվում՝ գյուղաբնակ և վրանաբնակ[1]։ Գյուղաբնակ են նրանք, ովքեր ունեն բնակության կայուն տեղ գյուղերում ու քաղաքներում, իսկ վրանաբնակ են նրանք, ովքեր չունեն մշտական բնակության վայր և այստեղից այնտեղ են շվում։ Դրանք քրդերենում անվանվում է ուլուս, որ նշանակում է շվող...

Գյուղաբնակների անունները մեծ մասամբ վերցված են նրանց բնակած գավառների անուններից, ինչպես, օրինակ, Խնուսցի, Մանազկերտցի, Մշեցի, Սասունցի, Բաղեշցի, Հաքիարիի, Չեղիրեի և այլն։

Քուրդ ցեղերի մի մասը, նշում են մի շարք պատմիչներ, սերված են հայ նախարարական տներից՝ Սելվանցիները Սելկունիներից, Ռոշկանցիք Ռշտունիներից և այլն։ Ինճիճյանն այս հարցում զգույշ դիրքորոշում է հանդես բերում։ Նա գրում է. «Սա մեզ հայտնի չէ։ Այն ինչ հայտնի է, հետևյալն

---

[1] Նստակյաց և քոչվոր։

է՝ որոշ տեղերում հայերը խառնված են քրդերի հետ և մեկ ժողովուրդ են դարձել...

...Վրանաբնակ քրդերը սովորաբար կոչվում են ոչ թե տեղանուններով, այլ ցեղանուններով, որոնք շատ են, ինչպես օրինակ, Բանջջնարցի, Սինանցի, Բատկընցի, Ճարխիանցի, Սիբբկցի, Հասնանցի, Բարաղկցի, Մրմանցի, Օմբրկցի, Շեղբրղնրցի, որոնք գարնանը տարածվում են Մշո լեռներում և Մեծ Հայքի այլ գավառներում և բաժանված են 12 տոհմերի։ Մլանցի կամ Միլլի մեծ ցեղը, որը հզոր է ու ըմբոստ, սովորաբար օթևանում է Միլլիարայի կողմերում։ Սրա ցեղերից է Մունքցի կոչվածը, որն, ասում են, սերված է Մամիկոնյաններից, ինչպես և Մենդեքլի ցեղը՝ Մանդակունիներից[1]։

Նրանց լեզուն ընդհանուր առմամբ երկուսն է. մեկը բնիկ քրդերի լեզուն է, իսկ մյուսը կոչվում է Զազա, որն առաջինից շատ տարբեր է, մինչև այն աստիճան, որ իրար չեն հասկանում։ Այս լեզուն տարածված է Դուժիկում, Խնուսում, Բալուում, Ճապղջրում, Վարդոյում, ինչպես նաև Մշո արև-

---

[1] Հայտնի է, որ Օհան արքեպիսկոպոսը գրել է 1300—1600 թվերի հայոց պատմությունը։ Ըստ նրա, ներկա քուրդ ցեղերից «ոշկոցիք» (Ռշտունի), մանրգցիք (Մամիկոնյան), սիլվանցիք (Սլկունի), բագրանցիք (Բագրատունի), փեջնացիք (Փնջիկ իշխանի սերունդ), խորոմանցիք (Խորխորունիք) պճնազարդ ուղեկցում էին Հայոց մեծ թագավորին։ Կարծես այդ անցած փառքի հիշատակն անջինջ պահելու համար, նրանք դեռևս պահպանում են հայկական սովորությունները։

Քուրդ ցեղերը մինչև 19-րդ դարի վերջերն էլ բագրանցիներին միր (իշխան), մանրգցիներին կտրիճ, քաջ, ոշկոթացիներին ազնվական տուն էին անվանում։

Խորոմանցիք, թվով 250 հազ. հոգի, թուրքերի ու հայերի ներկայությամբ բացահայտորեն խոստովանում էին, որ իրենք հայ են։ Նրանց լեզվում հայերենից շատ բան էր մնացել, պաշտում են Գ. Լուսավորչին, Տրդատին, Ներսես կաթողիկոսին։ Դրա փոխարեն անասելի լուտանք էին թափում Մուհամմեդի ու Ղուրանի հասցեին։ Այս ցեղը 1870—72 թթ. ցանկություն հայտնեց հայանալու, բայց կրոնավարությունն արգելեց։

Քրդերն ու թուրքերը նրանց սահմանների մոտով (Տավրոսից—Երզնկա—Կեսարիա—Զ. Ռուն) սարսափով էին անցնում, քանի որ խորոմանցիների համար դրանք թշնամի ժողովուրդներ էին, իսկ հայերն՝ ընդհակառակը, համարվում էին բարեկամներ։

«Երբ հյուր գնա մի որևէ հայ, դեռ գյուղ չմտած, նրան դիմավորում են հյուրընկալ ծերեր։ Մեկը վերցնում է անցորդի գավազանը, առաջնորդում

մրտյան գյուղերում։ Սրանք գիտեն նաև քրդերեն լեզուն, քանի որ նա պարզ է, խառնուրդ է զանազան լեզուների, բայց սերված է ռամիկ պարսկերենից։ Ինքը՝ քրդերեն լեզուն ունի զանազան բարբառներ... Այդ քրդերը կրոնով մահմեդական են՝ Շաֆիի ծեսին հետևորդ։

Վրանաբնակ քրդերը մի ազգ են, որոնք երբեք չեն զգում ձմռան խստությունը ու միշտ վայելում են գարնան քաղցր եղանակը, քանի որ ձմռանը նրանք սփռվում էին Բաղդատի անապատի տաք տեղերը..., իսկ ամռանը չվում էին... Մեծ և Փոքր Հայքերի հյուսիսային կողմերը, Փոքր Ասիայում սփռվում են նաև Փայասայի և Անթակիայի կողմերը։ ...Գյուղաբնակների մեծ մասի զբաղմունքը երկրագործությունն է, իսկ վրանաբնակներինը՝ իրենց անասունները, ինչը նրանց տալիս է ուտելիք՝ կաթ, կոգի և պանիր, դրանց ավելցուկը վաճառելով հոգում են հագուստի իրենց կարիքները... Ցեղերից շատերն անհաշտ թշնամի են և հաճախ իրար դեմ պատերազմում են»։

իր տուն... գավազանը դնում է մի պատվավոր տեղ և հյուրին հրավիրում բազմել օջախի գլուխը»։

Հ. Ղ. Ինճիճյանը Օհան արքեպիսկոպոսի ասածը հաստատում է. «Մեր Տիգրան 2-րդի որդի համանուն Տիգրանի իշխանության ներքո կորդիք անկախ ապրեցին, անցան դարեր և կորդիք դարձան քրդեր, իսկ հագարացոց արշավանքի ժամանակ մահմեդականություն ընդունեցին»։ Բագրանցիք նույնպես չեն ուրանում իրենց հայկական ծագումը և մինչև այսօր նրանց բեկերն իրենց որդիներին կոչում են Բագրտ (Բագրատ), Համզո, (Համո), Սմբտ (Սմբատ)։ Նույնիսկ Սեյլանը բագրանցի Համզո բեկի մոտ մի սուր է տեսել, որը տոհմական խորհրդանիշ էր։ Նրա վրա դրոշմված էին Աստվածաշնչի, Լուսավորչի պատկերները և Սաղմոսից մի տուն ոսկետառ փորագրությամբ։ Նույն բեկի մոտ կային մի քանի հայկական ձեռագրեր՝ Ավետարան, Ճառընտիր, Սաղմոս և այլն։

Մինչև 1540—60 թվերը Բուլանըխում (Հարքում), Բաղեշի, Սասունի, Մշո վրա իշխում էին հայ նախարարներ, բեյեր իրենց գավառներում, չնայած մահմեդականների հետ խառը՝ կիսամահմեդական էին։

«Հարս ուզելու կապակցությամբ նրանց մի քանիսի միջև թշնամություն է առաջանում, բանը հասնում է բացահայտ պատերազմի և Ռահուայի դաշտում, որտեղ արաբների դեմ կռվում ընկել էր Տիրան Մամիկոնյանը, Մշո Մամիկոնյան իշխանը հաղթանակ է տանում Փնջիկ իշխանի դեմ։ Վերջինս իր կրոնն ուրանում է և օգնություն խնդրում Աղձնիքի ընդ-

* * *

Հայ հետազոտողներից Հ. Բարսեղը՝ Վ. Սարգսյանը գրում է, թե գլխավորն այն է, որ «նախ և առաջ հիշյալ գավառներում մշտական բնակություն ունեցող քրդերն ու հայերը, բացի կրոնական տարբերությունից, ազգագրական առումով դարեր շարունակ նույն կենցաղն ու զբաղմունքը ունեին, այսինքն զբաղվում էին երկրագործությունով և տնային արհեստներով։ Երկրորդ, ինչպես հայերը քրդերեն, այնպես էլ քրդերը հավասարապես հայերեն էին խոսում։ Բացի այդ, հայերը և թե նստակյաց քրդերը, չնայած քրդերեն ևս գիտեին, բայց միմյանց հետ խոսում էին զազա բարբառով։ Իսկ ոչ միայն Մեծ Հայքում եղած քոչվոր քրդերը, այլև Միջագետքի ամբողջ քուրդ ժողովուրդը զազա լեզուն չէր հասկանում։ Մինչև այսօր հետազոտողներից և բանասերներից ոչ մեկը չի կարողացել տալ այս բարբառի, ինչպես նաև այն օգտագործող ազգաբնակչության ծագումը։ Քրդերի և քրդերենի կապադովկիական ծագման մասին թեզը (Մ. Վիվիեն դը Սեն

հանուր իշխան Մուհե ամիրայից։ Մի այլ հայ իշխան Մուշեղ Նաճաշը գործարքի մեջ է մտնում Շուղեք ամրոցի հետ։ Սրան հաջողվում է հաղթել։ Փնջիկը պարտվելով, լրիվ մահմեդականություն է ընդունում և սկսում է ասպատակել հայ գյուղերը։

Նաճաշի հարազատ ժառանգներից Ալի էֆենդի Նաճաշ-օղլին, որը Մշո սերիայում ծառայող էր, Ղազար վարդապետ Մարտիրոսյանին պատմել է, որ իր պապը ասում էր, որ «իմ հայ պապերից՝ Մամիկոնյան Մուշեղ, Նաճաշ, Մեծն Մուշեղ, Վարդան Պատրիկ, Մուշեղ սպարապետ իմ նախնիների մեջ նշանավոր են եղել, Մենք արժանացել ենք երկնային թագին, մեր սուրճն օրհնել է ձեր Լուսավորիչը, ձեր այն ժամանակվա թագավորը մեզ իշխան է հանձնել։ Մուշեղ-Նաճաշը, թեև ուրանում է իր կրոնը և ընդունում մահմեդականություն, բայց Մուշի իր տանը թաքուն մի փոքր մատուռ ունի... Մատուռում մի խաչքար կա, սեղան, որի մոտ՝ մի երկաթե դռնակով պահարան։ Պահարանում պահված է արծաթյա գլան... Նրա մեջ ամփոփված է մի անգին գանձ՝ ջիրճիզ-փեղեմբերին և ձեր թագավորի կնքած ֆիրման»։

Նրա բովանդակությունը հայտնի չէ, նա ամրացված է երկու կողմից։ Վրան միայն երեք տառ կա։ «Այդ ֆերմանով իմ մեծ պապին են տվել Սլիվանը, Սասունն ու Մուշը»։ Հայերեն սովորել եմ, բայց դրանք կարդալ չեմ կարողանում։

Մարտեն) հավանական չէ, քանի որ կապադովկերենը շատ ավելի վաղ էր անհայտացել, քան այդ վայրերում քրդերը կերևային։ Հետևաբար ավելի ճշմարտանման կլիներ ասել, որ նա կորդուքցիների հին լեզվից է մնացել (քանի որ քուրդ անունն իսկ Կորդին կամ Կորդուքին հոմանիշ է, թե լեզվական և թե աշխարհագրական տեսակետից)։ Հարկ է նաև նշել, որ զազայերենը հազիվ թե ընդհանրապես մեզ հայտնի քրդերենի բարբառ լինի, քանի որ, մի կողմից, նույնիսկ Մեծ Հայքից դուրս բնակվող քրդերն այն չեն հասկանում, իսկ մյուս կողմից, նա համընդհանուր ճանաչում ունեցող քրդերենի տարրերը իր մեջ չունի և հետևաբար չի կարող դրսից ներմուծված լինել հիշյալ գավառները։ Ուստի իմ կարծիքով նա Սասնո կամ Մշո և Խնուսի բնիկ ժողովրդական, այսինքն հայերեն, բարբառ է, որում հաճախ է օգտագործվում «Զ» տառը, ինչը կատարվում էր միտումնաբար այդ ժողովուրդի կրոնական ու քաղաքական ձգտումներն օսմանցիներից թաքցնելու համար։ Այո, ինչպես Հոռոմկլայի և Այնթապի մի քանի գյուղերի թրքացած հայերն, այնպես էլ հիշյալ գավառներում զազա լեզուն օգտագործող քրդերը կեսկեսներ էին հավանաբար, այսինքն, ըստ տեղի ու հանգամանքի, երբեմն ձևացնում էին, թե մահմեդական ծիսակատարությամբ են ապրում, որպեսզի ազատ մնային օսմանյան տերության ճնշումներից»։ Լինչը Մեծ Հայքի նստակյաց քրդերի մասին գրում է. «Մի օտար ժողովուրդ, որ անվանվում է քուրդ, բայց խոսում է զազա բարբառով և որի մեծամասնությունը դավանում է մի ազատ կրոն, որը քրիստոնեության ու իսլամության մեջտեղում է։ Սրանք Հայաստանի բարձրավանդակի ժողովրդի մեծամասնությունն են կազմում։

... Այսպիսի նստակյաց և զազայերեն խոսող քրդերի թիվը նշված գավառներում հասնում է 189—200 հազարի, առանց ղզլբաշ քրդերին հաշվելու, որոնք նույնպես քրիստոնեությունից ինչ որ բաներ ընդունել են, հարգում ու բարեկամ են հայերին։ Վրանաբնակները նույնպես, որոնք Մեծ Հայքում մշտական կայան չեն ունեցել։ Այս մահմեդականացած քրդերը, ինչպես նաև եզդիները, որոնց թիվը հասնում է 55—60 հազարի, մի կողմից, մահմեդական այլամերժ կրոնի ազդեցության տակ, իսկ մյուս կողմից, օսմանյան նենգ

պետության քաղաքական գրգռումներով է, որ հետզհետե թշնամական դիրք բռնեցին հայերի նկատմամբ։ Չնայած դրան, նրանք տանելի էին։ Սուլթան Համիդի հայահալած քաղաքականությունով և Համիդիե գնդերի կազմակերպումից հետո էր, որ նրանք, մոռանալով իրենց բարի դրացիությունը, այնքան աղետաբեր եղան հայերի համար։ Հետևաբար, մեծ հույս կա, որ օսմանյան անբարոյական տերության անկումով և հայ պետականության վերականգնումով ու կրթություն տարածելով՝ նրանք ևս (ինչպես երբեմնի թրքացած հայերը), գիտենալով իրենց վաղեմի ազգակցությունը՝ հարեն հայ ազգին ու տերությանը, իմանալով, որ նրանից միայն բռնության ճնշման հետևանքով են հեռացել։

... 3. Դերվիշյանի ներկայացրած 4.550 միլիոն հայությունից բացի, ունենք նաև 0,8-ից մինչև մեկ միլիոն խորթացած հայ զանգված, որոնք դեռ ապրում են և 200 տարվա ընթացքում կարող են նաև երկու անգամ բազմացած լինեն։ Մեծ Հայքի ու Փոքր Ասիայի գավառների լաց, հույն, թուրք և քուրդ խառնարանում, որոնցով կձևավորվի լեռնաշխարհի հայությունը, կազմված մոտավորապես 5.550 միլիոն մարդուց, որոնք, եթե միավորվեն, բավական են ոչ միայն լցնելու Նոր Հայաստանը, այլև թվաքանակով թուրքերի կրկնապատիկը լինել»։

Օսմանյան կառավարությունը հնուց ի վեր ձգտել է «իր պետության մեջ մահմեդականություն դավանող և թրքական բոլոր ազգերը իբրև թուրք ներկայացնել, միտումնավոր ձևով օսմանցիություն և մահմեդականություն տարբեր հասկացողությունները ներկայացնել որպես հոմանիշ և համազոր թուրք ազգություն հասկացությանը։ Մինչդեռ այդ անուններից առաջինը գալիս է օսմանից և լոկ պետականության անվանում է,իսկերկրորդը սերվում է Մուհամմեդից և զուտ կրոնական է, այնպես որ մոնղոլ կամ սկյութացի թուրքն անգամ մահմեդականություն ընդունելուց առաջ չուներ այդ մականունները»։ Դա արվում է օտարներին խաբելու համար և շատ հաճախ մեծ հաջողությամբ։

Հ. Բարսեղի վերջին մտքի հետ դժվար է չհամաձայնվել, իրոք, Թուրքիայում սկսած օսմանյան կայսրության հարյուրամյակներից, ստեղծվել էր վիճակագրության մի այնպի-

սի խաչբառ, որը կոչված էր անհնարին դարձնել այդ երկրի ազգային կազմն ու ժողովուրդների գոնե մտավոր թիվը։

Մինչև այսօր էլ Թուրքիայում գործածության մեջ են քրիստոնյաներ ու մահմեդականներ հասկացողությունները։ Որպես կանոն, քրիստոնյաներ բառի տակ նկատի ունեն հայերին, իսկ մահմեդականներ բառի տակ՝ երկրի բոլոր մահմեդականներին, անկախ նրանց ազգային պատկանելությունից։ Ըստ այդմ էլ Թուրքիայում քրիստոնյա և մահմեդական ազգաբնակչության թվական հարաբերակցություն ասելով հասկանում էին, մի կողմում, հայերի, իսկ մյուս կողմում, ամբողջ մահմեդական ազգաբնակչության թվերի փոխհարաբերությունը։ Այդ բանն անելը նրանց հեշտությամբ էր հաջողվում, քանի որ Անատոլիայում և, ընդհանրապես, պետության արևելքում քրիստոնյա բնակչության ճնշող մեծամասնությունը հայերն էին և, երբ նրանց թվին ավելացնում էին մնացած բոլոր քրիստոնյաների թիվը, միևնույնն էր, մահմեդականները մեծամասնություն էին կազմում։ Բնակչության թվաքանակի վիճակագրության հիմքում դնելով ոչ թե ազգային, այլ կրոնական պատկանելությունը, թուրքական տիրապետողներն ու պատմաբանները լուրջ առավելություն ստացան երկրի ներսում և, մանավանդ, արտասահմանում, գործին անտեղյակ անձանց, այդ թվում նաև զգալի թվով օտար մասնագետներին՝ «համոզելու», թե հայկական պահանջատիրությունը լոկ հայ ազգայնամոլության զավթողական մոլուցքն է։

Թուրքերի համար նշված մոտեցումը ոչ թե անցողիկ, այլ մշտական ու հիմնարար քաղաքականություն է։ Ինչո՞ւ։ Շատ պարզ պատճառով՝ թուրքերը մի քանի հազար հոգով կարողացան ստեղծել աշխարհակալ տերություն, որում իբենք միշտ՝ ընդհուպ մինչև կայսրության կործանումը, ազգային փոքրամասնություն են եղել։ Սակայն քիչ է ասել ազգային փոքրամասնություն։ Նույնիսկ 19-րդ դարի սկզբին հայերը թուրքերի նկատմամբ թվական գերազանցություն ունեին։ Էլ չեմ ասում արաբների, սլավոնների և հույների մասին։ Մինչև անգամ 20-րդ դարի սկզբին Օսմանյան կայսրության յուրաքանչյուր երրորդ բնակիչն էր թուրք, իսկ թուրքերը լավ էին հասկանում, որ այդ վիճակը կայսրությունն ուղիղ գծով տա-

նում է դեպի կործանում։ «Մեր Օսմանյան պետությունը,— գրում է Աբդուլ Համիդ 2-րդ սուլթանը,— տկարացել է իր գերաճումով։ Մենք հիվանդացել ենք մեր չափից ավելի բազմազգությամբ... Մենք այժմ նմանվում ենք ափերից հորդացած լեռնային գետի։ Հարկ չկա պատմա-իմաստասեր լինել հաստատելու համար, որ մեր թուրքական ազգային ուժը լոկ երևույթական է։ Մինչև Վիեննա առաջխաղացումից հետո, իրար հետևից մեր պետական կազմվածքից գավառներ պոկվեցին։ Դա շատ բնական էր։ Հարաբերական առումով մի այնպիսի փոքր ցեղ, ինչպիսին մերն է, անզոր է տևականորեն այս երկրները գրավված պահել»։

Սակայն այն ինչ զենքով էր ձեռք բերվել, դատողություններով չէր վերադարձվի, ընդհակառակն, մեծ ջանքեր են գործադրվում մի բուռ հող իսկ ձեռքից բաց չթողնել։ Թուրք տարրի թվական գերակշռություն ստեղծել ոչ թե տարածքներ կորցնելու, այլ հպատակ ազգերին մահմեդականացնելու և ուծացնելու, արտագաղթի մղելու և բռնագաղթելու, հալածելու և բնաջնջելու միջոցով։

Այս ռազմավարական խնդրի լուծման գործում շատ կարևոր տեղ էր տրվում նաև վիճակագրական կեղծարարությանը, որը հին ժամանակներից ի վեր դարձել է պետական քաղաքականություն։ Նաև այդ կեղծարարության շնորհիվ է, որ 70—80 տարվա ընթացքում 8 միլիոնանոց թուրք ժողովրդի թիվը ոչ մի այն հասավ 45 միլիոնի, այլև նա կազմեց Թուրքիայի ազգաբնակչության բացարձակ մեծամասնությունը՝ շուրջ 75—80 %-ը։

Թվում է, թե թուրքական քաղաքականությունն իր նպատակին արդեն հասել է և վերջապես ձեռք կբաշի վիճակագրական կեղծարարությունից։ Բայց ոչ և հազար անգամ ոչ։ Պատճա՞ռը։ Դա կամ իներցիայի ուժն է և կամ այն, որ Թուրքիան այսօր էլ աշխարհաշրջանի ամենախիտ բնակեցված երկրներից չէ։ Իսկ նրա շուրջն ու նրա հարևանությամբ մի քանի ժողովուրդներ Թուրքիայից իրենց հայրենիքը, կամ խլված տարածքներն են պահանջում։

Այսինքն պայքարը դեռևս ամենևին էլ վերջացած չէ...

Ինչ վերաբերում է քրդերի հայկական ծագման կապակցությամբ Բարսեղի ասածներին, ապա այն միայն հիպոթեզ է,

կարծիք, որը գիտությունից պահանջում է իր հաստատումը կամ մերժումը։

Հայերի քրդացման ու թուրքացման վերաբերյալ վերևում կատարված մեջբերումներից ու վկայություններից ոչ մի կերպ չի կարելի եզրակացության հանգել, թե Օսմանյան կայսրությունում հայերի թվակազմի նվազումն ու նրանց ձուլումը տեղի են ունեցել միայն 18—19-րդ դարերում։ Իրականում այդ գործընթացը նույն տարիքն ունի, ինչն ինքը՝ կայսրությունը։ Նոր դարաշրջանում նա պարզապես նոր բնույթ ստացավ և նոր խնդիրների լուծման նշանակություն ձեռք բերեց։

Աբդուլ Համիդը գրում է. «Չեմ զղջում, որ կորցրեցինք մեր արյունը ծծող բալկանյան երկրները։ Որքան արագորեն դեպի հետ կենտրոնանանք, (այսինքն Անատոլիայում հավաքվենք— Ս. Պ.), այնքան ավելի շուտ կկարողանանք հաղթահարել մեր տկարությունը և «հիվանդությունը»։ Եվրոպան պիտի տեսնի, որ անարգված «հիվանդ մարդը» (Թուրքիան— Ս. Պ.), նորից ներքուստ իրեն գտել է և դարձել «ուժեղ մարդ»։

...Մենք ուզում ենք ապրել Անատոլիայում... Փառք Աստծո, որ բոլոր կողմերից հալածված մեր ազգակիցներին ու հավատակիցներին մնացել է միայն այս վերջին ապաստանը»։

Իսկ Անատոլիայի արևելքին հարող շրջաններում ու բուն Անատոլիայի մի շարք նահանգներում ազգաբնակչության բացարձակ մեծամասնությունը հայեր էին։ Եվ ահա նույն տարածքում հայրենիք ունենալու համար իրար դեմ կանգնեցին հայն ու թուրքը։ Դրված էր ով ումը հարցը։ Ծայր աստիճան դժվար լուծելի մի խնդիր։ Ճիշտ է, պետական իշխանությունը թուրքերի ձեռքում էր, բայց նրանք սկզբում փոքրաթիվ էին ու փոշիացած Փոքր Ասիայի լայնարձակ տարածքներում։ Նրանք անզոր էին կայսրությունից դուրս քշել մոտ հինգ միլիոն հայի։ Հասկանալի պատճառներով (սեփական թվակազմի փոքրությունը, զարգացման ցածր մակարդակը և այլն), նրանց ամբողջապես ուծացնել ևս չէին կարող։ Չնայած այդ ուղղությամբ, ինչպես վերևում նշվեց, յուրջ ձեռքբերումներ ունեցան։ Տնտեսական, քաղաքական և ռազմական ճնշումներն ու բռնությունները խթանեցին նաև հայերի արտագաղթը, բայց այդ միջոցներն անզոր էին լուծելու

Հայաստանը հայերից լրիվ դատարկելու խնդիրը։ Պահանջվում էր գտնել հարցի լուծման այլ ուղիներ։ Եվ գտան։ Սկսեցին մեթոդիկ ձևով Հայաստան ներարկել մահմեդական տարրեր, մի գործընթաց, որ դարեր տևեց։ Նորից դիմենք Աբդուլ Համիդին. «... Մեր պետության մարդաթափուր գավառները լցնելու համար պետք է մի խելամիտ ներգաղթ կազմակերպենք... Անցել են այն ժամանակները, երբ մենք օտար կրոնների մարդակները ցցեցինք մեր սեփական մսերի մեջ։ Միայն սեփական ժողովրդին ու կրոնակիցներին կարող ենք հանդուրժել մեր պետության սահմաններում։ Պետք է ձգտենք մեծացնել թուրքական տարրի ուժը։ Պետք է հատուկ ծրագրով Բոսնիայից, Հերցոգովինայից, ինչպես նաև Բուլղարիայից մահմեդականության տարածման դեմ կանգնած հոսանքի առաջն առնենք։ Այս ներգաղթերով ոչ միայն ազգային ուժը կթուլանա, այլև կխամրի պետության ղեկավարությունը։ Պետք է հզորացնենք ռումելիի մահմեդական տարրը, բ։ յց նաև, մասնավորապես, Փոքր Ասիայում, քրդերին պետք է մեզ հետ նույնացնենք (այսինքն ձուլենք— Ս. Պ.)։ Իմ նախորդների ամենամեծ սխալն այն էր, որ մեր պետության եվրոպական մասի սլավոնական տարրի մահմեդականացման խնդիրն անտեսեցին։ Բոլոր դեպքերում դա դժվար էր։ Մակայն պետք է հույներին ու հայերին սիրաշահել, քանի որ մեր երակներում նրանցից շատ արյուն կա»։

Թվում է, թե մեր հարցադրման ու Աբդուլ Համիդի հրահանգի տրամադրության մեջ հակասություն կա։ Ոչ։ Բանն այն է, որ Արևմտյան Անատոլիան մահմեդական տարրերով՝ մուհաջիրներով բնակեցնելու գործը շատ ավելի ուշ սկսվեց, քան արևելյան շրջաններինը։ Սկսած 16-րդ դարից Հայաստանը հետևողականորեն ու անընդմեջ բնակեցվում էր քրդերով։ Այս գործում թուրքերն այնքան ջանադիր եղան, որ քրդերը դարձան լուրջ գործոն ու իրենց հռչակեցին այդ երկրի միակ տերերը. Հայաստանը վերանվանվեց, դարձավ Քրդստան։

Արդյունքում, եթե առաջներում Հայաստանի համար պայքարում էին երկու ժողովուրդներ՝ հայերն ու թուրքերը, ապա վերը նշված քաղաքականության հետևանքով ավելացավ նաև երրորդը՝ քուրդ ժողովուրդը։

Այսպիսով նույն հայրենիքին տիրանալու համար մահ ու կենաց կռվի բռնվեցին երեք ժողովուրդներ։

Այս նոր իրավիճակում օսմանյան կառավարողները վերանայեցին իրենց քաղաքականությունը, մանավանդ, որ ի հակադրություն Բ. Դռան ջանքերի, ամենևին էլ չէր բացառվում հայ-քրդական համագործակցությունը թուրքերի դեմ։

Շտապել էր պետք։ Եվ թուրքական տիրակալներն որոշեցին «դանդաղ մահացման»՝ թուրքացման և արտամղման, քաղաքականությունից անցնել եռանդուն ու վճռական գործողությունների՝ գործադրել հայերի ֆիզիկական բնաջնջման քաղաքականությունը։ Եվ հայը կոտորվեց։ Նա կոտորվում էր ամեն օր և ամենուրեք, կոտորվում էր «կողմնակի աչքի համար» աննկատելի։ Հետո եկան 1894—96, 1904 թվերի զանգվածային ջարդերը։ Հետևանքն այն եղավ, որ, եթե 19-րդ դարի կեսերին Արևմտյան Հայաստանում հայերը բացարձակ մեծամասնություն էին, ապա 1913 թվին նրանք կազմեցին միայն հարաբերական մեծամասնություն։

Փարիզի խաղաղության կոնֆերանսին հայկական պատվիրակությունների կողմից ներկայացված տեղեկանքում կարդում ենք. «... հայոց պատրիարքարանի կողմից 1882 և 1912 թվերին անցկացրած վիճակագրություններն իրար հետ համեմատելով, նկատում ենք, որ Թուրքիայում 1882 թվին հայերի թիվը 2,6 միլիոն էր, որից 1,68 միլիոնը բնակվում էր վեց նահանգներում, մինչդեռ 1912 թ. այս թվերը համապատասխանաբար կազմել են 2,1 միլիոն և 1,018 միլիոն», այսինքն հայ բնակչության բացարձակ թիվն այդ ընթացքում նվազել էր 500 հազ. հոգով։ Իրականում այդ նվազումն անցնում էր 700 հազարից և, եթե բնական աճն էլ նկատի առնենք, խոսքը գնում է 1,5 միլիոն ոչնչացված հայի մասին։

Այս «ուղղումների» հետևանքով 1914 թվին Արևմտյան Հայաստանում բնակվում էին 1,4 միլ. հայ, 447 հազ. քրիստոնյա այլ ժողովուրդներ, 943 հազ. թուրք, 785 հազ. քուրդ, 210 հազ. այլ ազգությունների մահմեդականներ։

Հայերին հասցված էր ծանր հարված, բայց հարցը դեռևս լուծված չէր։ Արևմտյան Հայաստանում նրանք շարունակում էին մնալ էթնիկական ամենաբազմամարդ տարրը։ Եվ 1915 թ. իրականացվեց արևմտահայության ամբողջական բնաջնջումը։

Այսպիսով, արևմտահայության վերացման գործընթացը պայմանականորեն ունեցել է երեք շրջան։

— 1770—1880 թվեր՝ արևմտահայության թիվը կրճատվել է երկու միլիոնով՝ 4,6 միլիոնից նվազել հասել է 2,8 միլիոնի։

— 1880—1915 թվեր՝ արևմտահայության թիվը կրճատվել է 700 հազարով (բնական աճի հետ միասին՝ 1,5 միլիոնով)՝ 2,8 միլիոնից հասել է 2,1 միլիոնի։

— 1915—1923 թվեր՝ արևմտահայությունը բնաջնջվեց՝ 2,1 միլիոնից մնաց 500—600 հազար, իսկ բուն Թուրքիայում՝ միայն 100 հազար մարդ։

Այսինքն, Արևմտյան Հայաստանի նկատմամբ հավակնություն ունեցող երեք ժողովուրդներից մեկը բնաջնջվեց՝ Հայկական հարցը լուծվեց թուրքական եղանակով։

Դրանից հետո ստեղծվեց միանգամայն այլ քաղաքական վիճակ, հայերի, թուրքերի ու քրդերի փոխարեն իրար դիմաց կանգնած մնացին միայն թուրքերն ու քրդերը։ Դեռ երեկ հայերի դեմ ընդհանուր ճակատ կազմած կրոնակիցները, առաջինների բնաջնջումից հետո, արդեն բացահայտորեն դարձան ոխերիմ թշնամիներ, որոնց միջև պայքարը վերջին 70—75 տարիներին չի դադարել ոչ մի օր և ոչ մի ժամ։ Քրդական հարցը Թուրքիայի աքիլլեսյան գարշապարն է, նրա առաջ ծառացած ամենածանր ու ամենավտանգավոր խնդիրը։

Այդ պայքարում, սակայն թե՛ թուրքերի և թե՛ քրդերի ուշադրությունը հառած է արևմտահայության ուրվականին և իրապես գոյություն ունեցող Հայաստանի Հանրապետությանը։ Նրանք քաջ գիտեն, որ Արևմտյան Հայաստանի միակ իսկական պահանջատերը հայ ժողովուրդն է։ Եթե քրդերը մտմտում են հայերի հետ ընդհանուր ճակատ կազմելու շուրջը, ապա թուրքերը համակ ուշադրությամբ հետևում են, որպեսզի նման ճակատի ստեղծումն անհնար լինի։ Այս գործում հայ-քրդական հարաբերությունների դրամատիկ ժամանակաշրջաններից մեր օրերին հասնող արձագանքը՝ քրդերի մոլեռանդությունը, նրանց աշիրեթապետերի ու բեյերի կաշառվածությունը թուրքերին մեծ ծառայություն են մատուցում։

Հայ-քրդական հարաբերությունների բնույթին ու նրանց հնարավոր դերին այսօր միանշանակ մոտեցում ունենալ հազիվ թե հնարավոր լինի, բայց դա Հայաստանի քաղաքագետներին ու գիտնականներին պետք է ոչ թե մեկուսացնի այդ խնդրից, այլ մղի լուրջ ուսումնասիրության ու քննարկման։ Ինչը դժբախտաբար չի արվում։ Մենք այդպես էլ չենք ուզում տեսնել, որ Հայաստանի սահմանների երկայնքով բնակվում է 22—25 միլիոնանոց մի ժողովուրդ, որը մեր աշխարհագրական շրջանում դարձել է ոչ միայն լուրջ, այլև, որոշ առումներով՝ նաև որոշիչ ուժ։ Այդ ժողովուրդը ձգտում է միավորման ու ինքնուրույնության, նրա հայացքը և ուժերն ավելի ու ավելի շուռ են գալիս դեպի հարավ՝ դեպի իսկական Քրդստանը և բացառված չէ, որ նա դառնա հայերի բնական դաշնակիցը։

Սակայն դա միայն հնարավորություն է, որը երբեք իրականություն չի դառնա, եթե Հայաստանը շարունակի չնկատել Քրդական հարցը, եթե նա նպատակադրված ու տևական աշխատանք չտանի այդ ուղղությամբ։

Հարկ է նաև նկատի ունենալ հետևյալը։ Կասկածից դուրս է՝ Քրդական հարցը մոտ ապագայում ինչ որ լուծում ստանալու է և անուղղելի սխալ ու նոր ողբերգություն կլինի, եթե Հայաստանի չեզոքությունից ու անտարբերությունից օգտվելով, այդ հարցը լուծվի հայերի և հայկական հողերի հաշվին։

Մենք պարտավոր ենք զգացմունքային մոտեցումներից անջրպետվենք, տքնաջան ջանադրությամբ հետախուզենք վաղվա օրը, ելնելով աշխարհի ու Մերձավոր Արևելքի քաղաքական իրավիճակներից, մշակենք արտաքին քաղաքականության հիմնահարցերն ու դրանց լուծման տարբերակները։

Անկախ Հայաստանի պայմաններում արտաքին քաղաքական կուրսին սիրողական մոտեցումն ու էժան պոլիտիկանությունը, պատահականությունների վրա հույս դնելը կործանարար է։

Ինձ համար պարզապես անհասկանալի է Հայաստանի այսօրվա պաշտոնական քաղաքականության մոտեցումները

մի քանի առանցքային խնդիրներին։ Գուցե այդ քաղաքականությունը ոչ այնքան սիրողական է, որքան կողմնորոշման ուղղությունը փոխելու ջանքերում հասարակայնությանը անորոշությունների մեջ խճճելու միտո՞ւմ։

Բաց եմ անում «Ազգ» թերթի 1992 թվի փետրվարի 5-ի համարը։ Իրար կողքի դրված են երկու ընդարձակ հոդվածներ՝ «Հայ թուրքական հարաբերություններ. ի՞նչ գնով» և ամերիկյան «Նյուսուիկ» շաբաթաթերթի փետրվարի 3-ի համարից արտատպված «Թուրքիայի կերպարը բոլորի մտապատկերներում» հոդվածները։ Դրանցից առաջինում ըստ էության շարադրված է Հայաստանի Հանրապետության այսօրվա դիրքորոշումը, իսկ երկրորդում՝ ամերիկյան մոտեցումները։

Նախ հայի կամ հայկական մոտեցման մասին։

«Մինչ Խորհրդային Միությունը,— գրում է թերթը,— ճակատագրական փոփոխությունների սեմին է գտնվում, Հայաստանը մի անգամ ևս Թուրքիայի հետ տևական հարաբերություն ունենալու անհրաժեշտության առջև է։ Իսկ Թուրքիայի քաղաքական ձգտումներն ու ցանկությունները բավական հստակ են։ ...Պատմական հավաքական հիշողությունը մեզ մղում է մերժելու որևէ հարաբերություն մի երկրի հետ, որը մեր դեմ ցեղասպանություն է իրագործել...

Բայց ժողովուրդներն իրենց գոյությունն ապահովելու համար առաջնորդվում են իրատես քաղաքականության տրամաբանությունով...»։

Հոդվածագիրն այս «գերխելոք» դատողություններին ճանապարհ հարթելու համար իր ժողովրդին դնում է պարզունակ զանգվածի տեղ, որը գործել կարող է միայն «մտավորական բանիմացների» նշած ուղիով։ Թող հայտնի լինի այդպիսիներին, որ հայերն, առանց նրանց «իմաստուն» խորհուրդների էլ, 1918 թվից սկսած, երբ հաստատվեց հայկական անկախ պետականությունը, ամենաեռանդուն միջոցների դիմելով Թուրքիայի հետ կանոնավոր հարաբերություններ ստեղծելու համար։ Ինչ վերաբերում է տնտեսական կապերին, ապա դրանք, նույնիսկ խորհրդային ժամանակաշրջանում, չեն խաթարվել։ Խոսքը գնում է Թուրքիայի հետ քաղաքական հարաբերությունների մասին։ Մեր ժողովուրդը դրան էլ դեմ չի եղել և նրա դժգոհությունն, ամեն անգամ, երբ թուրք-

խորհրդային հարաբերություններում բարելավում էր նկատվում, բացատրվում է ոչ թե դրանք մերժելու ցանկությամբ, այլ մի բնական և պատմականորեն հիմքեր ունեցող վախով, թե հանկարծ Անկարան ու Մոսկվան վարագույրի ետևում նոր գործարքի չգնան ի հաշիվ հայ ժողովրդի։ Թուրքիայից տարածքային պահանջներ չունենալու մասին ԽՍՀՄ կառավարության հայտարարությունները նման գործարքի դրսևորումներից են։

Բայց շարունակենք ընթերցել «Ազգը»։

«Թուրքիան ունի իր հեռավոր ու մոտավոր նպատակները։ Իբրև հեռավոր նպատակ, նա անշուշտ ուրախությամբ կցանկանար քարտեզի վրայից ջնջել Հայաստանը... Թուրքիան այսօր (սակայն) կարող է շահագրգռված լինել Հայաստանի հետ բարիդրացիական հարաբերություններ մշակելու... (Ընդգծումն իմն է— Ս. Պ.)»։

Ինչո՞ւ։ Որովհետև նա ուզում է մտնել Եվրոպական շուկա, իսկ դրան խանգարում են քրդերի նկատմամբ իրականացվող բռնությունները, Կիպրոսը բռնագրավված պահելը, հայկական ցեղասպանությունը չընդունելը և «Եվրոպային չհամապատասխանող իսլամական մշակույթ ունենալը»...

Եթե քաղաքական միամտություն ասածը գոյություն ունի, ապա սա այդ միամտության ամենանախնական դրսևորումն է։ Այդ դեպքում, ինչո՞ւ ԱՄՆ-ը կողմ է եվրոպական ընդհանուր շուկա Թուրքիայի մտնելուն, իսկ Եվրոպայի երկրները՝ դեմ։ Գուցե նրա համար, որ ԱՄՆ-ի համար նշանակություն չունե՞ն քրդերի, հույների ու հայերի հետ կապված վերը նշված խնդիրները, իսկ Եվրոպայի համար՝ ունե՞ն։

Այդպես չէ։ Պարզապես ընդհանուր շուկա Թուրքիայի մտնելը ԱՄՆ-ի շահերի վրա լուրջ ազդեցություն ունենալ չի կարող, իսկ եվրոպական պետությունների շահերի վրա նրա ազդեցությունն ակնհայտ է։ Դա Թուրքիայի տնտեսական հետամնացությունն ու նրա ազգաբնակչության ցածր կենսամակարդակն է։ Եվրոպան Թուրքերին խնամակալ լինելու ոչ մի ցանկություն չունի։ Դա Թուրքիայի տնտեսությունում ագրարային հատվածի գերակշիռ լինելն է, իսկ եվրոպական պետություններն իրենք են մշտական զգվոտոցի մեջ, թե ինչպես իրացնեն գյուղատնտեսական մթերքները։ Եվրոպան

չի մոռացել թուրքերի մինչև Վիեննա հասնելը և չի ցանկանում, որ նրանք նույն բանը նորից կատարեն այս անգամ սահմանները բացելու հետևանքով՝ խաղաղ ներթափանցման միջոցով։ Իսկ այդ ներթափանցումը միանգամայն հնարավոր է, քանի որ եվրոպական երկրները դադարել են ազգաբնակչության բնական աճ ունենալուց (խոսքը գնում է ծնունդի ու մահվան փոխհարաբերությանը), իսկ Թուրքիան և, ընդհանրապես մահմեդական աշխարհը պահպանում է աճի բարձր մակարդակ։ Այսօր արդեն մահմեդականների թիվը աշխարհում անցել է միլիարդից։

Ահա նույն կարծիքն արտահայտող մի այլ հեղինակի՝ Պ. Լիպարիտյանի մեկնաբանությունը։

Թուրքիան փորձում է իրավական պետություն դառնալ, միջազգային հասարակության մեջ ընդունվել։ Այդ պատճառով մեծ նշանակություն է տրվում այն հարցին, թե Թուրքիան ինչ վերաբերմունք ունի Հայաստանի նկատմամբ։ Դրա համար է, որ «իրենք էլ մոտավորապես նույն տրամադրություններն ունեն, ինչ որ մենք»։ Այսինքն՝ ուզում են բնականոն հարաբերություններ մշակել, սակայն կան պարագաներ, որոնք կարող են փոխել այդ մտայնությունը։ «Թուրքիայում առկա են ուրիշ տրամադրություններ, ըստ որոնց, հարաբերությունները նորմալացնելու համար... ինչ որ գին պահանջել մեր ճանաչման և մեզ ճանապարհ տալու համար։

... Մենք հայտարարում ենք, որ հարաբերություններ ստեղծելու համար ցեղասպանության պայման առաջ չենք քաշում, բայց դա չի նշանակում նաև, որ մենք ինքներս չենք ճանաչում այն և պիտի դադարենք հետևել ճանաչմանը, մեր զոհերի հիշատակը հարգելու խնդրին:

... Ինչ վերաբերում է հողային հարցին, մենք պարզորոշ հայտարարել ենք, որ անկախություն հռչակած, հանրաքվե անցկացրած պետություն ենք. դա արել ենք որոշակի՝ 29 հազար քառակուսի կիլոմետր տարածքի վրա ու դա է մեր Հայաստանը: Իսկ մնացածը երկրորդական ենք համարում:

...Քրդական հարցը, որը շատ լուրջ խնդիր է Թուրքիայի համար, նույնպես կարող է պրոբլեմներ ստեղծել մեր միջև։

...։ Հարկավոր է, որ մենք հեռանանք ստերեոտիպային մտածողությունից, որն անդամալուծում է մեզ։ Մենք իմքներս մեզ տեսնում ենք որպես զոհ, որը չի կարող պետություն դառնալ, իսկ Թուրքիան դիտում ենք որպես դահիճ, որը չի կարող պետություն ունենալ։

... Մենք ջուր ունեցող հանրապետություն ենք և սա մեծ գործոն է, որի կարևորությանը դեռևս չենք անդրադարձել։ Բայց Պարսից ծոցի երկրների համար ջուրն այնքան կարևոր է, որքան մեզ համար՝ բենզինը։ (Իմիջիայլոց, Ադրբեջանի և Նախիջևանի համար հույնպես ջուրը կարևոր է)»։

Նախ, հարգելի պատմաբան, ով է իրավունք տվել դատարկ բառախաղերի համար վիրավորել ժողովրդի ամենանվիրական զգացմունքները։ Ի՞նչ է նշանակում, թե հայ ժողովուրդը հայ դատն ու ցեղասպանության ճանաչումն առաջ է քաշում միայն նրա համար, որ «հարդի մեր 1,5 միլիոն նահատակվածների հիշատակը» և «Արևմտյան Հայաստանի նկատմամբ հայրենասեր զգա»։ Գուցե Ձեր ամբողջ գործունեությունը գնացել է այդ նշանարանով, բայց հայ ժողովրդի համար դա կեցության միակ ձևն է, իր հայրենիքը ետ ստանալու ահավոր ծանր ու մեծագույն զոհողություններ պահանջող մի պայքար։

Ես ևս դեմ եմ մեր հարևանների հետ առճակատմանը, բայց առնվազը տարօրինակ է հնչում Պ. Լիպարիտյանի հետևյալ խոսքերը. «մենք որպես պետություն չենք ներկայացնում ոչ մի գաղափարախոսություն, կրոն, որն իր մեջ վտանգ է ներկայացնում մեր հարևանների համար»։ Ինչ վերաբերվում է կրոնին, ապա մեր ժողովուրդը 1700 տարի առաջ ընդունել է քրիստոնեությունն ու նրանից հրաժարվելու ոչ մի մտադրություն չունի։ Իսկ մեր հարևանների կրոնը մահմեդականությունն է։ Ճիշտ է, հայերի նկատմամբ Թուրքիայի վարած բնաջնջման քաղաքականության գլխավոր պատճառը կրոնական չէր, բայց կրոնն էր նրա նկատմամբ թշնամության, հալածանքների և գյավուրի իրավազրկության գլխավոր պատճառներից մեկը։ Եվ դա հասկանալի է, քանի որ դարեր շարունակ այդ երկու կրոններն եղել են (և այսօր էլ են) հակոտնյա։ Պ. Լիպարիտյանն ի՞նչ է առաջարկում։ Գու-

՝ցե այն, որ հարևանների հետ լավ հարաբերություններ ձևավորելու համար ժողովուրդները պարտադրված լինեն փոխելու նաև իրենց հավա՞տը։ Եվ կամ ի՞նչ է նշանակում հարևանների համար վտանգ ներկայացնող գաղափարախոսություն ասածը։ Ո՞վ է որոշում այդ վտանգավորությունը։ Եթե խոսքը պատմական ճշմարտությունները վերականգնելու մասին է և հարևանները դեմ են, ուրեմն մենք դրանցից պիտի հրաժարվե՞նք։ Ի՞նչ է սա՝ հանուն լավ հարաբերությունների գնալ բոլոր տեսակի զոհողությունն ե՞րի, թե պարզապես ստրկամտություն է, որ այնքան «սիրալիր նվիրվածությամբ» ձգտում են հոչակել որպես Անկախ Հայաստանի պետական քաղաքականություն։

Պարտվողականության հոգեբանությամբ անկախ պետականություն ստեղծել հնարավոր չէ։ Ժողովուրդն այդ դժվարագույն խնդիրը կարող է լուծել միայն լավատես հավատով, ոգեշունչ պայքարով։

Մանավանդ, որ Թուրքիայում կան նաև տրամադրություններ, «ըստ որոնց, հարաբերությունները նորմալացնելու համար... պետք է ինչ որ գին պահանջել մեր ճանաչման և մեզ ճանապարհ տալու համար»։

1991 թ. նոյեմբերի 3-ին հանդես գալով թուրքական հեռուստատեսությամբ Թուրք հայտնի լրագրող Մ. Բիրանդն ասաց. «Հիմա Հայաստանում դժվարություններ կան։ Խանութները դատարկ են։ Վառելիք չկա և երկիրն ապրելու է ցուրտ ձմեռ։ ... Մի կողմից Ադրբեջանը, որը թշնամի է, մյուս կողմից Վրաստանը, որը շատ ջերմ չի նայում Հայաստանին, մի կողմից էլ Իրանը, որի կեցվածքը շատ բարեկամական չէ։ Հետևաբար Հայաստանի հայացքը ուղղվում է Թուրքիային, որը դիտվում է որպես հույսի գլխավոր դուռ»։

Այս խոսքերն հենց այնպես չեն ասված։ Դրանք նաև դառնում են քաղաքակ սնություն և կամ քաղաքականություն ձևավորելու հիմք։ «Էպոխա» թերթի 1992 թ. փետրվարի (թիվ 5) համարում, ոչ այլ ոք, եթե ոչ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Դ. Վարդանյանն գրում է. «...Բացի Ադրբեջանի և Վրաստանի հետ դժվարություններից, Թուրքիայի կողմից ևս մենք ունենք անուղղակի շրջափակում։

Համագործակցելու մասին նրա հայտարարությունները դեկլարատիվ են, քանի դեռ Ադրբեջանը մեզ շրջափակման մեջ է պահում։ Ընդ որում, Թուրքիան ձգտում է միջազգային քաղաքականությունում պահպանել իր իմիջը՝ փառտորեն ձրգտելով մեզ հետ հարաբերություններ չզարգացնել։ Դրանով է բացատրվում Հայաստանի հետ հարաբերություններում նրա միտումնավոր դանդաղկոտությունը, չնայած ԱՊՀ-ի մյուս երկրների հետ ծավալվել են ավելի եռանդուն մերձեցումներ։ Օրինակ, Վրաստանին միլիարդանոց փոխառություն է տրվել, դեռ չասած Ադրբջանի մասին»։

Վերադառնալով Պ. Լիպարիտյանին, նշենք, որ նա արտահայտությունների մեջ անփույթ է։ Օրինակ, ի՞նչ է ուզում ասել, հայտարարելով, թե Ղարաբաղից «բացի մենք Ադրբեջանի հետ ուրիշ պրոբլեմ չունենք»։ Կամ «Թուրքիայի գոյության իմաստը, նրա արտաքին քաղաքականության նպատակը պանթուրքիստական չէ, կամ Հայաստանը ջնջելը չէ, (երանի թե այդպես լիներ)... որպես պատմաբան, ես վստահ չեմ թե ինչ է նշանակում պանթուրքիզմ»։ Եթե վերջին իրադարձություններից հետո էլ նա մնում է այդ կարծիքին, ապա իսկապես, այս խնդիրը լուրջ քննարկում է պահանջում, ինչը մի այլ ուսումնասիրության նյութ է։ Իսկ այժմ ասենք միայն հետևյալը։ Եթե Լիպարիտյանն իրավացի է, ապա ինչո՞վ բացատրել Թուրքիայի արտակարգ ակտիվանալն այս աշխարհաշրջանում, ինչո՞վ բացատրել, որ նա արդեն բացահայտորեն ստանձնել է նախկին ԽՍՀՄ-ի մահմեդական բնակչության լիդերի դերը։ Ի՞նչ նպատակ է հետապնդում, որ Թուրքիայի հովանու տակ մահմեդական հասարակապետություն ստեղծելու թուրքական ծրագրի իրականացումն առաջ է տարվում բացահայտորեն ու մեծ եռանդով։ Գուցե՞ թուրքական կառավարության անտեղյակության և անհամաձայնության պայմաններում են թուրքերը Ղրիմում ու Անդրկովկասի մահմեդականների շրջանում տարածում Թուրքիայի քարտեզը, որի վրա այդ ամբողջ տարածքներն, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետության տարածքը, կանաչ գույնով է ներկված։

Աշխարհում գնում է առճակատումից համագործակցության անցնելու գործընթաց։ Բայց արի ու տես, որ Թուր-

քիան Հայաստանի սահմանի վրա վերականգնում է «սառը պատերազմի» տարիներին ձևավորված ռազմական բազաներն ու դրանցում զինվորական մեծ ուժեր է կուտակում։ Ինչո՞ւ։ Ոմանք դա համարում են ռազմական ուժի ցուցադրում՝ ձեռնարկված Արցախում հայերի ռազմական հաջողությունների կապակցությամբ։ Գուցե դա ճիշտ է։ Բայց, եթե ճիշտ է, ապա արդեն ակնհայտ է Անդրկովկասում ոչ միայն դիվանագիտական ու տնտեսական ներթափանցումը, այլև ռազմական առճակատումն ու սպառնալիքը։ Բացառված չէ, որ Թուրքիան ունենա ավելի հեռու գնացող պլաններ ևս։ Պարոն պատմաբան, այդ դեպքում ինչպե՞ս վարվել։

Տարօրինակ բան, մեծահարգո պատմաբանը չգիտի «թե ինչ է նշանակում պանթուրքիզմը», բայց շատ լավ գիտե, թե ինչ է նշանակում «հայկական ազգայնամոլությունը», որը «ծովից ծով Հայաստան է պահանջում» և նաև այն, որ «այս վիճակում պատերազմենք մեր հարևանների հետ և լուծենք մեր բոլոր հողային հարցերը»։

Իրականությանն ու խղճին դեմ եք գնում պ. Լիպարիտյան։ Հայաստանում (նաև Սփյուռքում) ոչ մի նորմալ մարդ նման բան նույնիսկ մտածել չի կարող, իսկ հոգեկան հիվանդների բարբաջանքներով քաղաքական թեզեր հիմնավորելը սազական չէ։ Օրազանքից մինչև իրականություն ճամփան շատ և շատ երկար է, այնքան երկար, որ դրանք իրար հետ շատ հաճախ ոչ թե նույնանում, այլ հակադրության մեջ են մտնում։

Եվ կամ ի՞նչ հասկանալ՝ մենք անկախությունը 29 հազ. քառ. կմ-ի վրա ենք հռչակել «և դա է մեր Հայաստանը։ Իսկ մնացածը երկրորդական ենք համարում»։ Այդ դեպքում ո՞ւր մնաց ՀԽՍՀ Գերագույն խորհրդի 1989 թ. դեկտեմբերի 1-ի որոշումը։

Պ. Լիպարիտյանը այն կարծիքին է, որ Հայաստանը ջուր ունեցող հանրապետություն է։ Ինչից զուրկ են, բայց դրա փոխարեն բենզին ունեն Մերձավոր Արևելքի երկրները։ Ցանկանալով ասել, թե մենք հնարավորություն ունենք ջուրը փոխել այդ երկրների բենզինի հետ ու այդպիսով վերջ դնել վառելիքա-էներգետիկ ճգնաժամին։

Ի գիտություն հայ պրոֆեսորի ասենք, որ Հայաստանի Հանրապետությունը աշխարհի այն երկրների թվում է, որոնք ջրային ռեսուրսներով ամենաքիչ ապահովվածներն են։

Սակայն, երբ իրար կողքի ես դնում «Ազգում» և «Մոնիտիկում» տպագրված վերը նշված երեք հոդվածները, աչքի են զառնում նրանց համար ընդհանուր հանդիսացող հետևյալ բնութագրական առանձնահատկությունները։

— Դրանցում քննարկվում են բազմաթիվ մեծ ու փոքր հանգամանքներ, բացի մեկից՝ ռուսական գործոնից։ Տպավորություն է ստեղծվում, թե հանրապետությունների ու ժողովուրդների ճակատագիրն որոշելու գործում Ռուսաստանն ոչ եղել է և ոչ էլ կա ու կլինի։ Սա պատահակա՞ն «բացթողում է»։ Իհարկե ոչ։ Այն բխում է ընդհանուր կոնցեպցիայից՝ աշխարհաշրջանը դուրս է բերվում Ռուսաստանի ոչ միայն տիրապետության տակից, այլև նրա ազդեցության ոլորտից։ Հետևաբար նրա մասին հիշատակությունն ոչ միայն անտեղի է, այլև վնասակար ու վտանգավոր։

Մի երևույթ, որը ևս վկայություն է աշխարհի քարտեզի վերանայման։

— Ետին պլանին է մղված նաև Քրդական հարցը։ Միայն Լիպարիտյանի հոդվածում է խոսք ասվում քրդերի մասին և այն էլ հետևյալը. «Քրդական հարցը, որը շատ լուրջ խընդիր է Թուրքիայի համար, նույնպես կարող է պրոբլեմներ ստեղծել մեր (Հայաստանի ու Թուրքիայի— Ս. Պ.) միջև»։

Մինչդեռ թուրք-ամերիկյան դիրքորոշման մեջ Քրդական հարցը ավելի ու ավելի առաջին պլան է մղվում։ Դեմիրելը ԱՄՆ-ին խորհուրդ է տալիս ձեռնպահ մնալ Սադամ Հուսեյնի տապալումից ու քրդական պետություն ստեղծելու մտադրությունից։

Թուրքիայի համար Քրդական հարցը առաջնային նշանակություն ունի։ Անդրկովկասին տիրանալն ու Ս. Հուսեյինի իշխանության պահպանումը նշանակում է շրջափակել քրդերին ու նրանց հնազանդության մեջ պահել։

Վերջերս մամուլում (տես «Երկիր» օրաթերթի 1992 թ. փետրվարի 19-ի համարը) երևացին նյութեր, որոնք պատմում են Թուրքիայում քրդական շարժման դեմ բարձրացող ազ-

դայնամոլական նոր ալիքի մասին։ Անկարայի կառավարության կողմից քրդերի նկատմամբ քաղաքականության որոշ մեղմացման մեջ Թուրք հեռադիմականները տեսնում են մի վտանգ, որը կարող է քաղաքացիական կռիվների պատճառ հանդիսանալ։ «Թուրքական սրտեր» աջ կազմակերպությունը Թ. Օզալին ու Ս. Դեմիրելին հասցեագրված հայտարարության մեջ գրում է. «Եթե խիստ միջոցառումներ չձեռնարկվեն կամ դրանք ուշանան, և եթե զիջումների քաղաքականությունը շարունակվի, Թուրքիայում այլևս անհնար կլինի զսպել արյունահեղ քաղաքացիական պատերազմը»։ Նամակում դատապարտվում է քրդերեն խոսելու արտոնություն շնորհելու նախագահի քայլը։ Հավանաբար նման մեղադրանքները դեր խաղացել են, որ Օզալը կոչ արեց ուժեղացնել պայքարը քրդական բանվորական կուսակցության դեմ։ Քրդերի կողմից մի քանի ոստիկանների ահաբեկմանը հաջորդեցին փոխվրեժի մղող կոչերը։ Նորից ամբողջ ձայնով հայտարարվում է, որ Թուրքիայում քուրդ անունով ժողովուրդ գոյություն չունի։

— Թուրքիան այլևս չի քողարկում իր մտադրությունը՝ ամենատարբեր միջոցներով ու ձևերով տարածվելու դեպի Հեռավոր Արևելք։

— Թուրք-ամերիկյան դաշնակցությունն իր հաղթանակն է տոնում։ Նա ԽՍՀՄ-ի դեմ պայքարի գործիքից վերածվեց նրա լայնարձակ տարածքների ճակատագիրը տնօրինող միջոցի։

Թուրքիայի բախտը մեկ անգամ ևս բերում է. առանց մեկ իսկ փամփուշտ արձակելու նրա առաջ բացվում են վիթխարածավալ երկրներ թափանցելու դռները։

— Այս ամենի մեջ անորոշ ու բազմազան վտանգներով հղի է մնում Հայաստանի ու հայ ժողովրդի վաղվա օրը։ Հայկական հարցի շահարկման բավիղներում նորից է դրվում ամբողջ հայ ժողովրդի գոյության հարցը։

Նորից դիմենք «Ազգին»։ «...Թուրքական դիվանագիտությունը համոզված է,— շարունակում է թերթը,— որ գոյատևման թելադրանքով անզոր երկիր հանդիսացող Հայաստանը դատապարտված է իր հեռավոր նպատակները հար-

մարացնելու Թուրքիայի մոտավոր նպատակներին։ Թվում է, որ Սև ծովով ելք ունենալու Հայաստանի ձգտումը նշանակում է պահանջատիրության ժխտում ու ցեղասպանության ճանաչման պահանջի դադարեցում։

Վերջերս Հայաստան—Թուրքիա դիվանագիտական հանկարծակի աշխուժացնում նկատվեց և այդ մերձեցման կնքահայրը հանդիսանում է Միացյալ Նահանգները։ Մ. Նահանգները ջահագրգռված են քիչ զիջումներով կետեր արձանագրել մեկ միլիոնանոց ամերիկահայ գաղութի մոտ, իսկ մյուս կողմից, օգնել իր դաշնակից Թուրքիային դառնալու եվրոպական հասարակապետության անդամ...

...Հայկական իշխանությունները չպետք է հախուռն որոշումներ ընդունեն կամ անհարկի ուրացումներ կատարեն, երբ Ալեքսանդրապոլի, Մոսկվայի, Կարսի և Լոզանի պայմանագրերը, որոնք արդեն ճշտել են Հայաստանի ու Թուրքիայի սահմանները և Թուրքիայի հայության իրավիճակը, պերճախոս են։

... Սփյուռքահայությունը բավարար չափով իրապաշտ է ընդունելու ցեղասպանության կամ հողային պահանջների հարցով Թուրքիայի հետ առճակատումից խուսափելու Հայաստանի իշխանությունների գործնապաշտ քաղաքականությունը։

... Հավանաբար հեգնական հնչի, սակայն այդ քաղաքականությունը պիտի շարունակվի մինչև գալիք դարը. քանի դեռ Հայաստանը կխուսափի առճակատումից, սփյուռքը պետք է շարունակի ամեն ինչ անել կենդանի պահելու մեր պահանջները...»։

Եթե այս բոլորն այսպես են և հանդիսանում են Հայաստանի Հանրապետության արտաքին-քաղաքական ռազմավարությունը, ապա ինչո՞վ են տարբերվում Մոսկվայի 70-ամյա դիրքորոշումից։ Չէ որ այն ինչ «Ազգի» հեղինակը առաջարկում է, դա այլ բան չէ, եթե ոչ ցեղասպանության ճանաչումից և տարածքային պահանջներից հրաժարում։ Եթե ԽՍՀՄ-ի կազմում դա մի հարկադրական զիջում էր, որը հատուցվում էր Հայաստանի հայության անվտանգության երաշխիքով, ապա այժմ այն ի՞նչ փոխհատուցում ունի։ Հայաստանի անկախությո՞ւնը։ Բայց ի՞նչ է այդ անկախությունը,

երբ պահանջվում է, թե «գոյատևման թելադրանքով տնզոր երկիր ճանդիսացող Հայաստանը դատապարտված է իր ճեռավոր նպատակները ճտրմարեցնելու Թուրքիայի մոտակա նպատակներին»:

Եթե 10—15 տարի առաջ որևէ մեկը հանդգներ նման հայտարարություն կատարել, կհռչակվեր որպես ազգային դավաճանության տիպար, իսկ այսո՞ր...

Բացի այդ։ Որոշ հեղինակների դատողություններում բացակայում է Հայկական հարցը և նրա բովանդակությունը ձևավորող գործոնների խաղացած և այսօր էլ ունեցած դերը հայ ժողովրդի միավորման ու գոյատևման գործում։ Սա մեծ հարց է, որ կարոտ է առանձին լուրջ հետազոտության։ Սակայն մենք բավարարվենք այսքանով։

Ամերիկյան տեսակետ.

«Թուրքիան շարունակում իրեն ներկայացնում է որպես կրոնը պետությունից անջատելու, ազատ շուկայի և ժողովրդավարության վրա հիմնված, իսլամը հանդուրժող և ժամանակակից մոդելի մի երկիր։ Մինչ այժմ թվում էր, թե Թուրքիային այդ դերը հաջողվում է։ Վերջին ութ շաբաթների ընթացքում Թուրքիայի նախագահ Թ. Օզալը տնտեսական և մշակութային համաձայնագիր ստորագրեց միջինասիական հանրապետությունների՝ Ուզբեկստանի, Թուրքմենստանի և Ղրղզստանի, ինչպես նաև Կովկասում՝ Ադրբեջանի հետ։ ...Ուզբեկստանի նախագահ Իսլամ Քարիմովը հայտարարեց. «Ես աշխարհին ուզում եմ հայտնել, որ իմ երկիրն առաջ է գնալու Թուրքիայի ուղիով»։ Ղազախստանի նախագահ Ն. Նազարբաևը վերջերս հայտարարեց. «Միակ մոդելը, որ մենք ունենք, Թուրքիան է»։ Գերազանցելով նախորդներին, Ղրղզստանի նախագահ Ասկար Ակաևն ասաց. «Թուրքիան լուսաշող այն աստղն է, որն առաջնորդելու է Թուրքական հանրապետություններին»։

... Հինգ նոր հանրապետությունների 57 միլիոն բնակիչները էթնիկապես Թուրքեր են, որոնք 700 տարի առաջ Ասիան ասպատակողների հետնորդներն են։ Բոլորն էլ խոսում են Թուրքերենի տարատեսակներով։ Թուրքերն ու ադրբեջանցիները հեշտությամբ են իրար հասկանում։ Թուրքերենն ու ուզ-

բեկերենը նույնքան նման են, որքան դանիերենն ու շվեդերենը, կամ ֆլամանդերենն ու գերմաներենը։

... Ավելի քան 70 տարի Թուրքիան հեռացել էր իր հարազատներից ու հարևաններից։

(Իրավիճակն արմատապես փոխվել է)։ Անկարայում արևմտյան մի դիվանագետ այս առնչությամբ ասել է. «Թուրքերը ցնծության մեջ են, երբ տեսնում են, որ հիացմունքի են արժանանում։ Երկար տարիներ Եվրոպան ու ՆԱՏՕ-ն նրանց վերևից են նայել։ Հիմա նրանք իրենք են մի մոդելի դերակատար հանդիսանում, և դա նրանց շատ է դուր գալիս»։

Թուրքերը ջերմեռանդությամբ են ստանձնում իրենց նոր դերը։ Եվ այս ուղղությամբ նրանք կարևոր հաջողությունների են հասել։ Այս ամսվա սկզբին ադրբեջանցիները հրաժարվեցին... սլավոնական այբուբենից...։ Թուրքական մի ինստիտուտի հովանավորությամբ ուսումնասիրվում են նոր հանրապետությունների հետ միասնական դրամանիշի, դրոշի և չափումների, ինչպես նաև այբուբենի ընդունման հարցերը։

... Թեև Անկարան ժխտում է, որ շրջանում որևէ քաղաքական նպատակներ չի հետապնդում, սակայն արդեն ուրվագծվում է թուրքական մի հասարակապետություն։ ... Թուրքական արտաքին քաղաքականության ծրագրերը նախատեսնում են տնտեսական երկու ազատ գոտիների ստեղծում՝ Սևծովյան և Միջինասիական, որոնք երկուսն էլ կախված կլինեն Թուրքիայից։

...Թուրք-խորհրդային առևտրական խորհրդի նախագահ Ն. Գոքյիշիթն ասում է. «75 տարիների համայնավարությունից հետո այդ ժողովուրդները վախենում են։ Նրանք մեր ձեռներեցությունն են ուզում և գիտեն, որ մեզ կարելի է վստահել»։

«Նեքսա» թուրքական ֆիրման 21 միլիոն դոլար արժողությամբ ժամանակակից հեռախոսացանց է տեղադրում, իսկ «Պատ հոլդինգ» կաշվի արդյունաբերության և «Թեքել» ծխախոտի թուրքական ֆիրմաները գործարաններ են կառուցում Ադրբեջանում...»։

Թուրքիան Ադրբեջանին օգնում է ազգային բանակ ստեղծելու և այդ բանակի համար կադրեր պատրաստելու գործում։ Բացի դա։ «Ադրբեջանցիները ընտրել են ավելի ժամանակա-

կից, ժողովրդավար և արևմտականացած ուղի։ Բայց Իրանը չի կարող պայքարից հրաժարվել։ Ադրբեջանը բաժանված է. 7 միլիոնն ապրում է սահմանի հյուսիսային կողմում, իսկ 20 միլիոնը՝ հարավային մասում։ ...Հարավը և հյուսիսը ձգտում են դրսևորում միավորվելու...

Իրանի նպատակը իսլամական արմատականության միջոցով Ադրբեջանին տիրապետելն է»։

Ամերիկյան այս միտումները շատ ավելի իրական են, բայց խնամքով թաքցված։ Այսօր արևմտյան, և առաջին հերթին, ամերիկյան մամուլը, լրատվական միջոցները, հասարակական-քաղաքական գործիչները համաշխարհային աղմուկ են բարձրացրել, թե նախկին ԽՍՀՄ-ի անկախացած մահմեդական հանրապետություններին պետք է փրկել իսլամական ֆունդամենտալիզմից, ոչ մի կերպ թույլ չտալ, որ, մասնավորապես Ադրբեջանում, նրանք իշխանության գլուխ անցնեն։ Այդ խնդիրը լուծելու համար արդեն ձևավորվել է ամերիկա-թուրքական դաշինք։

Միթե՞ պարզ չէ, որ մահմեդական ֆունդամենտալիզմի վտանգի շուրջ աղմուկը շատ ավելի վարագույր է, քան գլխավոր նպատակ։ Հարցը բոլորովին այլ է։ Ընթացքի մեջ է աշխարհը ազդեցության գոտիների վերաբաժանելու իմպերիալիստական վաղեմի քաղաքականությունը։

Խորհրդային մահմեդական հանրապետությունները ԱՄՆ-ին հետաքրքրում են աշխարհաքաղաքական տիրակալության և տնտեսական շահերի տեսանկյունից։ Ամրանալ այդ աշխարհաշրջանում նշանակում է վերահսկողության տակ առնել ամբողջ ասիական մայրցամաքը՝ սկսած Ռուսաստանից, Չինաստանից, Հնդկաստանից մինչև Պարսկաստան և Սիրիա։

Այդ հանրապետությունների աղքատությունն ու թշվառությունը վերջին ժամանակներս շատ է թմբկահարվում, սակայն իրականում դրանք ԱՄՆ-ի համար կարող են դառնալ առաջնային նշանակության հումքի բազա և վաճառահանման շուկա։

Բուշ. «ԱՄՆ-ը և Թուրքիան համատեղ կգործեն Միջին Ասիայի և Անդրկովկասի հանրապետություններում...»։

Թուրքիայի վարչապետ Դեմիրել (1992 թ. փետրվարի 12-ին). «ԱՄՆ-ի կառավարությունը չպետք է ռազմական ուժ գործադրի Իրաքի նախագահ Սադամ Հուսեյնի իշխանությունը տապալելու համար»։

Եվ ապա. «Իրաքի հյուսիսում քրդական պետության ստեղծումը կարող է լրջորեն ապակայունացնել աշխարհը»։

Մի քանի մեջբերումներ էլ «Մոսկովսկիե նովոստի» լրագրի 1992 թ. հունվարի 26-ի համարում տպագրված «Խորհրդային Արևելքի համար Թուրքիայի երթը» հոդվածից, որը նախկին ԽՍՀՄ-ի մահմեդական հանրապետությունների հարցի լուծման ուղին համարում է հետևյալն՝ «այդ ռազմավարական կարևոր աշխարհաշրջան կգան նոր ուժեր կամ նոր միացյալ ուժեր՝ հանձինս Արևմուտքի, Արևելքի և Ռուսաստանի զարգացած երկրների։...

Տվյալ պահին այդ շրջանում առաջին պլանին կմղվի Թուրքիան՝ ԱՄՆ-ի հուսալի դաշնակիցը։ Այդ տեղի կունենա և արդեն տեղի է ունենում բնականաբար, քանի որ արտահայտում է նրանց փոխադարձ շահերն ու ձգտումները։ ...Առաջին պլան է մղվում Թուրքականությունն, որը կարող է կրոնականությունից ուժեղ լինել։ Եվ փառք աստծու Այս դեպքում թուրքական ինքնագիտակցության վերածնունդը բացարձակապես անհրաժեշտ է։ Թուրանի գաղափարները այս երկրների խաղաղ տրանսֆորմացիայի երաշխիքն են...

Դրա հետ միասին Թուրքիան միայնակ չի կարող իր հետևից ձգած տանել «երիտթուրքական այս գնացքը»։ ... Անհրաժեշտ է ստեղծել հատուկ պլան (ետպատերազմյան «Մարշալլի պլանի» նման)...»։

Թուրքականության այդ վերածնունդն ու միավորման կամքը հարկադրել է նույնիսկ ռուս մասնագետներին անհանգստանալու Ռուսաստանի վաղվա օրով։ Հեռուստաէկրանից արդեն կոչեր են հնչում սլավոնա-թուրքական պետություն կառուցելու վերաբերյալ՝ որպես Ռուսաստանը վերջնական կործանումից փրկելու միակ միջոցի։ Ռուս հասարակագետները հայտնագործություն կատարողի հրճվանքով Ռուսաստանի բնակչությանը «հիշեցնում են», որ իրենց հայրե-

նիքը ավանդաբար եղել է սլավոնա-թուրքական և նորից պետք է վերադառնա դրան։

* * *

Վերջին հաշվով ի՞նչ է Հայկական հարցը, ի՞նչ են Արևմըտյան Հայաստանի, Ղարաբաղի և Նախիջևանի հարցերը։ Դրանք են ձևավորում Հայաստանի Հանրապետության, նրա ապագայի, հայ ժողովրդի գոյատևման իմաստը։ Տվյալ դեպքում խնդիրը ոչ այնքան տարածքն է, այլ մի պարզ ճշմարտություն՝ մենք գտնվում ենք մի աշխարհաշրջանում, որտեղ թույլ երկիրն երկար դիմանալ չի կարող։ Սա Եվրոպա չէ, և, մեծ հարց է Եվրոպա երբևիցե կդառնա՞, թե ոչ։ Հետևաբար Հայաստանը թույլ լինելու իրավունք չունի։ Որևէ պատրանք չպետք է ունենալ՝ թույլ Հայաստանը չի ապրի և ոտի տակ կգնա։

Բացի այդ։ Ով ինչ ուզում է թող ասի՝ Հայաստանին երրորդ ուժը օդի պես անհրաժեշտ է։ Եվ այդ ուժը նորից ու նորից կարող է լինել Ռուսաստանը։ Որքան փորձում եմ Հայաստանի խնդիրները քննել ռուսական առնչություններից, ռուսական գործոնից դուրս, հանգում եմ դառը մտահանգումների, ինչը բացառիկ սրությամբ զգացի Թուրքիայում։ Ռուսաստանի ճակատագիրը, նրա այսօրն ու վաղը մեզ՝ հայերիս մեծապես հուզել և հուզում են ոչ թե զգացմունքային կամ այլ բարոյա-հոգեբանական պատճառներով, այլ նրա համար, որ դրանք սովորաբար ինչ-որ ձևով և ինչ որ տեսքով դառնում են նաև մեր ճակատագիրը, մեր այսօրն ու վաղը։ Հայաստանն անկախ է։ Բայց Ռուսաստանից անկա՞խ է։ Ոչ և հազար անգամ՝ ոչ։ Այս հարցադրումը լավ է, թե վատ, մեզ դուր է գալի՞ս, թե ոչ,— խնդրի մի այլ կողմն է։ Բայց դա օրինաչափության զորություն ստացած մի երևույթ է, որն այս կամ այն պետական գործչի անձնական կողմնորոշման հետևանք համարելը սխալ է և անլուրջ։

Ժողովրդի բախտը, մանավանդ մեր աշխարհաշրջանի փոքր ժողովրդի բախտը փորձարկման ենթարկելը հակացուցված է, քանի որ չկան այն երաշխիքները, որոնք ապահովում են այլ աշխարհամասի փոքր ժողովուրդների անվտանգությունը։ Մերձավոր Արևելքը փոքր ժողովուրդների մսաղաց եղել է և այդպիսին շարունակում է մնալ։

ՀԻՆԳ ԱՄԻՍ–
–ՀԻՆԳ ՕՐ

ՀԻՆԳ, ԱՄԻՍ ԵՎ ՀԻՆԳ ՕՐ

* * *

Ղարաբաղի հարցը թե՛ քաղաքական և թե՛ քարոզչական առումով միջազգայնացել է։ Այն, ինչ կատարվեց 1988 թվականին և հետագա տարիներին, թերևս օրինաչափ էր։ Հասարակությունը, և, առաջին հերթին Ղարաբաղի հարցը, փակուղու առաջ էր կանգնել և լուծում էր պահանջում։ Այդ իսկ առումով Ղարաբաղյան շարժումը ոչ թե մտացածին, այլ օրինաչափ երևույթ էր, որը խնդիր ուներ Արցախի հայ ազգաբնակչությանը դուրս բերել գաղութային ճնշումից, փրկել նրան ձուլվել-անհետանալու վտանգից և ԼՂԻՄ-ում հաստատել ինքնավար ազգային միավորում։

Այս է իրողությունը։ Եվ, այնուամենայնիվ, չի կարելի այդ շարժման առաջմղիչ ուժերին տալ միանշանակ գնահատական։ Իմ խորը համոզմամբ այդ ուժերի ոչ միայն առաջին ջութակը, այլև խմբավարը Մոսկվան էր և է։ Եթե ուշադրությամբ դիտարկվեն 1984—1988 թթ. իրադարձությունները, դժվար չի լինի նկատել որոշակի օրինաչափություն՝ Մոսկվան, մի կողմից, խրախուսում էր Ղարաբաղի հայության վրա ճնշումն անընդհատ մեծացնելու Ադրբեջանի իշխանությունների քաղաքականությունը, և մյուս կողմից, Ղարաբաղի հայության ներկայացուցիչներին թափանցիկ ակնարկներ նետում, թե ինքը ոչ միայն չի բացառում Ղարաբաղյան հարցի լուծման հնարավորությունը, այլև սկզբունքորեն դեմ չէ դրան։ Եվ այդ զարմանալի չէ։ Ինչո՞ւ Մոսկվան 1921 թ. Ղարաբաղն ու Նախիջևանը մտցրեց Ադրբեջանի կազմի մեջ։ Նա դա արեց հարկ եղած դեպքում այն օգտագործելու համար։ Անդրկովկասը միշտ եղել է Ռուսական կայսրության ամենաանհանգիստ երկրամասը։ Աչքի առաջ էին 1902—1920

թվականների իրադարձությունների ամբողջ շղթան, այդ իրադարձությունների դասերը։ Միշտ էլ այս երկրամասում բռնկված հրդեհները ցարիզմին հաջողվել է մարել մի ճանապարհով՝ ազգամիջյան բախումներ կազմակերպելու միջոցով և միշտ էլ այդ հրդեհները բռնկվել են կայսրության համար քաղաքական ու տնտեսական ճգնաժամերի սրման պահերին։ Հիշենք Ռուս-ճապոնական պատերազմում Ռուսաստանի ծանր պարտությունից հետո ստեղծված կացությունը և ռուսական առաջին հեղափոխության օրերը։ Հիշենք 1918 թվականների մղձավանջը, և այլն, և այլն։ Եվ բոլոր այդ պահերին հրապարակ են նետվել հայ-ադրբեջանական բախումները։ Այս հարցում նույնիսկ նշանակություն չուներ թե ով էր ցարը կամ Կովկասի փոխարքան։ Ալեքսանդր 3-րդ, թե Նիկոլայ 2-րդ, Գոլիցին թե Վորոնցով-Դաշկով։ Այդ լիբերալի ու հայասերի հռչակ վայելող Վորոնցով-Դաշկովը չէ՞ր, որ Թիֆլիսում ղեկավարում էր ազգամիջյան ընդհարումները, զենք բաժանում կռվող կողմերին։ Եվ քանի որ ազգամիջյան բախումները ներքին քաղաքականության անհրաժեշտ լծակներից են, ապա անհրաժեշտ էր ստեղծել այնպիսի իրավիճակներ, որ անցումը բացարձակ բախումներին որևէ դժվարություն չներկայացներ։ Այդպիսի իրավիճակ ստեղծելու ամենարդյունավետ միջոցը տարածքային պրոբլեմների սրումն է, իսկ որտեղ այդպիսիք չկան, դրանց ստեղծումը։ Ի դեպ, այդպիսիք ստեղծվեցին ոչ միայն Անդրկովկասում, այլև կայսրության ամենատարբեր մասերում՝ ամենազանազան եղանակներով ու տեսքով։

Արցախն ու Նախիջևանը քաղաքական այդ համակարգի զոհերն են։ Արցախը Ադրբեջանին էր տրվել քաղաքական սուր պահերին օգտագործելու համար և օգտագործվեց։

Կրկնում եմ, չի կարելի նույնացնել Կենտրոնի քաղաքական խաղերն ու Արցախյան շարժումը, դրանք տարբեր և հակոտնյա երևույթներ են։ Տվյալ դեպքում խոսք կարող է դնալ միայն այն մասին, թե կենտրոնին հաջողվո՞ւմ էր ազատագրության համար պայքարի ելած ժողովրդին օգտագործել իր քաղաքական նպատակագրումների իրականացման գործում, թե՝ ոչ։

Այդ հարցին չի կարելի տալ միանշանակ պատասխան։

Բանն այն է, որ այս անգամ կենտրոնն ինքն խճճվեց իր իսկ հնարած քաղաքական խաղերի մեջ և այլևս չկարողացավ ոտքի կանգնել։

Շարժմանը նախորդող ժամանակաշրջանում Արցախի հարցի լուծման նկատմամբ Մոսկվայի երկիմաստ լոյալությունը չէր կարող չհանդիսանալ իբրև մղիչ ուժ՝ շարժման մեջ ներարկելու ազգային-ազատագրական տրամադրություններ, այսինքն դրանք վերածելու ազատագրական պայքարի։ Հենց դա էլ պետք էր Մոսկվային։ Արցախում ծավալված իրադարձություններն օբյեկտիվորեն Մոսկվայի ակնկալած ծառայությունը մատուցեցին։ Եվ, եթե Անդրկովկասը մտավ ինքնախ պետությունների համագործակցության մեջ, այդ գործում երկրորդական չէ Արցախի արյունահեղությունների դերը։

Անկախ պետությունների համագործակցության հռչակման պայմանագիրը հրապարակելուց հետո թվում էր, թե Ղարաբաղը այլևս Մոսկվային պետք չէ և նա թույլ կտա այդ երկրամասում վիճակը կարգավորելու։ Սակայն դա միայն առաջին հայացքից։ Ղարաբաղը դեռևս պետք է Ռուսաստանին և պետք է լինելու գուցե տարիներ շարունակ։

Անկախ պետությունների համագործակցությունը ստեղծվում է սառցադաշտում և դեռ չձևավորված սայթաքում է, ոտքի վրա կանգնել չի կարողանում, բոլոր ասպարեզներում ճեղքվածքներ է տալիս։ Չի կարելի որևէ պատրանք ունենալ։ Այսուհետև Ռուսաստանը շատ ավելի համառ ու հետևողականորեն ձգտելու է խուզել համագործակցության մեջ մրտնող պետությունների իրավունքները աստիճանաբար, տեսանելի ու անտեսանելի միջոցներով։ Բնականաբար ներկա ժամանակներում այդ քաղաքականության իրականացումը հեշտ չէ։ Հանրապետությունները ոչ միայն պահանջում են Ռուսաստանի հետ լիակատար իրավահավասարություն, այլև իրենց ամբողջ քաղաքականությունը ենթարկել են այդ խնդրի լուծմանը։

Մահմեդական հանրապետությունների ալյանսը, չնայած այդ պետությունների միջև եղած լուրջ տարաձայնություններին, դառնում է իրողություն։ Համագործակցության մեջ մտնելու մասին նրանք համատեղ որոշում ընդունեցին ժա-

մանակ շահելու՝ սեփական տնտեսությունների կողմնորոշումները փոխելու, միջուկային զենքի հետ կապված մի շարք լուրջ խնդիրներ լուծելու և Ռուսաստանից ապագայում անհամեմատ ավելի մեծ պատառներ պոկելու համար, քան դա հնարավոր է այսօր։

Մոլդովան Ռուսաստանի ոտնձգություններին պատասխանում է Ռումինիայի հետ միավորվելու սպառնալիքներով։

Երբ Չեչնիայի պրեզիդենտ Դուդաևը առաջարկեց ստեղծել Կովկասյան Միություն (Անդրկովկասի հետ միասին), քչերը դրան լրջորեն վերաբերվեցին, իսկ այժմ այդ ուղղությամբ գործնական քայլեր են կատարվում։

Կառարկեն, թե դա լուրջ չէ։ Հակառակը չեմ պնդում, բայց նաև դեմ եմ միանշանակ պատասխանին։ Ինչո՞ւ։ Որովհետև, եթե այն լիներ լոկ Դուդաևի մտահղացումը, կարելի էր անփույթ վերաբերվել։ Բայց հայտնի է, որ նման պլան առաջ է քաշվել դեռևս 19-րդ դարի վերջերին, Առաջին աշխարհամարտի նախօրյակին և Երկրորդ աշխարհամարտի տարիներին։ Հենց վերջերս Մոսկվայի հեռուստատեսությունը հայտնեց, որ դեպի Ռուսաստան լողացող թուրքական նավում եղել են քարտեզներ, որոնց վրա Անդրկովկասը ամբողջությամբ կանաչ գույնով է ներկայացված՝ այսինքն այն համարվում է թուրքական տարածք։

Բնականաբար Ռուսաստանը հանրապետությունների միտումների ու գործողությունների դեմ օգտագործում է չեզոքացնող հակամիջոցներ և կշարունակի նույնը անել։

Կովկասում և Անդրկովկասում դա ազգամիջյան ու եղբայրասպան կռիվների բորբոքումն է։ Այս կապակցության մեջ պետք է քննարկել Ղարաբաղից զորքերի դուրս բերումը՝ Ռուսաստանը մի կողմ է քաշվել, հրապարակը թողնելով հայ-ադրբեջանական բախումներին, որոնք գնալով ավելի սուր և արյունահեղ բնույթ են ստանում։ Նույն խնդրին էին ծառայում Վրաստանում եղբայրասպան կռիվների ծավալումը, ինչը դեռ երկար կպահպանի ներքաղաքական լարվածությունը, որը Վրաստանի ներսում տիրող ազգային խճճված իրավիճակի հենքի վրա լուրջ ազդեցություն կգործի նրա արտաքին քաղաքականության և իրական սուվերենության վրա։

Ռուսաստանն այդ խնդրին է ծառայեցնում նաև Կովկաս-

յան լեռնային և ոչ լեռնային ժողովուրդների միջև եղած հակասություններն ու բախումները։

Նույն այդ քաղաքականությունը Մոլդովայում նկատի ունի գագաուզների խնդիրը ,Ուկրաինայում տարածքային հավակնությունների և ռուս ազգաբնակչության հակաուկրաինական տրամադրությունների զարգացումը։

Տարածքային կորուստների սպառնալիքն է կախված Ղազախստանի վրա, ամեն միջոց գործադրվեց նրան միջուկային զենքից զրկելու և այլն, և այլն։

Իր նպատակներին հասնելու համար Ռուսաստանը սկսել է մեծ ակտիվությամբ օգտագործել տնտեսական և գաղափարախոսական ազդեցության միջոցները։

Հետևաբար այսօր արդեն ավելի որոշակի է դարձել այն կարծիքը, որ Մոսկվայի միջոցով կամ նրա օգնությամբ Ղարաբաղի ողբերգությանը վերջ դնելն անհնար է։ Այդ հարցը կարող են և, որքան էլ այն ծանր լինի, պետք է լուծեն Ադրբեջանն ու Հայաստանը։ Կա լուծման երկու ուղի՝ զենքի կամ բանակցությունների միջոցով։ Ղարաբաղի պատմությունը, և հենց մեր օրերի իրողությունները հաստատում են այն կարծիքը, որ Արցախի հարցը զենքի միջոցով լուծել հնարավոր չէ։ Բազմաթիվ պատճառներով Ղարաբաղում Հայաստանի կամ Ադրբեջանի այնպիսի ռազմական հաղթանակ, որը հիմք ստեղծի տարածքային լուրջ խնդիրներ լուծելու համար, գործնականում բացառված է։

Եվ վերջապես, այդ հողակտորի վրա որքա՞ն կարելի է կռվել։

Մնում է բանակցությունների ուղին։ Մեզանում կան ոչ քիչ թվով անձինք, որոնք նման հարցադրումը անհնար և նույնիսկ դավաճանական են համարում։ Նրանց հասկանալ կարելի է։ Արցախում ու նրա կապակցություններում շատ արյուն է թափվել, հարյուր հազարավոր մարդիկ անասելի զրկանքների, բռնագաղթի ու ահաբեկման են ենթարկվել, կյանքը մտել է ռազմանքի ու անապահովվածության փակուղի։ Այդ բոլորը հիշտ է։ Սակայն ոչ միայն Արցախը, այլև Հայաստանն այսօր այնպիսի դրության մեջ են, որ աբդյունքն է արդարացնում միջոցը։ Շատերը ազգային ազատագրական

պայքար ասելով հասկանում են անպայման զանգվածային շարժում կամ զինված ընդվզում։ Ո՞վ ասաց, թե հաջող բանակցություններն ազատագրական պայքար չեն, նույնիսկ եթե նրանց արդյունքները լիակատար ու ամբողջական ընդգրկում չունեն և հաջողություն են արձանագրում մեկ կամ մի քանի խնդիրներում։ Չէ որ հարցերի հարցը Արցախը ծանրագույն ու շատ վտանգավոր վիճակից դուրս բերելն է, այլ ոչ թե դրան հասնելու միջոցները։

Իհարկե, այսօր, երբ Արցախում իսկական պատերազմ է, Հայաստանը պարտավոր է մարդկային և նյութական բոլոր հնարավոր ու անհնար միջոցներով օգնել մարտնչող արցախցիներին։ Ապացուցելու հարկ չկա, որ հակառակ մոտեցումը դավաճանություն է։ Ընդհակառակն, ինձ թվում է, որ պետք է կուտակել խոշոր ուժեր, հակառակորդին ռազմական ծանր հարվածներ հասցնել և հարկադրել նրան բանակցությունների նստել, որը տվյալ իրավիճակում կլինի հօգուտ Արցախի։ Ասել, թե ես անվերապահորեն հավատում եմ բանակցությունների հաջողությանը, ճիշտ չի լինի։ Բայց նաև համոզված եմ, որ միմիայն բանակցությունների միջոցով է հնարավոր հասնել հարցի թեկուզ ժամանակվոր, ինչ որ դրական լուծման։

Նաև համոզված եմ, որ առաջիկա, համենայն դեպս 1—2 տարիներին ևս Ռուսաստանի մասնակցությամբ բանակցությունների միջոցով այդ հարցի լուծումն անհնար է և դա այն պարզ պատճառով, որ Ղարաբաղի հարցը այնքան բարդ է ու կնճռոտ, իսկ հայ-ադրբեջանական հարաբերություններն այնքան սուր բնույթ են ստացել, որ Ռուսաստանին հեշտությամբ կհաջողվի այն քարշ տալ իր պետական և նույնիսկ առանձին գործիչների եսասիրական շահերի շավիղներով։

Այս հարցադրումները ոչ միայն մտորումների, այլև մի կարճ ժամանակահատվածում Մոսկվայի քաղաքականության կաթսայի մերձակայքում լինելու շնորհիվ իմ ստացած տպավորությունների, դիտարկումների և, որպես ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար, որոշ հարցերի քննարկմանը մասնակցություն ունենալու արդյունք են։

Անդրադառնանք այդ մասնակցության մի քանի ուսանելի դրվագներին, որոնք կփորձեմ նկարագրել սպառիչ մանրամասներով։

Հենց սկզբից ասեմ, որ խոսքը գնալու է տհաճությունների, վեճերի ու բախումների մի անընդմեջ շարքի մասին։ 1990 թ. դեկտեմբերի 15-ն էր. ԽՄԿԿ Կենտկոմի պլենումը սկսվելուց առաջ տեղի ունեցավ իմ անձնական ծանոթությունը Գորբաչովի հետ։ Նա ինձ ջերմությամբ ընդունեց, ասելով, թե այս երկու օրս կհանդիպենք և մանրամասն կքննարկենք Հայաստանի հետ առնչվող խնդիրները։

Դեկտեմբերի 16-ի առավոտյան կոմկուսի մի խումբ առաջին քարտուղարների հետ սպասում ենք պլենումի նիստի սկսվելուն։ Հեռվում երևում է Գորբաչովը և ուղիղ մոտենում է ինձ ու բարձր ձայնով ասում. «Ձեր բոյեվիկները նորից այլանդակություններ են արել։ Դրա վերջը ե՞րբ պիտի դրվի»։ «Երբ որ Ղարաբաղում վերականգնվեն իշխանության խորհրդային օրգաններն ու կուսակցական կառուցվածքները»— պատասխանում եմ ես։ «Ինչպե՞ս վերականգնել իշխանության տեղական օրգանները, երբ Ղարաբաղի հայերը ձախողում են Ադրբեջանի Գերագույն խորհրդի ընտրությունները»։ «Բոյկոտում են, որովհետև Ադրբեջանի ղեկավարության խոստումներին չեն հավատում և դրա համար ավելի, քան հիմքեր ունեն»։ Գորբաչովի դեմքը դաժանության կծիկ է դառնում։ «Ինչպես երևում է, Դուք էլ նրանցից եք։ Հայաստանի Կոմկուսի ղեկավարները իրենց կուսակցությանը պարտության մատնելով չեն բավարարվում։ Ի՞նչ է, Դուք ուզում եք, որ Ադրբեջանի կոմկուսն է՞լ իշխանությունից զրկվի, թե՞ Մութալիբովն էլ պիտի հետևի վրացիների օրինակին ու վերացնի Ղարաբաղի ինքնավար մարզը»։ Այս ասելով, նա ինձ թողեց ու հեռացավ։ Որոշեցի, ինչպես ասում են՝ երես պընդացնել։ Գորբաչովը մոտեցավ ակադեմիկոս Շատալինին։ Ես ևս մոտեցա ու կանգնեցի նրա կողքին, հասկացնել տալով, որ մեր «զրույցը» չի ավարտվել։ Նա շուռ եկավ դեպի ինձ։ Ասացի. «Դուք իզուր եք զայրանում, այն ինչ մենք առաջարկում ենք, ստեղծված իրավիճակում ամենաարդար ու միակ հնարավոր քայլն է։ Ադրբեջանի ղեկավարությունն արգելում է մարզային խորհրդի ընտրությունները, ի պատասխան դրան, հայերը բոյկոտում են Ադրբեջանի Գերագույն խորհրդի ընտրությունները։ Այսինքն փոխադարձ անվստահությունը թույլ չի տալիս գործը մեռյալ կետից շար-

ժելու»։ Այդ պահին մոտենում է Լուկյանովը ու գրեթե կոպտորեն դիմում ինձ. «Ադրբեջանի օմոնականներին Ղարաբաղից դուրս բերելու հարցը ևս լուծեցինք, հիմա՞ ինչ եք ուզում»։

Բացատրում եմ, որ Ղարաբաղում իշխանության մարմինների ընտրությունները փակուղուց հանելու համար նպատակահարմար է թե՛ տեղական խորհուրդների և թե՛ Ադրբեջանի Գերագույն խորհրդի ընտրությունները նշանակել նույն օրը։ Լուկյանովը թե. «Մենք մտադիր ենք հենց այդպես էլ վարվել։ Եկեք այսօր երեկոյան կամ վաղը, այդ հարցը մանրամասն քննարկենք և առաջարկություններ պատրաստենք Միխայիլ Սերգեևիչի համար»։ Համաձայնվում եմ։

Մինչև հանդիպումը որոշում եմ ստուգել ադրբեջանական օմոնականների Ղարաբաղից դուրս բերելու մասին Լուկյանովի ասածի ճշտությունը։ Պարզվում է, որ դա իրականության հետ ոչ մի կապ չունի։ Մոտենում եմ Պուգոյին և ասում. «Ղարաբաղից օմոնականներին դուրս բերելու մասին Լուկյանովն ինձ ասաց, բայց իրականում դրանք ոչ միայն դուրս չեն բերվել, այլև թարմ համալրումներ են ստանում»։ Պատասխանում է. «Եթե Դուք հավատում եք ոչ թե ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահին, այլ ինչ որ պատահական մարդկանց, ես ոչինչ ասել չեմ կարող»։ «Ով ինձ տեղեկություն է հայտնել, պատահական մարդ չէ, այլ պատասխանատու աշխատող և բացարձակապես վստահելի անձնավորություն։ Իսկ հնարավոր է Ձեզ թյուրիմացության մեջ են գցել»։ «Ոչ,— ասում է,— ես ամենայն պատասխանատվությամբ հայտարարում եմ, որ մինչև վաղը Ղարաբաղում ոչ մի օմոնական չի լինելու»։

Իսկ առավոտյան Ստեփանակերտից հայտնեցին, որ օմոնականները մնում են իրենց տեղերում։ Զանգահարում եմ Լուկյանովին. «Ե՞րբ ենք հանդիպելու ընտրությունների վերաբերյալ առաջարկությունները կազմելու»։ «Որոշեցինք Ձեզ նեղություն չտալ, մենք ինքներս կկազմենք»։ «Իսկ եթե ես շատ ցանկանամ մասնակցել այդ աշխատանքին, հնարավոր կլինի՞»։ Լուկյանովը խուսափողական պատասխան տվեց։ Ես շարունակում եմ. «Իդեպ ասեմ, որ Ղարաբաղից ոչ մի օմոնական դուրս չի բերվել»։ Խոսակցությունը բավականին

ռուր էր, այնքան սուր, որ միշտ չափված ձևված այդ գործիչը անցավ հիշաշարության։ «Պլենումում ձեզ տեսնելով ես զարմացա, գիտեք չէ՞, թե ինչը նկատի ունեմ»։ «Իհարկե գիտեմ։ Ինչպե՞ս կարող եմ մոռանալ, ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղարի աշխատասենյակում ձեր բղավելը, թե կուսակցությունում ես տեղ չունեմ։ Իսկ Դուք հիշո՞ւմ եք, թե ի՞նչն էր դարձել ձեր և Դոլգիխի ահեղ զայրույթի պատճառը»։ Իսկ պատճառն այն էր, որ հեռուստատեսությունով, որտեղ աշխատում էի այն ժամանակ, գնացել էր ընդամենը չորս րոպե տևողությամբ մի սյուժե՝ Սումգայիթի զոհերի հիշատակի ծաղկեպսակների համայնապատկերի վրա երևում է Սիլվա Կապուտիկյանը և զայրույթի խոսք ասում ադրբեջանցիների գազանությունների ու դրանց կազմակերպիչների մասին։

Հարկ եմ համարում նկատել, որ Լուկյանովը, ումը մենք հետագայում հեռուստատեսությունով գրեթե ամեն օր տեսնում էինք Գերագույն խորհրդի նիստերը վարելիս, արտաքին տպավորության առումով այլևս այն Լուկյանովը չէր, որին ինչ-որ չափով գիտեինք նրա Հայաստանում տևական ժամանկով լինելու ընթացքում։ Հայաստանում Լուկյանովը բիրտ տրամաբանությամբ ու գործելակերպով մի մորթապաշտ իշխանիկ էր, իսկ սպիկերի պաշտոնում նա արդեն դրսևորում էր մեծ ճկունություն և ժողովրդավարական խաղերի հմտություն ու տաղանդ։ Ինչը չի կարելի ասել նրա երկվորյակի՝ Դոլգիխի մասին, որին մեր հեռուստատեսության աշխատողները կնքել էին. «Քյոխվա» մականունով։ Մի բան սակայն ինձ համար ակնհայտ էր, որ Հայաստանում և Արցախում իրադարձությունների ողբերգականացման հարցում այս երկու գործիչները որոշակի ներդրում ունեցան։

Ինչևիցե։ Վերը նշվածը եղավ Լուկյանովի հետ իմ նախավերջին հեռախոսազրույցը։ Տպավորությունս սակայն այն էր, որ մեկ օրվա ընթացքում ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահի կեցվածքի ու մոտեցման շեշտակի փոփոխությունը հետևանք էր ոչ թե անձնական տրամադրվածության, այլ՝ նորից գործել էր Գորբաչով—Լուկյանով—Մութալիբով եռանկյունին։ Տվյալ դեպքում այդ եռանկյունու վճիռն էր՝ մինչև Ղարաբաղում Ադրբեջանի Գերագույն խորհրդի ընտրություն-

ները չկայանան, այլ ընտրությունների մասին խոսք լինել չի կարող։

Վերադառնում եմ Երևան, իսկ մի քանի օր անց մեկնում եմ Ստեփանակերտ։ Այն, ինչ տեսա քաղաքի օդանավակայանում, վեր էր երևակայությունից։ Այդ տարածքով անցնող ամեն մի հայ իսկապես ենթարկվում էր ստորացման ու նվաստացման գործողությունների, որը զերծ չէր նաև բրոնության ու չարաշահումների փաստերից։ Ստեփանակերտում մի քանի ժամ մնացինք, և երբ վերադարձանք օդանավակայան, ինքներս մեզ վրա զգացինք օմոնականների «հնարամտությունները»։ Շուտով երևաց նաև հատուկ շրջանի պարետը՝ մի երիտասարդ գեներալ, և զինվորական պատիվ բրոնած հայտարարեց. «ԽՍՀՄ պրեզիդենտը պահանջում է, որ դուք անմիջապես թողնեք արտակարգ դրության շրջանի սահմանները»։ Ասացի, որ առանց պրեզիդենտի հանձնարարության էլ արդեն մեկնում եմ Երևան և ավելացրի. «Ինչո՞ւ եք երկրի ղեկավարությանը թյուրիմացության մեջ գցում ձեր կեղծ տեղեկություններով։ Մոսկվայում կարծում են, թե ադրբեջանական օմոնականները ԼՂԻՄ-ի սահմաններից դուրս են հանված, իսկ, ինչպես տեսնում եք, օդանավակայանն ամբողջությամբ նրանց ձեռքում է»։ Գեներալը վճռականապես հերքեց ասածս, պնդելով, որ ամեն օր Մոսկվա հատուկ հաղորդագրություն է գնում օմոնականների վերաբերյալ։ «Մենք պահանջում ենք օմոնականներին դուրս հանել արտակարգ դրության շրջանից, որովհետև նրանց ներկայության պայմաններում արտակարգ դրությունը կորցնում է իր նշանակությունը։ Ադրբեջանի ղեկավարությունը, հայտարարելով, Ոչ սա Ադրբեջանն է և գերագույն իշխանությունն իրեն է պատկանում, գործնականում մեզ դուրս է մղել բոլոր այն օղակներից, որոնք կոչված են որոշիչ դեր խաղալու բանակի գործունեության հաջողության համար։

Պաշտպանության մինիստրությունը որևէ քայլ չարեց մեր բարձրացրած հարցերի լուծման ուղղությամբ։ Հարկադրված եղանք դիմումներ հղել Նիշանովին, Լուկյանովին ու Գորբաչովին՝ խնդրանքով, որ ադրբեջանական օմոնականները դուրս հանվեն ԼՂԻՄ-ից։ Սակայն արդեն 11 օր անցել է և ոչ մի պատասխան»։

Անբարոյականությո՞ւն է։ Իհարկե։ Իրենք չէին թույլ տվել, որ օմոնականները ԼՂԻՄ-ից դուրս հանվեն, իսկ ինձ հայտարարում էին, թե նրանք Ղարաբաղից արդեն հանված են։

Երևան վերադառնալով, վերջին անգամ զանգահարեցի Լուկյանովին։ Համառոտակի պատմեցի Ստեփանակերտ կատարած ուղևորության, օմոնականների, զինվորականների մասին։ Նա լուռ լսեց ու ցտեսություն ասելով, լսափողը դրեց։ Այլևս ոչ մի հարցով նրա հետ առնչություն չունեցա։

Առաջին իսկ հանդիպումների ընթացքում հասկացա, որ առանց պետական իշխանության կոմկուսը չի կարող գոյատևել։ Դա շատ հստակ արտահայտվում էր հենց կուսակցության ներսում։ Որոշակիորեն ակնհայտ էր, որ դեռևս իշխանության գլուխ կանգնած և դրանից զրկված կոմկուսների նկատմամբ վերաբերմունքի մեջ մեծ անդունդ էր առաջացել։ ԽՄԿԿ-ն որպես ամբողջական կուսակցություն, չնայած այդ կապակցությամբ նրա 28-րդ համագումարի ընդունած որոշմանը, այլևս գոյություն չուներ։ Նրա ղեկավարությունը կուսակցության վաղվա օրվան չէր հավատում, այդ ղեկավարության միջև զարգանում էին անհաշտ ու անլուծելի հակասություններ։ Կուսակցությունը քայքայվում էր և նրա երեկվա օրվանից միայն արտաքին կեղևն էր մնացել։

Անհուսալիորեն դեպի քայքայում ու մասնատում գնացող ԽՄԿԿ-ում աշխատելն այլևս ժամավաճառություն էր։ Մանավանդ՝ անձնական առումով էլ իմ և կուսակցության մի քանի ղեկավար գործիչների հարաբերությունները հենց սկզբից կրեցին փոխադարձ անվստահության, նույնիսկ հակակրանքի բնույթ։

Փետրվարի վերջերին համոզվեցի, որ Մոսկվայի այդ ղեկավարության հետ հարաբերություններում որևէ հաջողություն ակնկալել չեմ կարող։ Եվ գործնականում դադարեցի ԽՄԿԿ Կենտկոմի աշխատանքներին մասնակցելուց՝ պլենումներում ու խորհրդակցություններում ելույթ չէի ունենում, դրանց աշխատանքներին պարզապես չէի մասնակցում. ներկա եղա քաղբյուրոյի միայն երկու նիստի։ Մեկուսացումը կատարյալ էր, իհարկե դա վատ էր։ Ավելի ճիշտը զբաղեցրած պաշտոնից հեռանալն էր։ Բայց չէի համարձակվում այդ քայլին դիմել։ Այն կարող էր որակավորվել դասալքություն։

Ինձ մի բան էր միայն շատ հետաքրքրում՝ ինչպիսի՞ հնարավորություններ կան Արցախի հարցի ինչ-որ, թեկուզ ոչ ամբողջական լուծման հասնելու՝ Ադրբեջանի ղեկավարության հետ ուղղակի բանակցությունների միջոցով։ Մոսկվայում մի քանի ժամ տևողությամբ զրույց ունեցա Մութալիբովի հետ։ Պայմանավորվեցինք սկզբունքային նշանակություն ունեցող որոշ հարցերում։ Դրա հիման վրա կազմեցինք Ղարաբաղի ճգնաժամի հաղթահարման ուղղությամբ քայլերի աշխատանքային պլան։ Մինչև Գորբաչովին ուղարկելը, այն հանձնեցի Հայաստանի Հանրապետության ղեկավարությանը և քննարկեցի Ղարաբաղցի մի խումբ պատգամավորների հետ, որոնք, չնայած դժվարությամբ (նրանց հասկանալ կարելի էր), համաձայնեցին պլանի հետ, բացառությամբ մեկ հարցի։ Դա հետևյալն էր. նշված պլանն իրականացնելու համար ես անհրաժեշտ չէի գտնում (նույնիսկ վնասակար էի համարում) տվյալ հարցի վերաբերյալ Միության Գերագույն խորհրդի կամ ԽՍՀՄ պրեզիդենտի որոշման կամ հրամանագրի ընդունումը, իսկ ղարաբաղցիները՝ դրա վրա պնդում էին։

Ի՞նչ էր իրենից ներկայացնում այդ պլանը։ Քանի որ տեքստը չունեմ ձեռքի տակ, ներկայացնում եմ հիշողությամբ։

1. Լեռնային Ղարաբաղից ԽՍՀՄ Գերագույն խորհրդի երկու պատգամավորի (Պողոսյան և Ջաֆարով) հանձնարարվում է ԼՂԻՄ-ում կազմակերպել խառը հանձնաժողովի անդամների ընտրությունները (հնգական հայ և ադրբեջանցի)։

2. Այդ խառը հանձնաժողովի խնդիրն է՝ տարբեր մակարդակների խորհուրդների, ինչպես նաև կուսակցական օրգանների ընտրությունների նախապատրաստումն ու անցկացումը և, մինչ վերը նշված օրգանների կազմավորվելը, կատարել մարզի իշխանության բարձրագույն մարմնի պարտականությունները։

3. Բոլոր մակարդակի, այդ թվում նաև Ադրբեջանի Գերագույն խորհրդի, ընտրությունների համար սահմանվում է մեկ միասնական օր։

4. Զինված խմբերն ու օմոնականները մարզից անմիջապես դուրս են բերվում։ Հայաստանի և Ադրբեջանի կառավա-

բությունները պարտավորվում են թույլ չտալ զենքի և զինամթերքի ներհոս ինքնավար մարզ։

5. Անմիջապես քայլեր են կատարվում Գորիս—Լաչին ճանապարհի բացման ուղղությամբ։ Լաչինում ու Ստեփանակերտի օդանավակայանում վերահսկողությունն իրականացվում է խորհրդային բանակի ներկայացուցչի և հավասար թվով հայերից ու ադրբեջանցիներից կազմված խմբերի միջոցով։

6. Ընտրություններից հետո ԼՂԻՄ-ի կարգավիճակում փոփոխություն է կատարվում, այն վերածվում է ինքնավար հանրապետության՝ Ադրբեջանի կազմում։

ԽՄԿԿ կենտկոմը այս պլանը սահմանված կարգով բազմացնում և ուղարկում է միութենական մարմիններին, համապատասխան նախարարություններին ու գերատեսչություններին՝ նրանց կարծիքներն ու առաջարկությունները ստանալու համար։ Արդյունքում պլանն ընդհանուր հավանության է արժանանում։ ԽՄԿԿ Կենտկոմ է հրավիրվում Մութալիբովը։ Նա ծանոթանում է պլանին, ու բացի մարզի կարգավիճակը բարձրացնելու վերաբերյալ կետից, մյուսների հետ, առանց որևէ դիտողության, համաձայնում է։

Սակայն նորից իրենց սև գործն են անում դիվանագիտական անպարկեշտ խաղերը։ Մի կողմից, ԽՄԿԿ կենտկոմից մեղ շտապեցնում են առաջարկված պլանի կատարման ուղղությամբ Մութալիբովի հետ գործնական քայլեր կատարել, իսկ մյուս կողմից, պատրաստվում և ԽՄԿԿ կենտկոմ է ներկայացվում մի այլ զեկուցագիր-առաջարկություն։

Մեր ներկայացրած պլանը մի կողմ է դրվում և կենտկոմի քարտուղարության փակ նիստում քննարկվում Մութալիբովի հեղինակած այդ առաջարկությունները։ Այդ փաստաթուղթն անվերապահ հավանության է արժանանում և որպես ԽՄԿԿ կենտկոմի պաշտոնական երաշխավորություն հասցեագրվում է Գորբաչովին։ Իմ խորը համոզմամբ այս քայլը նախապես համաձայնեցված էր Գորբաչովի հետ։ Մեկ նախադասությամբ բնութագրելով քարտուղարության այդ որոշումը, միանգամայն իրավացի կլինենք, եթե ասենք, որ դա Ղարաբաղը հայաթափ անելու մի համընդհանուր ընդգրկում ունեցող ծրագիր էր, որը քողարկվում էր հայ զինված խմբե-

րից Արցախը մաքրելու և «անձնագրային ռեժիմը խախտողների դեմ պայքարն ուժեղացնելու» շղարշի տակ։ Ռազմական բնույթի այդ լայնածավալ միջոցառմանը մասնակցելու էին թե՛ ԽՍՀՄ և Ադրբեջանի ներքին գործերի նախարարությունների և թե՛ խորհրդային բանակի ուժերը։

Մոսկվան այս ահռելի ռազմաուժը Արցախի վրա էր ուղարկում միութենական հանրաքվեին չմասնակցելու համար Հայաստանին պատժելու դիտավորությամբ։ Եթե հետապնդած նպատակը այդքան հրեշավոր չլիներ, հարցի նախապատրաստմանը մասնակից կդարձնեին նաև Հայաստանի ներկայացուցիչներին, կամ գոնե նրանց տեղյակ կպահեին։ ԽՄԿԿ կենտկոմն հավատարիմ էր իրեն ու իր նենգ քաղաքականությանը։ Դեռևս 1988 թ. փետրվարի 21-ին իր որոշումով նա ոչ միայն Անդրկովկասում կրքեր սանձազերծեց, այլև հայերին մեղադրելով «էքստրեմիզմի» մեջ, ամբողջ երկրում հակահայկական տրամադրություններ բորբոքեց։

Այս որոշումը հիմք դարձավ Արցախում մարտական և այլ գործողությունների պլան մշակելու համար։ Հետագայում մի հավաստի աղբյուրից տեղեկացանք, որ այդ գործողությունները նախատեսված էր սկսել ապրիլի առաջին կեսին։ Ի դեպ, որոշ ուժեր մտադրվել էին Հայաստանի կոմկուսի ունեցվածքը պետականացնելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Խորհրդարանի որոշումը պատրվակ դարձնելով, զորքեր մտցնել նաև Հայաստան։

Եթե հիշողությունս չի դավաճանում ապրիլի սկզբներին էր, որ ԽՄԿԿ կենտկոմում տեղի ունեցավ խորհրդակցություն՝ նվիրված Հայաստանի կոմկուսին։ Խորհրդակցությանը մասնակցում էին կենտկոմի բոլոր բաժինների վարիչները և մի քանի քարտուղարներ։ Հայաստանից հինգ հոգի էինք՝ կենտկոմի երեք քարտուղար, Երևանի քաղկոմի քարտուղարը և ՀԿԿ վերահսկիչ հանձնաժողովի նախագահը։ Մենք խորհրդակցությանը գնացել էինք քննարկելու մեկ հարց՝ հիմնարկ-ձեռնարկությունների, արտադրական կոլեկտիվների և այլնի ապաքաղաքականացման մասին Հայաստանում ընդունված օրենքից հետո ինչպես պետք է կազմակերպվեր աշխատանքը, որպեսզի կուսակցությունը ի վիճակի լիներ գոյատևել ու գործել։ Սակայն երբ ԽՄԿԿ կենտկոմի քարտուղար Մանայեն-

կովը, բացելով խորհրդակցությունը, բաներ ասեց, և արեց հայտարարություններ, որոնք ոչ միայն տրամաբանությունից դուրս էին, այլև կրում էին բացարձակ սադրիչ բնույթ, խորհրդակցությունը կանգնեց ձախողվելու վտանգի առաջ։ Նա փաստորեն մեղադրեց ՀԿԿ-ին, որ չի պայքարում իշխանությունը ետ վերցնելու համար։ Ներկա գտնվողներից մեկը նույնիսկ առաջարկեց Հայաստանի կոմունիստներին զենք բաժանել։ Իհարկե, դա չէր կարող վրդովմունքի ալիք չբարձրացնել։ Անմիջապես ընդհատեցինք Մանայենկովին ասելով. «Եթե մեզ կանչել եք այստեղ սադրիչ դիտավորություններով, ապա սխալ հասցե եք ընտրել և մենք չենք կարող մասնակցել նման խորհրդակցության»։ ԽՄԿԿ կենտկոմի ղեկավարությունը մեղադրվեց անդեմության ու երկերեսանիության, անլրջության ու անկարողության մեջ։ Կրքերը բորբոքվեցին ու կենտրոնացան Գորբաչովի քաղաքականության և անձի շուրջը։ Նրա հասցեին ասվեց ամեն ինչ՝ ոտնահարելով պարկեշտության ու պաշտոնական ենթակարգության բոլոր նորմերը։ Կենտկոմի քարտուղարներից ջանքեր պահանջվեց խոսակցության ուղղությունը փոխելու համար։

Ճիշտ է, դրանից հետո ընկած շրջանում, մանավանդ վերջերս, թե՛ մեզանում և թե՛ արտասահմանում փառաբանվում է Գորբաչովի անձն ու գործը, սակայն իմ հաստատ համոզմունքն է, որ աշխարհում թմբկահարվող այդ «մեծ ռեֆորմատորը» ոչ միայն քաղաքական անպատասխանատվության ու անլրջության մարմնավորում է, այլև՝ փոքրոգի և քինախնդիր անձնավորություն։ Բավական էր զեկուցեին նշված խորհրդակցության մասին, և մեր նկատմամբ Գորբաչովի նախկին նույնիսկ արտաքին վերաբերմունքից ոչինչ չմնաց։ Նա այդ չէր էլ թաքցնում։

Խորհրդակցության օրը, ուշ գիշերին հնչում է հեռախոսի զանգը։ Լսափողը վերցնում եմ և լսում մի քնատի խոպոտ ձայն. «Բարի երեկո, Ստեփան։ Գենադին է խոսում։ Միայն մեկ հարց, ծերուկ, ի՞նչ ես կարծում, եթե զորք մտցնենք Հայաստան, հայ ժողովուրդը դա ինչպե՞ս կընդունի»։ Մենք կոմերիտական աշխատանքից իրար գիտեինք։ Ես սրտնեղեցի, թե նախ դա ինչ հեռախոսային խոսակցության նյութ է, և ասա. «Չգիտեմ, թե այդ որ մեղքերի համար եք զորք

մտցնում Հայաստան,— ասացի,— բայց իմացեք, որ դրա դեմ առաջինը ոտքի կելնեն կոմունիստները»։ Համենայն դեպս, պայմանավորվեցինք հաջորդ օրը հանդիպել։ Ռուսովոտյան գնացի Կրեմլ։ Հայաստան զորք մտցնելու հարցի շուրջ Ցանաևի և իմ միջև կարծիքների փոխանակությունը շատ կարճ տևեց։ Ասացի, որ Հայաստանի կոմկուսը մի անգամ, 1920 թվականին, օգտվել է Կարմիր բանակի ծառայություններից և երկրորդ անգամ այդ անելը ոչ միայն բարոյական չէ, այլև հակացուցված է։ Եվ ավելացրի. «Դուք Հայաստանում զենքով գործելով ԽՍՀՄ-ը փրկել չեք կարող։ Հայաստանը դրա համար շատ փոքր է։ Լավն ու վատը միշտ էլ ձեր այս նստավայրից է եկել և վճռողն այստեղ կատարված փոփոխություններն են»։

Չեմ թաքցնում, այդ օրերին ես պատրաստ էի ձեռք մեկնել ցանկացած քաղաքական գործչի, միայն՝ ոչ Գորբաչովին։ Եղել ու մնում եմ այն կարծիքին, որ Գորբաչովի ու վերակառուցման մյուս «ճարտարապետների» (Ա. Յակովլև, Է. Շեվերդնաձե և այլոք) քաղաքական անհեռատեսության, երկրի բախտի նկատմամբ անպատասխանատվության ու պետական իմաստունության բացակայության հետևանքով վարչա-հրամայական կարգերից ժողովրդավարությանն անցնելու պատմականորեն հասունացած ու անհրաժեշտություն դարձած գործընթացը վերածվեց ամայացնող հրդեհի, մի աղետի, որն իր կործանարար հորձանքի մեջ առավ հարյուր միլիոնավոր մարդկանց, նրանց մատնեց թշվառության ու քաղցի, սկզբնավորեց անմիտ ու ստոր պատերազմներ ու արյունահեղություններ, որոնք արդեն հինգ տարի դարձել են մեր կյանքի անբաժան մասը, մեծագույն ողբերգությունը։ Եվ դրանց վերջը ոչ միայն չի երևում, այլև գնալով մեծանում են արյունահեղությունների ծավալներն ու ընդգրկումները, բախումները վերածվում են պատերազմների, այս բառի ժամանակակից իմաստով։

Վերակառուցման խորհրդային «ճարտարապետներն» իրենց նեղություն անգամ չէին տվել ուսումնասիրելու տոտալիտարիզմից ժողովրդավարությանն անցած մի ամբողջ շարք երկրների փորձը, չկարողացան ազատվել դասակարգայնության կանխակալ հոգեբանությունից, շարունակելով

առաջ մղել այն տեսակետը, թե ժողովրդավարության կրող կարող են լինել միայն առաջադիմական ու հեղափոխական խավերը և ուժերը։ Նրանք այդպես էլ չհասկացան, թե ինչպես պատահեց, որ անգլիական ժողովրդավարության կրնքահայրը առաջին հերթին անգլիական պահպանողականությունն էր։ Աղջատվեց նաև ժողովրդավարության բուն իմաստը՝ մարդու իրավունքների ու նրա անձնական պլանների իրականացման համար ռեալ հնարավորությունների ստեղծում (որը հիմնական նպատակն է), առաջին պլան մղվեցին և միջոցից նպատակի վերածվեցին մի շարք խոշոր նշանակություն ունեցող սկզբունքներ, որոնք խճճեց հասարակական միտքը, ստեղելով տարընթացությունների քաոս։

Այնպիսի երկրներում, ինչպիսիք ԽՍՀՄ-ն ու Չինաստանն են, անցումը ժողովրդավարությանը մեկ ուղի ունի՝ օրենքի և օրինականության ամրապնդում և տնտեսական զարգացման ու ազգաբնակչության կենսամակարդակի շեշտակի աճ։ Անցման մյուս բոլոր ուղիները լեցուն են վտանգներով ու աղետներով։ Չէ որ, «հացի խնդրի», քաղցի դեմ պայքարի հիմքի վրա կարող է ստեղծվել միայն համընդհանուր քաոս, բռնություն, բռնապետություն, այլ ոչ թե ժողովրդավարություն։ Ժողովրդական զանգվածները, եթե լուծված չեն նրանց ապրելակերպի ու կենսամակարդակի կարևորագույն հարցերը, ինչ-որ ժամանակ կարող են արբենալ քաղաքական ազատություններով, բայց միայն ինչ-որ ժամանակ, ոչ տևականորեն։ Դրան կհաջորդի հիասթափությունը, հասարակական կյանքի նկատմամբ անտարբերությունը, և ապա՝ ընդվզումը, լարվածության անընդհատ աճը, որը կարող է ունենալ ամենաաղետալի հետևանքներ։ Դժբախտաբար, եթե Չինաստանում այդ ճշմարտությունը հասկացան և գնացին այս կամ այն չափով ընդունելի ուղիով, որը առանց հասարակական լուրջ ցնցումների երկրին ընդհուպ մոտեցրեց ժողովրդավարության սկզբունքների ներդրմանը (և եթե այդ գործը Չինաստանում կանգ առավ, ապա հետևանք էր ԽՍՀՄ-ում առաջացած քաոսի հանդեպ սարսափի), իսկ մենք գնացինք միանգամայն այլ ուղիով, ընկանք աղետների ու անիշխանության հորձանուտը, միշտ մնալով ամեն ինչ նորից սկսելու վիճակում։

Գորբաչովն ու նրա համախոհները պետք է պատասխանատվության կանչվեն ոչ միայն որպես քաղաքական-պետական գործիչներ, այլև որպես սովորական քաղաքացիներ, որոնց գործունեությունն ուղղակիորեն հանգեցրեց տնտեսական, քաղաքական ու բարոյահոգեբանական քայքայմանը, հասարակությանը ներքաշեց սոցիալական, ազգային, խմբակցական արյունահեղ կռիվների ոլորտը։ Նման վճռական, վտանգավոր, կենաց և մահու քայլ կատարելուց առաջ պահանջվում էր հազար անգամ չափել, ու մասնավորապես քննել սեփական ժողովրդի պատմությունը, բնավորությունը։ Չէ որ պատմությունը դպրոց է։ Յուրաքանչյուր ժողովուրդ իր բնավորությունն ունի։ Մեկը հակում ունի արագ փոփոխությունների (օրինակ, ֆրանսիացիները), իսկ մյուսը՝ ընդհակառակը (օրինակ անգլիացիները)։ Ինչ վերաբերում է ռուսներին, ապա հասարակական կյանքի հեղաբեկումների և նույնիսկ առանձին փոփոխությունների գործում նրանք ծայր աստիճան պահպանողական են։ Լինելով եվրոպական երկիր, Ռուսաստանը ճորտատիրությունը վերացնելուն ձեռնամուխ եղավ միայն 1861 թվականին, որի նախաձեռնողը՝ ցար Ալեքսանդր 2-րդը, ահաբեկչության զոհ դարձավ։ Իսկ նրա հաջորդը, Ալեքսանդր 3-րդը, պահպանողականության ջատագով էր ու ապրեց առոք-փառոք և Ռուսաստանը՝ աշխարհի հզորագույն երկրներից մեկը, 20-րդ դար թևակոխեց որպես կիսաֆեոդալական երկիր։ Ստոլիպինը փորձեց նրան այդ վիճակից դուրս բերել, բայց ոչ միայն ինքը, այլև նրա ընտանիքը դաժան ահաբեկչությունների զոհ դարձան։ Այնուամենայնիվ, շնորհիվ ստոլիպինյան ռեֆորմների, Ռուսաստանը կանգնեց զարգացման եվրոպական ուղու վրա, բայց վրա հասավ հեղափոխությունը և նրան դուրս մղեց այդ ուղուց։ Բոնապետ, պահպանողական Ստալինը կառավարեց 30 տարի ու զբաղեցրած պաշտոնը լքեց բնական մահվան բերումով, իսկ վերափոխման ձգտող Խրուշչովն աշխատանքից վտարվեց։ Քարացածությունն ու վարչա-հրամայական համակարգը մարմնավորող Բրեժնևը կառավարեց 18 տարի և մեռավ իր բարձրագույն պաշտոններում, իսկ վերակառուցման գլխավոր ճարտարապետ Գորբաչովին չհանդուրժեցին, այսպես կոչված, ժողովրդավարները։ Սրանք պատահականություններ

չեն։ Կարելի է հայացք նետել Ռուսաստանի պատմությանը՝ սկսած Իվան Ց-ից մինչև մեր օրերը և համոզվել, որ մուժիկը երբեք արմատական փոփոխությունների չի ձգտել և իրեն չի պատկերացրել ռուսական համայնքից դուրս։ Ինչպես ասում են, արիստոկրատական եղել է նաև ռուս մտավորականության ճնշող մեծամասնությունը։ Ազնվական ծագում ուներ և հենց այդ մեծամասնությունն էլ ձևավորեց ռուսական արիստոկրատիայի փայլուն համաստեղությունը։ Հաշվի չառնել ռուսական կյանքի այս առանձնահատկությունները և գնալ հասարակական հարաբերությունների արմատական հեղաշրջումների, նշանակում է ծնել մի նոր օրապակաս այլանդակություն, որպիսիք ծնել է Ռուսաստանը ոչ մեկ անգամ։ Դրա արտահայտություններից մեկն էլ Հոկտեմբերյան հեղափոխությունն էր, որն անունով լինելով սոցիալիստական, վերջնահաշվում վարկաբեկեց այդ գաղափարն ու թերևս երկար ժամանակով մարդկությանը ետ շպրտեց սոցիալական արդարության համար պայքարից։

Այս մտորումները կիսեց Ցանաևի հետ։ Նա ասաց, թե ինքը ևս Գորբաչովի վարած քաղաքականության հետ համաձայն չէ, մտադիր է առաջիկա շաբաթներին հրաժարվելու ԽՍՀՄ փոխնախագահի պաշտոնից։ Նաև ասաց, որ մի խումբ ընկերներ այն կարծիքին են, որ երբ Գորբաչովը Ճապոնիա կատարելիք ուղևորությունից վերադառնա, հարկ է նրան առաջարկել հրաժարվելու պրեզիդենտությունից, առողջական ծանր վիճակի ձևական պատճառաբանությամբ։ Ճիշտն ասած, այդ պահին Ցանաևի խոսքերն ու վարքագիծը ինձ անլուրջ թվացին. «Դուք մոռանում եք, որ մենք Կրեմլում ենք, այստեղ հազարավոր անտես ականջներ կան»,— ասացի։ «Ինչ ուզում է, թող լինի,— պատասխանեց,— այսպես այլևս ապրել չի կարելի»։ «Իսկ եթե Գորբաչովը Ձեզ լսելուց հետո գործի դնի իր անսահմանափակ հնարավորությունները»— հարցրի ես։ «Նույնիսկ դրան եմ պատրաստ»— եղավ պատասխանը։ «Ենթադրենք ձեր ձեռնարկը հաջողվեց և Գորբաչովը, համոզվելով, որ ինքը այլևս ղեկավարել չի կարող, գնաց պատվավոր թոշակի, ո՞վ է փոխարինելու նրան»։ «Լուկյանովը»— իսկույն հետևեց պատասխանը։ Մի պահ չիմացա անելիքս, ինչ որ բառեր ասացի, հետո առօրյա խնդիրների

անդրադարձանք ու նա մոլորված հրաժեշտ տվեցի մոլորված երկրի մոլորված փոխնախագահին։

Հասկացա, որ կոպիտ սխալ եմ թույլ տվել։ Ուրեմն, եթե Գորբաչովին ոչ, ապա այո Լուկյանովի՞ն։ Այստեղ են ասել շրից դուրս գալ ու շրհորն ընկնել։ Եթե նույնիսկ ոչ թե Լուկյանովն, այլ, ասենք Ելցինը։ Իմ խորը համոզմամբ Գորբաչովն անպայման նախապատվելի էր։ Հետևաբար անմիտ և նույնիսկ վնասակար ու վտանգավոր չէ՞ ասպարեզից Գորբաչովի հեռանալը։

Գորբաչովի հարաբերությունները ԽՄԿԿ կենտկոմի, նրա հաստիքային աշխատողների, ղեկավարության հետ բարդ ու խճճված էին։ Մեծ քաղաքականությունն ու պալատական փոխհարաբերությունները նոր միայն այդ շրջանակները ոտք դնողին այնքան էլ մատչելի չեն։ Դա այլ աշխարհ է, կառուցված պրոֆեսիոնալ քաղաքականության բոլոր պահանջներով։ Պրոֆեսիոնալ քաղաքականություն... Հեշտ է ասել։ Նրա կանոններին չտիրապետողի համար դա մութ լաբիրինթոս է, որում նա խարխափելով է քայլում, առանց հասնելու իր հետապնդած խնդիրների լուծմանը։

Մենք իհարկե այդ աշխարհում, չնայած մեր «խելիմաստ մտորումներին ու ուսուցողական ճառերին», սիրողական մակարդակից վեր չենք բարձրանում։ Այդ աշխարհում ասելիքը հարկ է փնտրել ոչ թե բարձրաձայն ասված բառերի, այլ չասվածի կամ անփորձ մարդու համար աննկատելի ակնարկների մեջ։

Կենտկոմի կազմում Գորբաչովի քաղաքականության հետևողական պաշտպանների թիվը չնչին էր, ճնշող մեծամասնությունը այդ քաղաքականության քննադատողներն էին՝ աջից և ձախից։ Վերջիններիս թիվը նույնպես մեծ չէր և նրանք իրենց մոտեցումներով համասեռ չէին։ Կենտկոմի անդամների մեծամասնությունը հարում էր աջ թևին, որը միատարր չէր։ Նա կազմված էր երեք խմբից։ Դրանցից առաջինը կազմված էր բացահայտ հակավերակառուցողականներից, որոնք հիմնականում կուսակցական ղեկավար աշխատողներ էին և վերակառուցումը վտանգավոր ու վնասակար էին համարում ոչ միայն ընդհանրապես, այլև իրենց անձնական շահերի ու դիրքի առումով։ Այս խումբը Ք.Վով

Մեծ չէր, բայց կուռ էր, բացառիկ հետևողական ու եռանդուն։ Գորբաչովին ու նրա քաղաքականությունը նրանք քննադատում էին պարզապես բացառելու, պատմությանը հանձնելու դիրքերից։

Աչերի մեծամասնությունը ոչ թե դեմ էր վերակառուցմանը, այլ այն իրականացնելու գորբաչովյան ռազմավարությանն ու մարտավարությանը։

Անողոք ու անզիջում մարդիկ էին։ Նրանց ուշադրությունից չէր վրիպում և անարձագանք չէր մնում ոչինչ՝ սկսած ամբողջ երկրին վերաբերող մասշտաբային հարցերից, մինչև առանձին հանրապետությունների հետ կապված խնդիրները։ Ահա բազմաթիվ օրինակներից մեկը, որ առնչվում է մեր հանրապետությանը։ Պլենումներից մեկի ընդմիջմանը Գորբաչովը ասաց, թե Հայաստանի ղեկավարները լուրջ սխալ են թույլ տալիս, որ զինված խմբերին զինաթափելու գործում հրաժարվում են օգտվել բանակային ուժերի ծառայություններից։ Ես, ասացի. «Իսկ ինձ թվում է, որ բանակային ուժերն օգտագործելը ճիշտ չէ, քանի որ այն մեր հանրապետության պայմաններում պատճառ կդառնա արյունալի ընդհարումների, մանավանդ, որ դրա դառը փորձը մենք արդեն ունենք»։ Գլխավոր քարտուղարը չպատասխանեց, նույնիսկ տպավորություն ստեղծվեց, որ նա ասվածն ուշադրության չարժանացրեց։ Սակայն պլենումի երեկոյան նիստի վերջում, երբ աչերը, հավաքված միկրոֆոնների մոտ, սկսեցին իրենց հերթական գրոհը Գորբաչովի վրա, ու նրանցից մեկը, մեծ կրքով համոզում էր, թե կենտրոնական կառավարությունը պարտավոր է շտապ և վճռական քայլերի գիմել, օգտագործելով նաև բանակային ուժերը՝ Հայաստանում գործող զինված ջոկատները զինաթափելու համար, Գորբաչովը իսկույն միջամտեց. «Դուք Հայաստանում տիրող վիճակին, նրա ժողովրդի ըմբռնումներին լա՞վ եք ծանոթ, որ նման անվերապահ պահանջ եք ներկայացնում։ Իսկ օրինակ, ընկ. Պողոսյանը բացարձակապես դեմ է մեր միջամտությանը»։ Դրանով կարծես միջադեպը փակվեց։ Բայց երբ հյուրանոց էինք վերադառնում, ինձ մոտեցան միկրոֆոնից խոսողները և սկսեցին իսկական հարցաքննություն, թե՝ իսկապես ես դեմ եմ դրսի միջամտությանը և, եթե դեմ եմ, ապա ինչո՞ւ։ Բա-

նավեճն աստիճանաբար տաքացավ և, ի վերջո, նրանք, կուսակցական նույնիսկ ղեկավար աշխատանքներում մեծ թվով պատահական անձանց երևալու մասին «դատողություններ» անելով, հեռացան։

Հարկ եմ համարում նշել նաև, որ Գորբաչովը իր քաղաքականության և իր անձի վրա զանգվածային, որոշ դեպքերում նույնիսկ ահեղ, հարձակումները կարողանում էր մեծ հաջողությամբ ետ մղել՝ հանդես բերելով բանավիճողի, հրապարակախոսի փայլուն ընդունակություններ։ Նման դեպքերում, շատ հաճախ նա անմիջապես, առանց որևէ բացատրության, հակահարձակման էր անցնում՝ բացառիկ շահեկան կեցվածքով ու ոճով ընդդիմախոսների երեսին շպրտելով. «Ձեր նպատակը ակնհայտ է՝ երկիրը ետ տանել տոտալիտար ժամանակները։ Հայտարարում եմ, որ իմ բոլոր ուժերով ու հնարավորություններով ես այդ թույլ չեմ տա»։ Որքան էլ տարօրինակ թվա, նա աջերի վրա հարձակվում էր ոչ թե ձախերի, այլ՝ նույն այդ աջերի դիրքերից։

Երբ օգոստոսյան հեղաշրջման փորձի ղեկավար կենտրոնը՝ ԱԴՊԿ-ն, հրապարակեց իր ծրագիրը, բացարձակապես ակնհայտ դարձավ, որ նրա բոլոր կետերն արտագրված էին Գորբաչովի ճառերից՝ սկսած երկրում արտակարգ դրություն մտցնելու անհրաժեշտությունից, մինչև սոցիալ-տնտեսական հարցերի լուծումը։ Պատմությանն անծանոթ է նման հեղաշրջում, այն կայացավ, թե ոչ, այդպես էլ անհնար է որոշել։ Սակայն մի բան ակնհայտ է, այդ հեղաշրջում կոչվածն սրբագործեց Գորբաչովի բոլոր խոշոր սխալներն ու նրան դարձրեց անմեղ նահատակ, իսկ Ելցինին՝ համաշխարհային մասշտաբի հերոս, չնայած՝ ո՛չ Գորբաչովն է անմեղ և ո՛չ էլ Ելցինը՝ հերոս։ Բոլորին հայտնի է վերջինիս ողորմելի կեցվածքը ԽՄԿԿ կենտկոմի պլենումում 1987 թվականի ունեցած ելույթից հետո։

1991 թ. ապրիլի 24—25-ին տեղի ունեցավ ԽՄԿԿ կենտկոմի պլենումը։ Նախօրյակին ահազանգներն ավելի շատացան, որոնք ազդարարում էին, թե մոտակա օրերին Արցախում սկսվելու են ծրագրված մարտական գործողություններ։

Իրականությունը պարզելու իմ բոլոր ջանքերը հաջողություն չունեցան։ Թե Պուգոն ու Յազովը, թե Կրյուչկովն ու Գի-

բենկոն խուսափողական պատասխաններ տվեցին, իբր իրենց ոչինչ հայտնի չէ։ Մեղմ ասած, նրանք ստում էին։

Գրեթե ամեն տարի ապրիլի 24-ին ինձ մի որևէ տհաճ բան պատահել է, բայց այն, ինչ եղավ 1991 թվականի ապրիլի 24-ին, վեր էր սպասածից։ Պլենումը սկսվելուց առաջ ԽՄԿԿ կենտկոմի քարտուղարության սենյակում հավաքվեց քաղբյուրոյի նիստ։ Մի մանրուք, բայց մանրուք միայն սովորական մահկանացուների համար։ Քաղբյուրոյի անդամներից միայն ինձ տեղ չէին տվել երկար սեղանի շուրջը։ Սկսվեց նիստը։ Քննում էին պլենումի որոշման նախագիծը։ «Պրավդա» թերթի գլխավոր խմբագիր Ֆրոլովը հայտարարեց, թե որոշման նախագիծը վերակառուցման և Գորբաչովի դեմ ուղղված փաստաթուղթ է։ Դա ազդանշան էր։ Գորբաչովը կրակ կտրած աշխատում էր պարզել, թե ովքեր են գրել նախագիծը և կենտկոմի ղեկավարներից ովքե՞ր են կանգնած նրանց հետևում։ Պահանջեց, որ քաղբյուրոյի բոլոր անդամներն իրենց կարծիքն արտահայտեն և երկար ու հարձակողական երանգով խոսեց այն մասին, թե քաղբյուրոյի որոշ անդամներ գլխավոր քարտուղարի հասցեին թույլ են տալիս անհիմն հարձակումներ ու վիրավորական արտահայտություններ։ Այդ ասելիս նա հայացքը հառել էր ինձ։ Ընդմիջմանը հարցնում եմ Շենինին, ում նկատի ուներ Գորբաչովը։ Նա թե՝ ձեզ, և խորհուրդ տվեց լինել նրա մոտ ու բացատրվել։

Պլենումի ընդմիջմանը թեյի սենյակում ենք։ Գորբաչովը ցուցադրաբար դիմում է Մութալիբովին. «Այազ, ինչպե՞ս ես, տա՞նն ինչպես են»։ Մութալիբովը պատասխանում է. «Շնորհակալություն, Միխայիլ Սերգեևիչ, ոչինչ, ապրում են։ Միայն թե այսօր ցեղասպանության օրն է, անհանգիստ եմ՝ հանկարծ որևէ տհաճ բան չպատահի»...

Որոշեցի խոսակցությանը չխառնվել և ցուցադրաբար հեռացա սենյակից։ Սկզբում մտածեցի բոյկոտել պլենումն ու վերադառնալ Երևան։ Բայց հետո նպատակահարմար համարեցի Գորբաչովին խոսակցության քաշել՝ ասել, որ այն, ինչ կատարվում է, անհնար է դարձնում իմ մնալը պլենումում և ես հրաժարվում եմ նրա աշխատանքներին մասնակցելուց։

Դուրս եկա դահլիճ, դիմացից գալիս էր Լյուդմիլա Հարությունյանը։ Նա հուզված էր. ասաց, թե Գետաշենից 30 հեռագիր է ստացել, որ գյուղի ազգաբնակչության բռնագաղթն օրերի, գուցե նաև ժամերի հարց է։ Ինքս ծայր աստիճանի հուզված եմ ու նրա հետ խոսակցությունը չի ստացվում։ Վերադառնում եմ նախագահության սենյակ։ Մոտենում եմ Մութալիբովին։ Առանց երկար-բարակ մտածելու, դիմում եմ նրան. «Դուք իսկապե՞ս գործողություններ եք սկսում հայերին բռնագաղթելու ուղղությամբ»։ Պատասխանում է. «Մավալուն գործողություններ չեն նախատեսվում, բայց մենք բոլոր միջոցները կգործադրենք հայկական «բոյեվիկներին» զինաթափելու և Ղարաբաղից դուրս քշելու համար։ Մենք չենք մեղավորը, որ համաձայնության հասնել չհաջողվեց»։ «Ինձ թվում է,— ասում եմ ես,— համաձայնության ձախողումը ձեր վրա ուժեղ ճնշման հետևանք էր։ Հայաստանն ամենանախնական պայմաններ էր առաջարկել և դուք ողջունեցիք, իսկ հետո հրաժարվեցիք։ Իմ համոզմամբ Հայաստանի կառավարությունն այսօր էլ կհամաձայնի հայկական զորաճոկատները Արցախից դուրս բերել, եթե նույնն անեք դուք։ Ինչո՞ւ ենք բանակցությունների ուղին թողել և հույս դրել զենքի ուժի վրա։ Դուք քաջ գիտեք, և ինձ էլ ասել եք, որ Ղարաբաղում զենքը հարց չի լուծի, գիտեք նաև, որ ես նույն կարծիքին եմ։ Ավելի լավ չէ՞ մի փորձ էլ անել հարցին խաղաղ լուծում գտնելու համար։ Գուցե երկու հանրապետությունների ղեկավարները մի անգամ ևս հանդիպե՞ն»։ «Դա անօգուտ է»,— պատասխանեց Մութալիբովը։ Փորձեցի համոզել, չհաջողվեց։ Առաջարկեցի միասին գնալ Գորբաչովի մոտ, փորձել նրա միջոցով կանխել արյունահեղությունը։ Մեծ դժվարությամբ համաձայնեց։ Նիստից հետո նախագահությունում սպասում էինք Գորբաչովին։ Երբ նա շուտ եկավ գեպի մեզ, մի սառը հայացք ձգելով ինձ վրա, ասաց. «Ձեր բոեվիկները շարունակում են բռնություններ գործել»։ «Նրանց թիվը նվազել է, բայց ակնհայտ է, որ քանի ապօրինի զենք կրողներ կան, կայուն վիճակ լինել չի կարող»,— պատասխանեցի ես։ Նա աշխուժացավ.՝ «Ես շատ ուրախ եմ, որ դու հիմա այդպես ես մտածում։ Իհարկե, ծրագրված միջոցառումները լավագույնը չեն, և ես դրանց

մեծ զգուշությամբ եմ վերաբերվում, բայց այլ ելք չկա»։ Ու սկսեց բացատրել, թե ինչու այլ ելք չկա։ Կռահեցի, որ խոսում էր Արցախում իրականացվելիք գործողությունների մասին, բնականաբար համակ ուշադրություն դարձած լսում էի, իսկ Մութալիբովը, վախենալով, որ Գորբաչովը կարող է նաև այդ գործողությունների մանրամասներին անդրադառնալ, ասաց. «Միխայիլ Սերգեևիչ, այն ինչ Պողոսյանն ասաց, վերաբերվում է ոչ թե Ղարաբաղում, այլ Հայաստանում գործող բռեվիկներին։ Դե պատկերացրեք, թե նրանք ինչեր են անում Ղարաբաղում»։ Գորբաչովը թույլ չտվեց, որ նա խոսքը ավարտի և դիմեց ինձ. «Այս երկու օրս քեզ կընդունեմ և մանրամասն կքննարկենք բոլոր հարցերը»։

Փորձեցի ճշտել ինձ ընդունելու օրն ու ժամը, քանի որ երեք օր հետո կայանալու էր ՀԿԿ 29-րդ համագումարի 3-րդ փուլը և ես պետք է մեկնեի Երևան։ Իմ խնդրանքին Գորբաչովի գրասենյակի վարիչը պատասխանեց, թե ոչ շուտ, քան ամսի 30-ը, միաժամանակ խոստանալով պրեզիդենտի հետ ճիշտ ժամկետը համաձայնեցնել ու ինձ հայտնել։ Երեկոյան ո՛չ նա զանգահարեց, որ այո, ընդունել կարող է միայն ապրիլի 30-ին։ Հաջորդ օրը վերադարձա Երևան։ Հենց օդանավակայանում ՀԿԿ կենտկոմի քարտուղար Արամ Սարգսյանից տեղեկացա, որ 7-րդ բանակի հրամանատարը ստացել է ԽՍՀՄ պաշտպանության նախարարի հրամանը, որը ի կատարումն պրեզիդենտ Գորբաչովի հանձնարարության, հրամայում է՝ պաշտպանության տակ վերցնել Հայաստանի կոմկուսի ամբողջ շարժական ու անշարժ ունեցվածքը թե՛ Երևանում, և թե՛ հանրապետության մյուս քաղաքներում ու բնակավայրերում։

— Պետք է անմիջապես կանխել։

— Ես ու բանակի հրամանատարն էլ այդ կարծիքին ենք, բայց Մոսկվայից պնդում են կատարել նախարարի հրամանը։

Ծածկագիր է ուղարկվում Գորբաչովին ու Յազովին, հեռախոսով կապվում եմ Շենինի հետ և խնդրում այդ քայլից հետ կանգնել, քանի որ հակառակ դեպքում Երևանում կկրկնվեն Ռիգայի դեպքերը՝ անհամեմատ ավելի լայն ընդգրկումներով ու աղետալի հետևանքներով։

...Արցախից ավելի ու ավելի անհանգստացնող լուրեր էին ստացվում։

Կնոկոմի 2-րդ քարտուղար Արկադի Սարգսյանն իմ խնդրանքով լինում է Լ. Տեր-Պետրոսյանի մոտ՝ ճշտելու, թե նա ինչ հարցեր է նպատակահարմար համարում Գորբաչովի առաջ բարձրացնելու՝ վերջինիս հետ ապրիլի 30-ին իմ հանդիպման ժամանակ։ Նա ևս գտնում էր, որ տվյալ պահին գլխավորն այն է, որ Գորբաչովը հետ քննարկվի ստեղծված իրավիճակը։ Սակայն Գորբաչովի գրասենյակից հայտնում են, որ պրեզիդենտը ինձ կարող է ընդունել միայն մայիսյան տոներից հետո։ Հաջողություն չեն ունենում նրա հետ հեռախոսային խոսակցություն ունենալու ջանքերը։ Հարկադրված ծածկագիր եմ ուղարկում նրան. «Կենտրոնի կողմից ծրագրված ռազմական և վարչական միջոցառումները կարող են հանգեցնել հայ-ադրբեջանական ազգամիջյան պատերազմի, որի հետևանքները դժվար չէ կռահել։ Ուստի խնդրում եմ Ձեր կարգադրությունը՝ այդ միջոցառումները կասեցնելու, Մոսկվա հրավիրել Տեր-Պետրոսյանին ու Մութալիբովին, զոբծնական քայլերի դիմել արյունահեղությունը կանխելու համար»։ Նույն օրը երեկոյան Գորբաչովի ընդունարան է զանգահարում «Զրի Բալայանը։ Նրան պատասխանում են. «Ձեր կոմկուսի կենտկոմի քարտուղարը ամբողջ օրը մեզ հետ կապի մեջ է եղել, ստացվել է նաև նրա ծածկագիրը։ Նրա առաջարկները հավանության են արժանացել։ Օրերս երկու հանրապետությունների ղեկավարները կհրավիրվեն Մոսկվա։ Պրեզիդենտը հանձնարարել է Կրյուչկովին՝ մինչև մայիսյան տոների ավարտը ԼՂԻՄ-ում որևէ գործողություն թույլ չտալ»։ Երեկոյան Զորին հրճվանքի մեջ էր, իսկ առավոտյան զանգ տվեց, թե՝ գիշերը Գետաշենը զանգվածային ռմբակոծությունների է ենթարկվել և զոհվածների թիվը հասնում է 30-ի։ Ահա պրեզիդենտական խոսքի ուժն ու անաղարտությունը։

Ես դժվարանում եմ կռահել պալատական այս խաղի նպատակադրումը։ Նորից հարց է առաջանում, Գորբաչո՞վ, թե Կրյուչկով։ Որ Գորբաչովը Ղարաբաղում քայլերի չդիմելու մասին հանձնարարություն տվել է, ինձ ասացին նաև նրա գրասենյակում։ Միայն պարզ չէր այդ հանձնարարու-

թյան անկեղծությունը։ Ինչ վերաբերվում է Կրյուչկովին, ապա ամենայն հավանականությամբ նա էր շրջանցել պրեզիդենտի հանձնարարությունը։ Ինչո՞ւ։ Հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ պրեզիդենտական հեղաշրջման նախաձեռնողներն Ադրբեջանը համարում էին իրենց հենակետերից մեկը (ինչը չէր կարելի ասել Հայաստանի մասին) և հասկանալի էր նրանց պարագլուխների (տվյալ դեպքում նկատի ունեմ Կրյուչկովին, Յազովին ու Պուգոյին) հակվածությունն ընդառաջելու ոչ թե Հայաստանին, այլ՝ Ադրբեջանին։ Դա է վկայում նաև այն, որ Գորբաչովը, համենայն դեպս, ընդունեց Լ. Տեր-Պետրոսյանին (եթե չեմ սխալվում մայիսի 2-ին)։

Այդ հանդիպումը վերացնում էր իմ Մոսկվա գնալու հրատապությունը, բայց, այնուամենայնիվ, գնացի. Գորբաչովին ասելիք ունեի։ Մոսկվան սակայն հրաշքների ու աճպարարությունների քաղաք է։ Կենտրոնական հեռուստատեսությունով Լ. Տեր-Պետրոսյանի տված ինտերվյուից հասկացվում էր, որ ինքը Ղարաբաղում տվյալ պահի իրադրության շուրջ պրեզիդենտի հետ ընդհանուր հայտարարի եկել է։ Մինչդեռ այդ հանդիպումից հետո էլ մոտ երկու շաբաթ Արցախում շարունակվում էին արյունալի իրադարձությունները։ Ինձ էլ ասացին, որ իզուր եմ եկել Մոսկվա, քանի որ պրեզիդենտը կընդունի միայն ամսի 8-ից հետո։

Չեմ թաքցնում, այս ամենը մեջս կասկածներ առաջացրին։ Ընդունենք, որ ապրիլի 30-ի արյունահեղության հեղինակը Կրյուչկովն էր, ապա մայիսի 2—14-ի գործողություններ՞ն ում թույլտվությամբ էին կատարվում։ Չէ՞ որ երկու պրեզիդենտները համաձայնության էին եկել։ Գորբաչովը նորից էր աճպարարությամբ զբաղվում, թե Ղարաբաղի ու Շահումյանի շրջանի հայաթափումը մտնում էր նրա ծրագրերի մեջ։ Դժվարանում եմ այս հարցին պատասխանել։ Մի անակնկալ ևս։ Մայիսի 4-ին առավոտյան Երևանի Համալսարանի ամբիոնի վարիչ Յու. Մկրտումյանը և ես ԽՄԿԿ կենտկոմի անդրկովկասյան հանրապետությունների ենթաբաժնի վարիչի աշխատասենյակում էինք, երբ հեռախոսը զանգահարեց։ Եվ ի՞նչ։ ԽՍՀՄ ներքին գործերի նախարարությունից

էր. Գորբաչովը հանձնարարել է ետ վերցնել ՀԿԿ կենտկոմի, նրա քաղլուստան և բոլոր այն շենքերը, որ ՀԿԿ կենտկոմը անհրաժշտ կգտնի հանրապետության կուսակցական կազմակերպության աշխատանքների համար։ Իրոք, մայիսի 1-ին Հայաստանի իշխանությունները կոմկուսի ապարատների աշխատողներին «մեծագույն քաղաքավարությամբ» իրենց աշխատատեղերից դուրս հրավիրեցին և նրանք բոլորը հայտնվեցին բաց երկնքի տակ։ Նույնիսկ նման պայմաններում, Մոսկվայի առաջարկին ընդառաջ գնալը անթույլատրելի էր։ Մենք վճռականապես մերժեցինք այդ քայլի հնարավորությունը։

Սակայն այդ հրամանն ինձ ոչ միայն խորապես անհանգստացրեց, այլև հարկադրեց հանգելու որոշակի եզրակացության։ Հայաստան զորք մտցնելու Յանաևի առաջարկությունը, ՀԿԿ շենքերը զինվորական պաշտպանության տակ վերցնելու Գորբաչովի հանձնարարության համար բացատրություն գտնելը դժվար չէր։ Այդ ԽՄԿԿ կենտկոմն էր պետական իշխանությունների վրա ճնշում գործադրում, որպեսզի նրանք ապահովեն կուսակցական ունեցվածքի անձեռնամխելիությունը։ Իսկ դա անելու համար այլ միջոց չէին տեսնում, բացի զինված ուժից։ Ռուսական արքունիքում դարերով մշակված հոգեբանություն է։ Տեղերում եթե չեն լսում, ուրեմն գործի պիտի դրվեն ոստիկանությունը, ժանդարմերիան, կոզակները, բանակը, օմոնը։ Կենտկոմում ատամներ էին կրճտացնում, ականջիդ շշնջում և նույնիսկ բարձրաձայն ասում, որ կործանվող կուսակցությունը կարող է փրկվել միայն զենքի ուժով։ Սա չափազանցություն չէ, այլ, կրկնում եմ, մտածողության որոշակի համակարգի դրսևորում։ Սակայն, երբ հարց է դրվում ռազմական ուժ օգտագործելու միջոցով ետ գրավելու արդեն հանրապետության Գերագույն Խորհրդին պատկանող և որոշ առումով ժողովրդի պետական անկախությունը խորհրդանշող շենքը, այդ դեպքում կուսակցության շահերի պաշտպանությունը միայն մխածածկույթ է ,իսկ բուն նպատակը բոլորովին այլ։ Հետևաբար բացառված չէր, որ ոտնձգության նման մտադրությունները կարող էին կրկնվել և ՀԿ-ն, ընկած երկու սալի արանքը, իր կամքից անկախ կարող էր տեսականորեն պատրվակ դառնալ

Կենտրոնի նպատակադրումների ու նկրտումների համար՝ շատ հաճախ ենթակա տեղական իշխանությունների անարդարացի հարվածներին։ Այս առումով հարկ է նշել նաև, որ Մոսկվան նման դեպքերում ընդդիմադիր ուժերին գործն այնպես էր ներկայացնում, թե իբր ինքը որևէ ցանկություն չունին միջամտելու հանրապետությունների կոմկուսների և իշխանությունների հարաբերություններին, սակայն հարկադրված է բարոյական պարտք կատարել՝ օգնել կոմկուսներին։

Հայաստանի կոմկուսի անդամների և աշխատողների հիմնական մասը ճիշտ էր ընկալում ՀԿԿ կենտկոմի ղեկավարության վարքագիծը, բայց նաև լսվում էին ուրտունջներ ու նախատինքի խոսքեր, նա մեղադրվում էր վախկոտության, քաղաքական հստակ գիծ չունենալու և պասիվության մեջ։ Ճիշտ է, դրսի միջամտությանը դիմելու կոչեր չէին հնչում, բայց առանձին անձինք գտնում էին, որ պետք է չեզոք դիրք գրավել և այլն և այլն։ Որոշակի լարում առաջացավ նաև հանրապետության ղեկավարության հետ հարաբերություններում։ Շարունակական հարվածներ էին հասցվում, որպեսզի կոմկուսը այլևս գոյատևել չկարողանար։ Դա իհարկե կազմալուծում էր նրա աշխատանքը, հիվանդագին երևույթներ ծնում կուսակցության ներսում ու մարդկանց տրամադրություններում։ Ուժերը բևեռանում էին։ Մի կողմում՝ միանգամայն նոր մոտեցումներն, իսկ մյուսում՝ մարտնչող պահպանողականությունն ու արդեն իրենց դարն ապրած սկզբունքների վերակենդանացման նոստալգեան էր։ Կուսակցությունը պահանջ ուներ հիմնարար վերակառուցման, նոր, թարմ մտածողության, այսինքն նոր, թարմ ուժերի։ Հետևաբար, անհրաժեշտ էր հրապարակը տրամադրել այդ ուժերին։

Ո՞վ գիտե, գուցե նրանց հաջողվեր ձևավորել հասարակական-քաղաքական մտածողության ու գործունեության նոր որակ, ժամանակի շնչին դիմացող ու նրան համաքայլ նոր կազմակերպություն։

Սակայն իրադարձությունների զարգացումը գնաց այլ ուղղությամբ։ Մոսկովյան գործելակերպը նորից գերիշխող հանդիսացավ։ Եթե Ռուսաստանում կոմկուս չի լինելու, ինչո՞ւ այն լինի Հայաստանում, հետո ինչ, թե Հայաստանն արդեն ան-

կախ է։ Նորից «հեղափոխական արմատականություն» և ոչ թե ժողովրդի, պետականության շահերից բխող գործնական մոտեցումներ։

Չեմ կարող չարտահայտել իմ կարծիքը Հայաստանի կոմկուսի հարկադիր ինքնալուծարման մասին։ Ուզում եմ լինել անաչառ։ Այդ իրավունքն ունեմ, որովհետև կուսակցական աշխատանքի եղել եմ ընդամենը չորս տարի, որից վերջին մեկ տարին՝ հանգամանքների բերումով, հոսանքին չընդդիմանալու թուլության հետևանքով։

Իմ համոզմամբ Հայաստանի կոմկուսի պատմությունը կարելի է բաժանել երեք շրջանների, որոնք խիստ համառոտակի բնութագրվում են հետևյալ կերպ։

Առաջին. մինչև 1937—1938 թթ.։ Այս շրջանը տվել է այնպիսի նշանավոր ազգային դեմքեր, ինչպիսիք են Ա. Մյասնիկյանը, Ս. Լուկաշինը, Ա. Խանջյանը և ուրիշներ, որոնք վիթխարի գործ կատարեցին ազգահավաքման ու ազգային մշակույթի զարգացման գործում։ Եվ, այնուամենայնիվ, ՀԿԿ-ն, ի՞նչ մեղքով, թե վերևից եկած ճնշման հետևանքով, ավերիչ դեր խաղաց Հայկական հարցի, Հայաստանի տարածքների միավորման, ազգային քաղաքականության իրականացման, հայության ազգային համախմբման գործում։ Էլ չեմ ասում բռնություններին, զանգվածային ահաբեկչություններին, ժողովրդի ոգու կործանմանը նրա մասնակցության մասին։

Երկրորդ. մինչև 1964—1965 թթ.։ ՀԿԿ-ն լուրջ քայլեր կատարեց նախկին սխալներից ձերբազատվելու և դառնալու իր ժողովրդի շահերի իսկական արտահայտիչը։ Ամեն ինչ չէ, որ այդ բնագավառում հաջողվեց, բայց դա արդեն ոչ թե նրա մեղքն էր՝ այլ դժբախտությունը։ Մի բան սակայն ակնհայտ էր՝ կոմկուսը դառնում էր ազգային կուսակցություն։

Երրորդ. մինչև 1991 թվականը։ Շարունակվում էր կոմկուսի ազգային կուսացություն դառնալու գործընթացը և նա այդպիսին դարձավ։ Սակայն նախորդ շրջանից փոխանցվում ու նոր պայմաններում զարգանալու և լայն տարածում ստանալու հող են գտնում կուսակցության համար գերեզմա-

նափորի դեր խաղացող այնպիսի երևույթներ, ինչպիսիք են դաշտոնամոլությունը, կաշառակերությունը, հովանավորչականությունը, պետական ունեցվածքի հափշտակությունը, հարստություն կուտակելու և ուռճացած կյանքի ձգտումը և այլն և այլն։

Ոչ թե կոմկուսի ազգային դիմագծի աղջատվածությունը, այլ վերը նշված երևույթները դարձան նրա կործանման պատճառը։

Սակայն նաև ակնհայտ է, որ այդ երևույթները բնորոշ են կառավարող կուսակցություններին։ Մենք այսօր ականատես ենք, թե ինչպես մի շարք տղաներ, որոնք մեկ-երկու տարի առաջ ազնվության ու արդարության մասին ճառերով կոկորդ էին պատռում, պաշտոններ ստանալով՝ թալանի, կաշառակերության մեջ իրենց «կոմունիստ նախնիների» գլուխը «լվացրել», նրանց ետևում են թողել։

Դադարելով կառավարող կուսակցություն լինելուց, կոմկուսը շատ արագ կմաքրվեր քրեական հոգեբանություն ունեցող տարրերից։ Ցավալի է, բայց փաստ է, որ կառավարման ներկայիս կառուցվածքներում տեղեր ստանալու գործում ոչ քիչ դեպքերում հաջողակ են գտնվում վերը նշված տարրերը, քան ազնիվ ու պարկեշտ «նախկին կոմունիստները»։

Իսկ քաղաքականության հիմնահարցերի խնդիրներում Հայաստանի կոմկուսի դիրքորոշումները վեր էին նեղ կուսակցական շահախնդրությունից, ելնում էին համազգային շահերից. դրա համար էլ դրանք դառնալու են, և արդեն դառնում են, տեսակետը բոլոր այն ուժերի, որոնք իշխանության գլուխ են այսօր և կգան վաղը։

Հիշում եմ, իմ զեկուցումներից մեկում ասել էի, որ ՀԿԿ-ն ունեցել է և այսուհետև կունենա ռուսական կողմնորոշում։ Մի քանի օր անց խորհրդարանի ամբիոնից պատգամավորներից մեկը ինձ անվանեց «ազգի դավաճան»։ Հետաքրքիր է, թե այսօր ինչպես են մտածում ոչ միայն այդ պատգամավորն, այլև «երրորդ ուժի բացառման» ասպետները և նրանք, ովքեր պնդում էին, թե մեր օրերում պանթուրքիզմը քաղաքական գործոն չէ։

Էլ չեմ ասում այն անձանց «պարկեշտության» մասին, ովքեր երեկ Նաիրիտը, ատոմակայանը, Ալավերդու պղնձա-

քիմիական կոմբինատը փակելու դեմ արտահայտվողներին ուզում էին Լինչի դատաստանի ենթարկել, իսկ այսօր դրանք աշխատեցնելու օգտին են քվեարկում։ Խոսքս հարցի էությանը չի վերաբերում, այլ նման անձանց բարոյականությանը։ Եվ ընդհանրապես, բարոյականությանը, որն այսօր անհամեմատ ավելի է արժեքազրկվել, քան ռուբլին։

Առնվազն տարօրինակ են հնչում քաղաքական որոշ ուժերի և գործիչների փքուն խոսքերը. թե իրենք մեր ազգային կյանքում «նոր, թարմ» և ամենակարևորը «ինքնուրույն» մոտեցումներ ու նպատակադրումներ են բերել։ Տարբեր կուսակցությունների այդ «վաստակների» հանդիպումները հակում ունեն դառնալու համազգային աղետ։ Այս կապակցությամբ տեղին է հիշեցնել Հրայր Դժոխքի հետևյալ խոսքերը. «Եղբայրներ, ի՞նչ ունեք բաժանելու... Փա՞ռք... Թողեք, դա Տամատյանների և Մուրադների, Վարդանների և Մարգարների, Զավարյանների և Լևոնների, նաև Արաբոների սեփականությունն է...

Ի՞նչ ունեք, ի՞նչ... Ո՞րն է այն գաղափարը, որ Ձեզ միմյանցից բաժանում է, ո՞ր կետում է ձեր հասկացողությունների միջև եղած տարբերությունը, որ դուք ձեր ողորմելի ուժերը միավորելու փոխարեն, դրանք ջլատում եք և ձեր պաշտպանությանը հանձնված թշվառ ժողովրդի տունը հիմնահատակ կործանում եք...

Ամոթ է, հանցա՞նք է...»։

* * *

Այս նոթերը գրելու օրերից անցել է շուրջ յոթ ամիս։ Դժբախտաբար ժամանակն արդարացրեց վերևում նշված մտավախությունները։

Զևական անկախության փրկագինը հանդիսացան տնտեսական քայքայումը, համազգային թշվառությունը և ոչ միայն սովի վտանգն, այլև ինքը՝ սովը։ Հայաստանցին այսօր նման է ծառի ճյուղին դողդողացող հիվանդ թռչունի։ Իր ոչ թե սոցիալական, այլ նույնիսկ կենսաբանական գոյությունը փրկելու համար նա ժամանակի մեծ մասը անց է կացնում հացի ու տրանսպորտի հերթերում։

Ժողովրդավարություն հաստատելու վերաբերյալ ամպագորգոռ հայտարարությունների վարձագինը ևս փոքր չէ։ Անսանձ կամայականություններ, վարչական օրգաններին զուգահեռ ավազակային խմբերի կառույցներ, որոնք անամոթաբար անվանվում են ֆիդայական խմբեր։ Մինչդեռ Հայաստանում կատարվող հանցագործությունների նշանակալից մասի հեղինակն այս խմբերն են։ Աշխարհում եղել է կամ կա՞ մի այլ երկիր, որտեղ իշխանությունները քաղաքացիների հետ առնչվեն ավազակաբարո տարրերի միջոցով։ Սպառնալիքներ, ահաբեկում, ու նաև, համապատասխան գործողություններ։ Իսկ Արցախում երիտասարդ մարտիկների ինչպիսի մեծ պահանջ կա։

Մեր հասարակությունը երբեք այնքան երկփեղկված չի եղել, որքան այժմ։ Տպավորություն է ստեղծվում, որ իշխանությունները, մի կողմից, ձգտում են հասարակության ընդհանուր թշվառությանը, որպեսզի մարդիկ ժամանակ ու ցանկություն չունենան քաղաքականությունով զբաղվելու, իսկ

մյուս կողմից, խորացվում է առճակատումը քաղաքական կուսակցությունների հետ՝ միտում ունենալով քաղաքական մթնոլորտը վերահաս՝ փոթորկի սպառնալիքի տակ պահել։

Ազգային դրոշը հավատարմությամբ առաջ տանելու խոստումներով իշխանության հասնելուց հետո, Հայաստանի շահերի հետևողական ենթարկում դիվանագիտական խաղերին ու կոնյուկտոր նկատառումներին։

Ժողովրդական լայն զանգվածների ինքնամոռաց աջակցության շնորհիվ բարձրացածների կայծակնային գունափոխվելը ճիշտ արտացոլումն է Հայաստանում տիրող ճահճային ու մերկանտիլ հոգեբանության։

Հայը հարստանալ է ուզում, հարստանալ է ուզում ցանկացած գնով։ Նրա այդ ձգտումը խոչընդոտող ամեն ինչ, այդ թվում նաև մարդկայնությունն ու բարոյական նորմերը, լաթի նման դեն են նետվում։

Ձևավորվում է նոր բարոյականություն, որի կրողները լինելով մարդակերպ էակներ, իրականում դրսևորում են անասնական բնազդներ ու գիշատիչ անհագություն։